

# ԹԵԼԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՋԵՌՆԱՐԿ


ՄԻՋՆԱԿԱՐԳՑ ԹԵՎ, ՎՈՉ ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ

ԿՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կազմեց՝ ԱՎ. ՃՈՒՂՈՒԲՅԱՆ



ԳԵՏՍՎԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1989









ՀՆՄ.Կ  
2240

491.99 (077)  
Ճ-97

4 MAY 2010


# ԹԵԼԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿ

ՄԻՋՆԱԿԱՐԳ ՅԵՎ ՎՈՉ ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ

ԳՊՐՈՅՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հայկական ԽՍՀ Լուսավորչության.

Կազմեց՝ Ա.Վ. ՃՈՒՂՈՒՐՅԱՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1939



19 JUN 2013

Пособие диктантов  
для неполной средней  
и полной средней школы

Составил—Ав. Чугурян.

Гиз. Арм. ССР, Ереван, 1939



56564-66

ՅԵՐԿՈՒ ԽՈՍԲ

Թելադրությունների սույն ձեռնարկը կազմված է հատկապես միջնակարգ և վոչ լրիվ միջնակարգ դպրոցների 5—7 դասարանների համար:

Ձեռնարկում ամփոփված են միջնակարգ և վոչ լրիվ միջնակարգ դպրոցների քերականության դասադրքերի (Ա. Ղարիբյան «Ձևաբանություն» և Գ. Սևակ «Շարահյուսություն») համարյա բոլոր ուղղագրական և կետադրական կանոնները, և նրանց սխառմատիկ դասավորությանը համընթաց թելադրության համար տրված են համապատասխան բառեր, նախադասություններ, պարբերություններ ու հատվածներ: Ձեռնարկի վերջում տրված են մի շարք ամբողջական նյութեր ստուգողական թելադրությունների համար և շուրջ 900 ուղղագրորեն դժվար գրվող հատընտիր բառեր:

Ձեռնարկն ոգտագործող դասաւուսները պետք է նկատի ունենան հետևյալը:

Դասատուն քերականական կանոնն անցնելիս պարզաբանում է համապատասխան ուղղագրական կանոնը և այն ամրացնելու համար թելադրում է առանձին բառեր, և ապա «Վարժություններ» վերնագրի տակ յեղած նախադասություններն ու պարբերությունները:

Կանոնի յուրացումն ստուգելու համար հետագայում թելադրվում են «Թելադրության նյութեր», ինչպես և «Նյութեր ստուգողական թելադրությունների համար» վերնագրերի տակ յեղած հոգվածները:

Անհրաժեշտ է կանոնավոր հիմքերի վրա դնել աշակերտների գրավոր աշխատանքների ուղղումը՝ ցուցաբերելով յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ անհատական մոտեցում: Վորպես կանոն, կատարած սխալի վրա պետք է գիծ քաշվի, տակն ընդգծվի և վրան ճիշտը գրվի: Կատարած ամեն մի սխալ աշակերտը պետք է ուղիղ ձևով արտագրի միջանի անգամ:

Այս աշխատությունը չպետք է սահմանափակի ուսուցչի ինքնուրույն աշխատանքը՝ անցած ուղղագրական կանոնի վերաբերյալ համապատասխան տեքստեր, նախադասություններ, բառեր գտնելու և թելադրելու գործում:

ԿԱԶՄՈՂ



1. «Ը» ԶԱՅՆԱՎՈՐԸ ԲԱՌԱՎԵՐՋՈՒՄ

ա) Բառավերջում և ձայնավորը վարպես վարժիչ հոդ դրվում է, յերբ արտասանվում է.

Որինակ՝	
Հուսիկը,	կոշկակիվը,
Գրիգորը,	պիտները,
Կիմիկը,	գպրոցը,
Հենինգրադը,	գիրքը,
Յերեվանը,	սեղանը,
Հենինսկանը,	դասարանը և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հուսիկը գերազանցիկ սովորող է:
2. Գրիգորը լավ ֆիզիկուլտուրնիկ է:
3. Յերեանը Սորհրդային Հայաստանի մայրաքաղաքն է:
4. Կիմիկի զբքերը և տետրակները շատ մաքուր են պահված:
5. Հենինսկանը Սորհրդային Հայաստանի արդյունաբերական քաղաքներից է:

6. Բանվորները, կոլտնտեսականները և վոդյ աշխատավորութունը խանդավառությամբ բաժանորդագրվեցին յերկրի պաշտպանության փոխառությանը:

7. Սորհրդային Միության հերոսներ՝ Չկալովը, Բայդուկովը և Բելյակովը հյուսիսային բևեռի վրայով անվայրելի թռիչք կատարեցին Մոսկվայից Հյուսիսային Ամերիկա:

8. Աշխատանքը փառքի, պատվի և հերոսության գործ է:

բ) Բառավերջի և ձայնավորը հանախ փոխվում է 6 բաղաձայնի, յերբ հաջորդ բառն սկսվում է ձայնավորով կամ սկ, սպ, սս, սք, սֆ, սց, սպ, սկ, սք, սգ կապակցություներով\*.

- |  |  |
|--|--|
| Որինակ՝  |  |
| 1. Գարիկը սովորում է: Գարիկն ավարտեց:                  |  |
| 2. Պարապմունքները վերջացան: Պարապմունքներն սկսվեցին:   |  |
| 3. Ծառը ծաղկեց: Ծառն աճում է:                          |  |
| 4. Պիտները կարգում է: Պիտներն ընթերցում է:             |  |
| 5. Բանվորները հանգստանում են: Բանվորներն զբոսնում են:  |  |
| 6. Աշակերտը գնում է: Աշակերտն արտասանում է:            |  |
| 7. Կոլտնտեսականը սովորում է: Կոլտնտեսականն աշխատում է: |  |

\* Այս կանոնն ալելի բարենշյունության արժեք ունի, քան ուղղագրական:

I ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՏՈՂԱԴԱՐՁԻ ԺԱՄԱՆԱԿ

ա) Յերբ յերկու ձայնավորների միջև կա միայն մի բաղաձայն, տղադարձի ժամանակ այդ բաղաձայնն անցնում է հաջորդ տղը:

Որինակ՝	Մա-րո,	Մա-րո,
	բա-րի,	տա-րի,
	խա-րալ,	ա-րի,
	զա-րի,	Մա-նիկ,
	դա-սարան	դասա-րան,
	լու-սամուտ,	լուսա-մուտ,
	ա-տակերտ,	աշա-կերտ:
	ու-տուցիչ,	ուսու-ցիչ և այլն:

բ) Յերբ յերկու ձայնավորների միջև մեկից ավելի բաղաձայններ կան, տղադարձի ժամանակ հաջորդ տղն է անցնում միայն վերջին բաղաձայնը.

Որինակ՝	Ար-միկ,	արթ-հանալ,
	Սար-գիս,	գարթ-նիկ,
	Պար-գեվ,	բարձ-ություն և այլն:

գ) Տղադարձի ժամանակ լավոր, բայց չգրվող և ձայնավորը գրվում է մնացող վանկերից վերջինի և հաջորդ տղն անցնող վանկերից առաջինի մեջ.

Որինակ՝	Ներ-գըրավել,	Ներգը-րավել,
	մար-տընչել,	մարտը-նչել,
	մըկ-բատ,	կըր-կին,
	Մը-կըրտիչ,	Մկըր-տիչ և այլն:

դ) Տղադարձի ժամանակ և ձայնավորը կտրոջ է չգրվել, յերբ բառի հաջորդ տղն անցնող մասն ամբողջական բառ է.

Որինակ՝	Կոլ-սեսեսուրյուն,	աշխարհա-գրություն,
	ան-վնաս,	ան-զգույս և այլն:



Կարմիրները հաղթեցին: Կարմիրներն առաջ անցան:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ստալինյան Սահմանադրութիւնն աշխարհի ամենագեղեցիկ-ըատիկ Սահմանադրութիւնն է:
2. Կարմիր բանակն ամենահզօր բանակն է ամբողջ աշխարհում:
3. Խորհրդային Միութեան հերոս ողաչուններն ազատեցին չեղյալակիւնյաններին:
4. Կոլտնտեսութիւնն ավարտեց բերքահավաքը:
5. Բանվորներն զբոսնում են գործարանի բակի պարտեզում:

2. Ը ՁԱՅՆԱՎՈՐԸ ԲԱՌԱՍԿՋԲՈՒՄ

ա) Բառակցում և ձայնավորը գրվում է, յերբ արտասանվում է՝ Ուրիւակ՝

ընդունել,	ընկեր,
ընդարձակ,	ընկույզ,
ընդգծել,	ընկնել,
ընդամենը,	ընկուղենի,
ընդունակ,	ըստամինայի,
ընդմիջտ,	ընդհանուր և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նոր Սահմանադրութեամբ հաստատվեց ընդհանուր, հավասար ուղղակի և զազանի ընտրութիւնների սիստեմ:
2. Կուսակցութեան և կառավարութեան ղեկավարներն ընդունեցին հարվածային կոլտնտեսականներին:
3. «Ընձենավորը» վրացական մեծանուն բանաստեղծ Շոթա Ռոսթոմաշվիլու անմահ յերկն է:
4. Լայն ու ընդարձակ է մեր սոցիալիստական հայրենիքը:
5. Աշտուր, Զաֆարը, Վալդեյան ու Կիման ընկերներն են:
6. Ընթերցանութիւնը զարգացնում է մարդու միտքը և ընդլայնում է նրա աշխարհայացքը:
7. Մեր ընտանիքի անդամները բոլորն էլ զբաղեա են:
8. Մեր դպրոցի զբաղարան-ընթերցարանը հարուստ է բազմապիսի գրքերով:

բ) Բառակցում սկ, սպ, սբ, սթ, սժ, սզ, սգ, սդ, սլ կապակցութիւններից առաջ քեկ արտասանվում է բույլ ք, բայց չի գրվում (բա-

ցառուքում են կազմւում ըստ նախդիրք և նրանով բարդված բառերու իմակ՝ ըստ ինի, որ ըստ և այլն):

Ուրիւակ՝

սկիզբ,	սկսել,
սկեսուր,	սկզբունք,
սամոքթ,	ստուգել,
սսույգ,	Ստեփանավան,
սսեղծել,	սսանալ,
Սպանդար,	սպիտակ,
Սպարտակ,	սպասել,
սփոփանք,	սփանչանալ,
սքափվել,	սփողել,
զգույշ,	զգոն,
զգայարան,	զգեստ,
զգալ,	զբաղմունք,
զբոսարան,	զբոսանք,
ժապ,	ժեմարան,
ժպար,	ժպարել և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ղուկաս Ղուկասյանը Հայաստանի «Սպարտակ» կադմակերպութեան հիմնադիրներից եր ու նրա ղեկավարը:
2. Ուսուցիչների հանգստյան տունը գտնվում է Ստեփանավանում:
3. Որվա մեջ առնվազն յերկու ժամ յեռ զբաղվում եմ ընթերցանութեամբ:
4. Կոլտնտեսութեան շտեմարանները լիքն են ցորենով և այլ մթերքներով:
5. Ուսումնական տարվա յուրաքանչյուր քառորդում ոտուզում ենք մեր սոցմրցման պայմանագրերը:
6. Կարմիրները ջախջախեցին սպիտակներին:
7. Խորհրդային յերկրում առաջ գնալու և զարգանալու համար ստեղծված են բոլոր հնարավորութիւնները:
8. Պետք է միշտ բարձր պահել դասակարգային յգգառութիւնն ու զգոնութիւնը:

3. Ը ՁԱՅՆԱՎՈՐԸ ԲԱՌԱՍՄԻՋՈՒՄ

ա) Ը ձայնավորը գրվում է նախածանցավոր և բարդ բառերի մեջ, յերբ յերկրորդ բաղադրիչ բառն առանձին վերցրած՝ սկսվում է Ը ձայնավորով (տես բարդ բառերի ուղղագրութիւնը):



Որինակ՝

Ընթաց—աննախընթաց, համընթաց, արընթաց, զուգընթաց,

ձեպընթաց, նախընթաց, դասընթաց:

Ըմբռնել—անըմբռնելի, գյուրըմբռնելի, չըմբռնել:

Ընկեր—խոչընդոտ, մեջընդմեջ, անընդմեջ:

Ըսեց—զասընկեր, խաղընկեր:

Ըսեց—որըստորե, ինքնըստինքյան:

Ընթիւր—հատընտիր, ամենաընտիր:

Ընկնել—չընկնել, համընկնել:

Ընդունել—չընդունել, անընդունելի:

Ընդհատել—անընդհատ, չընդհատել:

Ընկնվել—չընկնվել, անընկնելի:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գարնան արեկա որ եր. ողը վիտվետում եր արձակ դաշտերում և գյուղի կուռընների վրա. զգացվում եր ծաղկող ծառերի և նոր կանաչի հոտ. հավերն աչքերը խուփ տաքանում եյին արեգընդդեմ պատերի տակ. փողոցների յեղերքին և ցանկապատերի արանքում աճում եր յեղինջը:

(Ստ. Զորյան — «Ճանկապատ»)

2. Անընկճելի յե իսպանական հերոս ժողովրդի կամքն ու ազատության զգացումը:

3. Սրընթաց պախրամ, թե դալլ գիշատիչ  
Շեշտակի անցավ փարախի մոտով,  
Այծյամը հանկարծ մոտակա ժայռից  
Անդունողը մի քար գլորեց վտով,  
Գիշերվան հովից տերեվն եր դողում,  
Յերկչոտ մուկիկը վազեց պուճախում,  
Թե՛ վոչխարների թուլլ մնչոցն եր այն,—  
Սաքոյին թվաց, թե մի վոտնաձայն  
Յեկավ ու կանգնեց փարախի վրա,  
Կանգնեց ու լուեց...

(Հ. Թումանյան—«Լուսեցի Մաքոն»)

4. Մոսկվայից Լենինգրադ և Լենինգրադից Մոսկվա ժամը մեկ գնում են ձեպընթաց գնացքները:

5. Լեոնային գետակները արընթաց են լինում:

6. Սորհրդային Հայաստանը աննախընթաց նվաճումներ և ձեռք բերել:

7. Հայդարն ու Վարդուշը խաղընկերներ են:

8. Որըստորե մեք ձեռք ենք բերում նորանոր հաջողություններ:

9. Մեր գասագրքում տրված են հատընտիր հոգվածներ մեր լավագույն գրողների գրվածքներից:

10. Պետք է վերացնել ու վոչնչացնել մեր հաղթական առաջընթացի առաջ կանգնած բոլոր խոչընդոտներն ու արգելքները:

11. Մեր քաղաքում մի շարք գործարաններ ու հիմնարկներ աշխատում են անընդհատ շաքաթով:

բ) Ե ձայնավորը գրվում է տողադարձի ժամանակ մնացող վանկերից վերջինի և հաջորդ տողի անցնող վանկերից առաջինի մեջ (տես ուղղագրությունը տողադարձի ժամանակ):

Որինակ՝

Մը-կըբտիչ,	Մկըբ-տիչ.
գըն-գակ,	գըլ-խարկ,
բար-ձըբ,	կար-ձըբ,
պըբ-պը-տել,	պրպը-տել,
սը-բըսկել,	սըբ-կել,
ըս-տըրկություն,	ստըբ-կություն,
ըս-տացական,	ստացա-կան և այլն:

գ) Տողադարձի ժամանակ Ե ձայնավորը կարող է չգրվել, յեթե բառի հաջորդ տողի անցնող մասն ամբողջակամբառ է (տես ուղղագրությունը տողադարձի ժամանակ):

Որինակ՝

Բառ-գրեույկ	մարդա-սրահ,
շահա-խնդիր,	խմբա-գրել,
ան-սոււյգ,	ան-վրդով,
Անդր-կովկաս,	Անդր-կասպյան և այլն:

դ) Մնացած բոլոր դեպքերում բառամիջում լսվող Ե ձայնավորը չի գրվում.

Որինակ՝

Գաղցր,	բարձր,	մկրատ,
փրփրադեղ,	փրփուր,	մսերիմ,
գլուխ,	գլխաբաց,	մսածել,
կայարտ,	Մկրտիչ,	Մնացական և այլն:



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Միշտ բնորձը կենինյան անպարտելի դրոշը:
2. Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք:
3. Թշնամին յերբ չի հանձնվում, նրան վոչնչացնում են:
4. Նոր Սահմանադրությամբ Խորհրդային Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը, Կիրգիզիստանը և Ղազախստանը միութենական հանրապետություններ դարձան:
5. Հազար ինը հարյուր յերեսուն յոթ թվի հունիսին ավարտվեց Մոսկվա-Վոլգա հոյակապ ջրանցքի կառուցումը:
6. Նոր Սահմանադրությունը հանդիսանում է գրանցումն ու որենտորական ամրապնդումն այն բանի, ինչ վոր արգեն ձեռք է բերված ու նվաճված իրականում:

ԹԵԼԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1. ԹԵ ԻՆՉ ՅԵՂԱՎ, ՀԵՏՈ, ՅԵՐԲ ԾԱՔԱՐԱՄԱՆԻՅ ՅԵՐԿՈՒ ԿՏՈՐ

ԾԱՔԱՐ ՊԱԿԱՍԵՅ

(Հատված)

Մի ընդարձակ ամառի բակում հետին կողմը կանգնած էր դրոշապան Յագորի հնորյա տնակը՝ բաղկացած ընդամենը մի մեծ սենյակից, վորի դուռը բացվում էր ուղղակի դեպի բակը: Բակի մի կողքից կպած էր տախտակամած խոհանոցը, իսկ խոհանոցի կողքին մի ընդարձակ ծածկոց, վորի տակ Յագորը գլխերները կապում էր իր ծանրաշարժ դրոզի աժդահա ձին:

Չարմանալի մաքրություն էր տիրում նաև ներսը, սենյակում: Հնամաշ, տեղ-տեղ թելերը դուրս թափած կարպետը ցածրիկ թախտի վրա միշտ ավրած էր: Հողի հատակն անդադար ջրվելուց խոնավացել, պնդացել, գորշ գույն էր ստացել և այնքան մաքուր էր, վոր, ինչպես առում են, յուր թափիցի՝ կհավաքվեր: Թախտի յերկու փոքրիկ պատուհանները, ծալքի և թարեքի սպիտակ մրակալի վարագույրները և չորս հատ հնաձև աթոռների սպիտակ յերեսները փայլում էին ձյունի մաքրությամբ:

2. ՉԱՊԱՅԵՎ

(Հատված)

Բռան ըուպեյից հետո, յերբ կռիվը վերջացավ, յերբ դաշտում գետ կանգնած էր վառուղի ծուխը և լսվում էին տեղափոխվող թշնամիների ու ընկերների անընդհատ հառաչանքները, Չիշման սկսեց

ապրել առվորական կյանքով: Նկուղներից, մասաններից, խրձանոցներից ու վառարաններից, տանիքների տակից և այլ թաղափողներից դուրս յեկան հրաձգությունից վախեցած գյուղացիները և խռովեցին հողնատանջ կարմիր բանակայինների շուրջը:

Կանայք գործի անցան. շրխկացին դույլերը, թշնացին ինքնա-յեռները, զրնգացին բաժակներն ու գզալները, թափերը և այլ մասանները: Երճիթներում սկսվեց աղմուկը, պատմությունն ու խոսակցությունը: Հիշում էին, թե վերջին ժամանակվա ընթացքում ով ինչպես էր ապրում, ով ինչ տեսավ, ինչ լսեց, ինչ էլին ապառում և ինչի հառան... Յերբ կերան-կշտացան ու թեյ խմեցին, տեղ-տեղ սկսեցին աթուրմա խաղալ: Կարելի չէր կարծել, վոր այտեղ ազերքը վոչ թե կովից հետո էին հավաքվել, այլ վորևե հանդիսավոր տոնի առթիվ գրասնելու էին յեկել հեռու և մտաիկ գյուղերից...

III. ՅԵՐԿԱՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. «ՅԵ» ՅԵՐԿԱՆՉՅՈՒՆԻ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ա) ՅԵ գրվում է բուռնկազմում բոլոր այն դեպքերում, յերբ յավում է.

Ուրիմակ՝

Յերեվան,	յերգ,	յերանգ,
Յեվրոպա,	յերկիր,	յերբեմն,
Յերվանդ,	յեղբայր,	յերկու,
Յենոք,	Յեղիշ,	յերջանիկ,
Յերանուհի,	յեզակի,	յերթ և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մենության խավար զնդանից կրկին

Յե վերադարձա հզոր ու հպարտ,

Յեղ ինձ վողջունեց աղմուկը զվարթ,

Ու նոր խնդությամբ այրեց իմ հողին...

Յեկա, վոր այտեղ ձեզ համար այտոր

Հրեղեն խոսքեր կռեմ և խնդում,

Լռեմ հաղթական մարտի ցնծություն,

Տեսնեմ շարքերը ձեր հզորագոր:

Յեղ լուսարային, յերբ հողնած լինեք,

Յերբ քնած լինեք թշնամուց խաբված,

Արեվածազի ցնծությամբ արբած,

Կանչեմ ձեզ, ճշամ՝ յեղբայրներ, յերեք...

(Վ. Տերյան — Վերադարձ)



2. Յեվրոպայի արևմտյան մասում գտնվում են կապիտալիս-տական յերկրները, իսկ արևելյան մասում՝ ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասը:

3. Մենք յերջանիկ ենք, վորովհետև ապրում ենք Խորհուրդ-ների յերկրում:

4. Յերանուհին, Յերվանդը և Յենոքը զերազանցիկներ են:

բ) Բարդուքյան կամ ամանցման ժամանակ բաղաձայններից հետո յ-ով սկսվող բառի յ-ն ընկնում է (տես բարդ բառերի ուղղագրու-թյունը):

Որինակ՝

- յերկու—տասներկու, քսաներկու.
- յերանգ—բազմերանգ, յերփներանգ.
- յեզը—անեզը, ծովեզը.
- յերգ—լամբերգ, պարերգ.
- յենթարկել—չենթարկել, անենթարկել.
- յերթ—չքերթ, սգերթ.
- յեզակի—անեզական.
- յերկիր—Միջերկրական (ծով).
- յերջանիկ—ապերջանիկ.
- յեւջուր—այծեղջուր, վոսկեղջուր.
- յեղբայր—հորեղբայր, մորեղբայր:

### ՎՍՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Անեզը ու անծայրածիր և Խորհրդային մեծ հայրենիքը:
2. ԽՍՀՄ-ն աշխարհի մեկ վեցերորդ մասն է:
3. Փողոցով անցնում եր մայրամեկյան շքերթը:
4. Եմման յերփներանգ ծաղիկներից փունջ եր կազմեր:
5. Յ հորովման զոյականները յեզակի չունեն և կոչվում են անեզական:

6. Դուզանը յերևում եր դաշտի ծայրում իր կարմիր տանիք-ներով, զետեղրի ծառաստաններով: Մեր կառքն ընկած հարթ հողի վրա, զլորվում եր արագությամբ. (Փափազյան—«Զրույրո քարը»):

գ) Յերք նախադ բառը վերջանում է ձայնավորով, հաջորդ էմ, էս, է, էճ, էֆ, էճ և եր միավանկ սծանդակ բայերն ստանում են յ (տես բայերի ուղղագրությունը):

Որինակ՝

- զալու յեմ, զնալու յես, զարի յե ցանում,
- կարելի յե, ավարտելու յեճ, բերքառատ տարի յե,
- ստուգվելու յեֆ, ցանկալի յեր և այլն:

### ՎՍՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գալու յե համաշխարհային Հոկտեմբերը:
2. Դա յե մեր ցանկությունն ու իլծը:
3. Տասերորդ դասարանի աշակերտները եքսկուրսիա յեն զնալու Լենինգրադ և Մոսկվա:

### 2. «Ես» ՅԵՐԿՆՆՅՈՒՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ես յերկհնչյունը շփոթվում է յա յերկհնչյունի հետ, ուստի պիտի հիշել հետևյալ կանոնը:

ա) Ես յերկհնչ ունը զրվում է հայերեն կամ հայացված հետևյալ բառերի արմատների սեզ:

Որինակ՝

- հեքիաթ, դաստիարակ
- Մարիամ, ծիածան,
- ովհիանոս, կրիա և այլն:

### ՎՍՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Պուշկինի, Թումանյանի և Աղայանի հեքիաթները դաստիարակչական խորը նշանակություն ունեն:
2. Ո. սուցչունի Մարիամը մեր զարոցի լավագույն դաստիարակչներից է:
3. Անձրևից հետո յերկհսակամարի վրա յերևաց բազմերանգ ծիածանը:
4. Հյուսիսային ծովային ճանապարհն անցնում է Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսով զեպի Խաղաղ ովկիանոսը:

բ) Ես զրվում է ձի, թի, լի, էի, մի, գի բառարմատների և այլի կամ ի վերջավորությու մ ունեցող բառերի բարդությամ և ամանցման ժամանակ:

Որինակ՝

- |                 |                  |
|-----------------|------------------|
| ձիավոր,         | լիառատ,          |
| ձիաբշավ,        | լիաօիրտ,         |
| ձիաբուծություն, | լիաբերան,        |
| միակ,           | միայն,           |
| միաբջիջ,        | միացյալ,         |
| միատարր,        | միասնական        |
| հիանալ,         | թիակ,            |
| հիացմունք,      | թիավար,          |
| հիասքանչ        | թիավարել և այլն: |



ինչպես և՛

գյուղացի—գյուղացիական,  
քաղաքացի—քաղաքացիական,  
վորդի—վորդիական,  
արդի—արդիական:

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Ստալինյան Սահմանադրությունը աշխարհի միակ գեմոկրատական Սահմանադրությունն է:
2. Մեր կյանքը դարձել է լիառատ ու յիշանիկ:
3. Քաղաքացիական կռիվների հերոսական մարտերում կոփվեց մեր կարմիր բանակը:
4. Ցարական Ռուսաստանը հետամնաց գյուղացիական յիշկիր եր:
  - գ). Եա գրվում է ոտք լեզուներից փոխառնված բառերում. Ուրիմակ՝

պրոլետարիատ, մատերիալ,  
սոցիալիզմ, ասոցիացիա,  
ֆեդերացիա, միլիցիա,  
կոնֆերենցիա, եքսպեդիցիա,  
եքսկուրսիա, քիմիա,  
նորվեգիա, Անգլիա,  
Գերմանիա, Ֆրանսիա,  
Ճապոնիա, Ասիա,  
Ավստրալիա, Բելգիա,  
Իսպանիա, Իտալիա,  
Ֆինլանդիա, Շվեդիա և այլն:

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Մեր յերկրում սոցիալիզմն արդեն իրականություն է դարձել:
2. Քիմիական արդյունաբերությունը ԽՍՀՄ-ում աննախընթաց նվաճումներ է ձեռք բերել:
3. Ստախանովյան շարժումը սոցիալիստական մրցության բարձրագույն հասպն է:

**3. «Յա» ՅԵՐԿԿԸՉՅՈՒՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

ա) Ռուսերեն կրեատված անունների մեջ գրվում է յա:

Ուրիմակ՝

Վալոդյա, Մանյա,  
Լյուսյա, Սոնյա,  
Ժենյա, Մոնյա,  
Տանյա, Կատյա,  
Գալյա, Ասյա և այլն:

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Վալոդյան ու Մանյան դասընկերներ են:
  2. Լյուսյան ու Սոնյան լավ ֆիզկուլտուրնիկներ են:
  3. Կատյան ու Գալյան զերազանցիկներ են:
  4. Ասյան նվեր ստացավ մի վոսկյա ժամացույց:
- բ) Բացի վերելում հիշված դեպքերից՝ հայերեն բառերի մեջ յա կա  
Իա լավելի գրվում է յա:

Ուրիմակ՝

առորյա, վոսկյա,  
պաշտոնյա, փայտյա,  
համարյա, յերկաթյա,  
մատյան, բրդյա,  
բարչացակամ, ապակյա,  
նյարդ, արծաթյա,  
կաշան, գործունյա,  
արեգելյան, մետաղյա,  
արեվմտյան, թիթեղյա,  
լյարդ, սեվաչյա,  
Աղայան, Հրաչյա և այլն:

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Մեր դասասենյակները շատ լուսավոր են ու ընդարձակ:
2. Ապակյա փորձանոթն զգուշությամբ պետք է տաքացնել:
3. Պղնձյա կաթսաները հաճախ պետք է անագել:
4. Քանաքեռի հիդրոկայանն արդեն պատրաստ է:
5. Ասիան, Յեվրոպան, Աֆրիկան և Ավստրալիան գտնվում են արևելյան կիսագնդում:
6. Թումանյանն ու Աղայանը հայ տաղանդավոր գրողներից են:



4. «Աւյ» ՅԵՐԿԶՆՉՅՈՒՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ  
 ՊԼԿ յԵՐԿԵՆՅՈՒՆԸ ԲԱՆԱՐԱՄԱՏՆԻ Ի ԿՈՆՏԱՆՍՏԱՆՈՒՆԸ ԵՎ ԲԱՐՏՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿ  
 ՎԵՐԱԾՎՈՒՄ ԵՎ ԱՊՐԳ ՈՒ ՃԱՅՆԱՎՈՐԻ:

ՈՐԻՆԱԿ՝

լուսս — լուսավոր,	լուսավորություն.
բույր — բուրմունք,	բուրավետ.
սոււյզ — ստուգատես,	ստուգում.
բույլ — թուլակազմ,	թուլամորթ.
կույր — կուրորեն,	կուրանալ.
բույս — բուսարան,	բուսականություն.
բույն — թունավոր,	թունոտ.
բնույթ — բնութագիր,	բնութագրություն.
գույն — գունավոր,	գունատ.
կույս — կուտակել,	կուտակում.
համբույր — համբուրել.	
բնկույզ — ընկուղենի և այլն:	

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սոցմրցման պայմանագրերի ստուգատես անցկացրինք:
  2. Իլլիչի միլիտարավոր աշխատանքը լուսավորում են մեր քաղաք-  
 ներն ու գյուղերը:
  3. Արևադարձային յերկրները բուսական աշխարհը շատ փար-  
 թամ է:
  4. Կանաչ, վիթխարի ընկուղենու տակ,  
 Իրենց հասակի կարգով, ծալպատակ,  
 Միասին բազմած,  
 Մի շրջան կազմած,  
 Քեֆ էյին անում  
 Յեվ ուրախանում  
 Մեր հսկա պապերն ու մեր հայրերը՝  
 Գյուղի տերերը:
- (Է. Թումանյան)
5. Թեվան պապը կուրացել էր ծաղիկ հիվանդությունից:
  6. Մեխակն ու վարդը բուրավետ ծաղիկներ են:

IV. «Յ» ՉԱՅՆԱԿԱՊԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ա) Ի ձայնավորին մի այլ ձայնավոր հաջորդելու դեպքում ձայնա-  
 կապը չի գրվում:

ՈՐԻՆԱԿ՝

սոցիալիզմ,	լիություն,
միակ,	միություն,
զաստիարակ,	գյուղացիություն,
Մարիամ,	ակվարիում,
տիեզերք	Դանիել,
հիերոգլիֆ,	Գաբրիել,
լիաթոք,	պիոններ,
թիեր,	ամբիոն,
լիիրավ,	բիուրգիա,
ձիեր,	աղիողորմ,
աքսիոմ	և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խորհրդային Միությունը միակ յերկիրն է, վորտեղ աշխա-  
 տավորությունը լիիրավ կերպով մասնակցում է յերկրի կառավար-  
 ման գործում:
  2. Դանիելն ու Մարիամը պիոններական ջոկատավարներ են:
  3. Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ հեղափոխության քսան-  
 մեկերորդ տարեդարձի տոնակատարության ժամանակ աշխատավորու-  
 թյան հոծ շարքերը լիահնչյուն ու միաբերան ուռա էյին գոչում  
 կուսակցության և կառավարության առաջնորդներին:
  4. Գաբրիել Սուրբուկյանը հայ խոշորագույն սաղանդավոր  
 զբամասուրդ է:
  5. Յերկիրը միաձուլյ կապարագույն ամպերով ծածկված է,  
 գեռ էլի մեկ-մեկ անձրևում էր: (Փափազյան — «Արար»)
  6. Զիուս սանձը քաշեցի, արագ քայլել հնարավոր չեր. փողոց-  
 ներում առվակներ էյին գոյացել: (Փափազյան — «Արար»)
- բ) ա, ե, ո, ձայնավորներին մի այլ ձայնավոր հաջորդելու դեպքում  
 ձայնակապը չի գրվում մի քանի հայերեն և այլ լեզուներից փոխ առ-  
 ցված բառերում:

ՈՐԻՆԱԿ՝

Ուկրաինա,	Նաիրի,
եզոթա	պոեա
քվեարկել,	աուդիտորիա,
լեգեոն,	ֆեոդալ,
կլուսն,	թեորիա,
կակաո,	բոա (ոձ),
իդեալ	աերոգրոմ և այլն:

56564-66





1. Խորհրդային Ուկրաինան միութենական հանրապետություն է։ Միայն խորհրդայնացման շնորհիվ ուկրաինական ժողովուրդը ձեռք բերեց լիակատար ազատություն։

2. Գերագույն Խորհրդի ընտրություններն անցան ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի քվեարկությամբ։

3. Կարոյի իրեանքն է ողաչու դառնալ։

4. Իրանում, Աֆղանստանում և մի շարք այլ երկրներում դեռևս ամբողջովին չեն վերացել ֆեոդալական կարգերը։

5. Կակա՞ն արեադարձային յերկրի բույս է։

6. Բոա ո՞՞ն ապրում է Հարավային Ամերիկայում և թունավոր չէ։  
գ) Մնացած բոլոր դեպքերում ա, է, ո, ձայնավորներին մի այլ ձայնավոր հաջորդելու դեպքում յ ձայնակապը գրվում է Որինակ՝

Հայաստան	կայարան,
հայացք,	դայակ,
էյի	էյիր,
նայել,	մայիս,
հայելի,	վայելուչ,
կայուն,	էյություն,
միջորեական,	գործունեյություն
ախոյան,	գոչակա՞,
գոյություն,	բարոյական,
Կարոյի,	կինոյի և այլն

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Յերեվանի կայարանը նորոգվել ու գեղեցկացել է։  
2. Սյուր հայոց լեզվի դասին մենք սովորեցինք գոյականների հոլովները։

3. Մոսկվայից ոաղիոյով հաճախ լսում ենք համերգներ։

4. Սյուր մեր չոկատով կինոյի կոնկրետ դիտում ունեցանք։

5. Հայաստանը խորհրդայնացավ 1920 թվի նոյեմբերի 29-ին։

6. Խորհրդային յերկրում գոյություն չի կարող ունենալ ազգային խտրություն։

7. Հրեյաները, վոր ամենահարած՛ած ժողովուրդն էյին ցարական Ռուսաստանում, խորհրդային իրավակարգում ստացան լիահավասար իրավունքներ և այժմ ունեն իրենց ավտոնոմ մարզը՝ Հեռավոր Արև-վելքում։

1. ՅԵՂՆԻԿՆԵՐՆ ԱՆՏԱՌՈՒՄ

1

Յեղնիկները մըսում էյին։ Յերկուսն էյին, սեղմվել էյին իրար մի ահագին յեղևնու տակ։

Յուրա ու մութ գիշեր էր ու ձյունը գալիս էր անդադար, գալիս ու իր թավ սավանը փռում խիտ անտառի ծառերին, գեանին ու յեղնիկների վրա։

Յեղնիկները սեղմվում էյին իրար, պառկել էյին ու դունչ-դնչի գրեի։

Ի՞նչ սև գիշեր էր. ի՞նչ անախորժ ձայներ էր հանում սանձարձակ քամին. ծառերի մերկ գապաթները շփվում էյին իրար և սըվ-սըվում. յեղնիկների սիրտը մի անորոշ յերկյուղ էր մտել։

Լավեց բուռի ձայնը. յեղնիկները սրեցին ահանջները, բուռի ձայնը կրկնվեց և տարածվեց սառն ողբի մեջ։

Ի՞նչ վատ գիշեր էր... Բամին փչում էր ու ձյունը լցնում յեղնիկների ահանջը և վոռնում։

\* \*

Հեռվից քամու հետ հանկարծ լավեց մի ուրիշ վոռնոց. ո՛ւ, ո՛ւ, ո՛ւ... Յեղնիկները շունչը կտրվեց, նրանք վախից քարացան։

— Ո՛ւ, ո՛ւ, — լավեց հախառակ կողմի սարերից՝ իբրև պատասխան առաջին վոռնոցին։

Ձյունի ծանրությունից կտարվեց մի չոր ձյուղ ու ճոճալով ընկավ գետին։ Յեղնիկները ցնցվեցին սարսափահար ու վտար թռան։

— Ո՛ւ, ո՛ւ, — կրկնվում էր զարհուրելի վոռնոցը միշտ ավելի ու ավելի մոտիկ։

Յերկյուղ իջավ յեղնիկների վրա. նայեցին դեռ ու դեն և հանկարծ յերկուսը միասին միանգամից առաջ նետվեցին ու սկսեցին փախչել։ Թռչում էյին նետի պես, ծառերի բների արանքով, ընկած կոճղերի վրայով, փախչում էյին դեպի ցած, դեպի ձորը...  
Իսկ վերևը, ծառերի մեջ, փայլեցին շարժուն կայծեր, առաջ մեկը, յերկուսը, բայց շուտով շատացան ու մոտեցան։

Յեղ ախտեղ, ահագին յեղևնու տակ, ուր քիչ առաջ պառկել էյին յեղնիկները, կանգ առավ քաղցած գայլերի խումբը։

Նրանք անհանգիստ փնտռել սկսեցին, առել էյին յեղնիկների հոտը...

\* \*

Մեկն այս ու այն կողմը վազեց, իսկ մյուսները վրա ընկան, սկսեցին հետևի ու առջևի վտանքով փորել ձյունն ու հետ ածել։



Վոչինչ չկար: Կանգ առան բոլորը միասին և ձայն-ձայնի տվին՝  
ս՛ւ, ս՛ւ...

Նրանցից մեկը լռեց ավելի շուտ, վեր բարձրացրեց իր սուր  
քիթը, սկսեց սառն ողբ ներս ծծել, կարծես իր քիթն հարցնելիս  
լիներ, թե սուր են գնացել յեղնիկները: Բայց վոչինչ չհասկանալով,  
քիթը նորից կոխեց ձյունի մեջ, քիչ ել փորփրեց ու գտավ յեղնիկ-  
ների բռնած ճամփան:

Ընկերները հետևեցին նրան ու հոտոտելով գնացին յեղնիկների  
հետքով, մինչև նորից կանգ առան:

Կատաղի քամին ավելի եր ձյունը, տարել, գիգել եր ով գիտե՛  
սուր, սրբել եր և յեղնիկների հետքն ու հոտը, փչում եր ու փչում ու  
վռոնում մերկ ծառերի տակ...

Վռոնում ելին գայլերն իրար կողքի պպղած, դնչերը վեր ցցած,  
քաղցած ու խաբված:

Յեվ հեովից, բարձր օարերի վրայից, գալիս եր նրանց պատաս-  
խանը.

— Ո՛ւ, ս՛ւ, ս՛ւ...

Սարսափելի գիշեր եր...

## 2. Մ Ո Ւ Մ Ո Ւ

(Հատված)

Գերասիմին առավոտները Մումուն եր գարթեցնում՝ փեշից քա-  
շելով, սանձից բռնած սայլակի մոտ եր բերում ջրկիր ձիուն, վորթ  
հետ լավ բարեկամ եր, դեմքին լրջութուն տված: Գերասիմի հետ  
գնում եր գետը, հսկում եր նրա ավելներին ու թիերին և վոչ վոքի  
մոտ չեր թողնում իր տիրոջ խցին: Գերասիմը նրա համար դռան  
մեջ մի անցք եր շինել, և Մումուն կարծես զգում եր, վոր ինքը  
միայն Գերասիմի խցում է լիակատար տեր: ու այդ պատճառով ներս  
մտնելուն պես իսկույն ինքնագոհ դեմքով թռչում եր թախտին: Նա  
գիշերը բոլորովին չեր քնում, բայց և անտեղի չեր հաջում՝ ինչպես  
վորևե հիմար մի շուն, վոր հետին թաթերի վրա նստած, դուռնը դեպի  
վեր, աչքերը փակ՝ հաջում է ձանձրութից, այնպես, աստղերի վրա  
և, սովորաբար, յերեք անգամ իրար հետևից: Վոչ, Մումուն այդպես  
չեր: Նա իր բարակ ձայնն իդուր տեղը չեր հանի յերբեք: Նա իր  
ձայնը հանում եր այն ժամանակ միայն, յերբ ոտար մի մարդ եր  
մոտենում իրենց պարսպին, կամ վորևե մի տեղ կասկածելի աղմուկ  
եր բարձրանում կամ ջրշուն... Մի խոսքով՝ Մումուն յերևելի պա-  
հապանութուն եր անում:

## 3. Պ Ո Ւ Կ Ո Ւ Շ Կ Ա

(Հատված)

Պոլիկեյը ձիու հեքիմ եր: Թե ինչպես եր ձիաբուժ գարձել՝  
այդ հայտնի չեր վոչ վոքի և ավելի քիչ՝ իրեն: Զիարուծարանում,  
ձիապահի մոտ, վորին քշել ելին հեռու տեղ, նա ուրիշ վոչ մի պաշ-  
տոն չեր կատարում՝ բացի աղաների աղբը մաքրելուց, յերբեմն ել  
ձիերն եր մաքրում ու ջուր կրում: Այնտեղ չեր կարող բան սովորել:  
Հետո յեղավ ջուլիակ, ապա աշխատեց այգում, ուր մաքրում եր ճա-  
նապարհները: հետո դռնապան յեղավ մի վաճառականի մոտ: Նշա-  
նակում ե, այտեղ ել չեր կարող փորձ ունենալ: Բայց վերջին ան-  
գամ, յերբ տուն յիկավ, ինչպես յեղավ՝ կամաց-կամաց տարածվել  
սկսեց նրա անսովոր, մինչև անգամ մի քիչ դերբնական ձիաբուժա-  
կան արվեստի հռչակը:

## 4. ՀՐԻՆՉ ՆԱՎԹԱՀԱՆՔՈՒՄ

(Հատված)

Կրակի ճարձատյունը, խորտակվող ու փլչող շինությունների  
զղրջունը, կայծերի հեղեղը, ամբոխի աղաղակները, ծուխը, մուրը,  
արյունագույն լույսը, յերկնի խավարը գոյացրել ելին զարհուրելի  
քաոս: Քաոս, ուր միայն մի բան եր պարզ, զորավոր, հաղթող՝ կույր  
տարերքը: Նա վոչինչ չեր խնայում, տարածվում եր չորս կողմ,  
լավում ամեն ինչ, վոր գտնվում եր իր ճանապարհի վրա: Ճանիճը  
ներկայացնում եր մի հսկայական թոնիր, ուսկից բոցի ալիքները  
բարձրանում ելին վեր, խուլ թնդյուններ արձակելով, և կորչում,  
անհետանում ծխի թուխպերի մեջ:

## V ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐԻ ՈՒՂԱԿՐՈՒԹՅՈՒՆԸ

### II «Հ» ԲԱՂԱԶԱՅՆԻ ՈՒՂԱԿՐՈՒԹՅՈՒՆԸ

Մի քաղք բառերում բ-ից հետո գրվող և բաղաձայնը չի արտասան-  
վում կամ քառ քույլ և արտասանվում:

Որինտի՝

- |                   |                   |
|-------------------|-------------------|
| աշխարհ,           | շնորհ,            |
| աշխարհագրություն, | շնորհակի,         |
| ճանապարհ,         | շնորհակալություն, |
| խորհանտեսություն, | խորհուրդ,         |
| խորհրդային,       | մենաշնորհ,        |



ժողովոմխորհ, քաղխորհուրդ,  
խոնարհ, ներքև և այլն:

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Աշխարհի մեկ վեցերորդ մասում խորհրդային իշխանությունն է:
2. Շնորհակալություն ընկեր Ստալինին՝ մեր ուրախ և յերջանիկ կյանքի համար:
3. Նոր Սահմանադրությամբ ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհուրդը բաղկացած է յերկու պալատներից՝ Միության Խորհրդից և Ազգությունների Խորհրդից:
4. ԽՍՀՄ-ի պետական իշխանության բարձրագույն մարմինը ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհուրդն է: 1937 թ. դեկտեմբերի 12-ին տեղի ունեցավ ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի ընտրությունը:
5. Մենք կարգացինք շնորհալի և տաղանդավոր պրոլետարական գրող Նիկոլայ Ոստրովսկու «Փոթորկած ինները» և «Ինչպես է կոփվում պողպատը» գրվածքները:
6. Մեր դասարանում շատերն աշխարհագրությունից գերազանց գնահատականներ ունեն:
7. Մենք բոլորելու յենք բայերի խոնարհումը:
8. Պուշկինի գրվածքներից է «Ճանապարհորդություն դեպի Երզրում»:

**9. ԱՏՈՒՄ ԵՄ ԲԵՉ**

Ատում եմ քեզ և քո գահը,  
Միահեծան գոռոզ ցար:  
Յեզ քո վորդոց ու քո մահը  
Պիտի տեսնեմ անպատճառ:

(Ա. Պուշկին)

**ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ**

**1. ԸՄԲՈՍԻ ՄԱՀԸ**

Անտառը հուզված էր, հուզված մեծապես:  
Խուլ զայրագին մի շուկ գրավել էր նրան:  
Հսկա կաղնիները բուռն շարժումով կռառում էին դեպի հացի-  
ները, թեղին ու լորին վրդովված՝ շնջում էին: Թփերն անգամ ան-  
ճոռնի բաղեղներով գալարված, փոտները ճահճի մեջ, գաղջ հողի վրա  
պառկած՝ անհանգիստ էին... Անտառն ամբողջ հուզված էր, Անտառի  
մի դեպք էր տեղի ունենում այդ բաղմադարյան ճահճային աշխար-  
հում, ուր ծառերը մինչև այդ աճում էին, մեռնում, գիջության մեջ

բորբոսնում, պարագիտներով լցվում, բաղեղներով կաշկանդվում, և  
ուր բոլորը գոհ էյին, վոչինչ չէին զգում:

**2. ՍՊԻՏԱԿ ԳԱՂԱՔԸ**

(Հատված)

Տիգրանից հետո պիտի խոսեր քաղխորհրդի նախագահ ընկ.  
Մարութը: Նա նախկին, հեղափոխական անցյալով հարուստ բանվոր  
էր: Ճառ ասելն իր համար համարում էր ամենադժվար բանը բոլոր  
գործերի մեջ. նա մեկն էր այն բանվորներից, վորոնք զգում են  
իրենց գիտության պակասը և իրենց բոլոր ազատ ժամերը նվիրում են  
իրենց պաշարն ավելացնելու խոսում էյին, վոր նա վեր է կենում  
ժամը վեցին, լամպի լույսով կարդում է մինչև աշխատանքի ժամը,  
իսկ գործի յեր զալիս բոլորից շուտ... և աշխատակիցները, այդ տես-  
նելով, ամաչում էյին և աշխատում նրանից հետ չմնալ: Պատշգամքի  
ճաղերի մոտ կանգնած՝ նա շուրթերը շարժում էր բոլոր ժամանակ  
ու ցրիվ նա, ում բաղմության՝ նա Տիգրանին չէր լսում, վորովհետև  
մտքում իր ճառն էր պատրաստում:

\* \* \*

Քաղխորհրդի նախագահը յերկար չխոսեց. նա այն կարծիքը  
հայտնեց, թե շատերն այսպիսի մեծ տները շուայություն են համա-  
րում մեր քաղաքի համար, իսկ վոմանք կարծում են, թե քանի վոր  
կոմունիստները յերկար չեն մնալու, ել ինչու յեն... Բայց վոչ, այդ  
չի ինի, կոմունիստները հաստատուն տներ են շինում իրենց համար՝  
յերկար, յերկար ապրելու:

Իր խոսքի վերջում նա մի քանի կոմպլիմենտ ասավ Տիգրանի  
յեռանդի և նվիրվածության մասին, վոր ընդունվեց ծափերով և վորից  
Տիգրանը ժպտաց ընկերաբար:

— Եզպիս, մենք վորոշել ենք աշխարհը փոխել, — վերջացրեց նա-  
խագահը, — և պիտի փոխենք...

**3. ՆԱԽԿԻՆ ԲԱՏՐԱԿԸ**

(Մինաս Պապյանի գրածից)

Յերբ առաջին անգամ Ստալինովի աշխատանքի մասին կար-  
գացի, հիացա նրա վարպետությամբ: Վորոշեցի ինքս ել նրա նման  
աշխատել:

Ու անցա նոր ձևի աշխատանքի:  
Ամենից առաջ փոխեցի իմ մեքենայական մուրճը, հորատող մե-



քենաս: Բրիգադում աշխատանքի խիստ բաժանում կատարեցի:  
Աշխատանքից առաջ մենք 5 բույն խորհրդակցում ենք ու բարձր  
կարգապահութեամբ անցնում աշխատանքի: Մեր փորած հանքանյութն  
իռկույն հանվում է հանքահորից:

Այս ձևով աշխատելով 14 որում յետ իմ պլանը կատարեցի 323  
տոկոսով և ստացա 1806 ուղբի աշխատավարձ:

Մի քանի որ աշխատանքս դիտելով իմ որինակին հետևեցին  
հորատողներ Ռուստամ Հովհաննիսյանը, Արամ Մարտիրոսյանը և  
ուրիշները:

\*  
\*\*

Ապրում եմ Լենինյան հանքի ամենալավ բնակարաններից մե-  
կում: Ստացածս բարձր աշխատավարձով կարողանում եմ լիովին  
բարեկեցիկ, կուլտուրական կյանք վարել:

Հիմա, վոր նայում եմ ինձ, նախկին բատրակի, միտք եմ ա-  
նում, թե ի՞նչպես ե փոխվել կյանքը: Ի՞նչպես միլիոնավոր ինձնաման  
նախկին դժբախտներն այժմ յերջանիկ են դարձել: Յերջանիկ են դար-  
ձել կոմունիստական կուսակցության, խորհրդային իշխանության,  
մեր մեծ ուսուցիչ ընկեր Ստալինի իմաստուն ղեկավարության շնորհիվ:

Յես հետագայում ավելի յեռանդով կպայքարեմ մեր քիբելի  
հայրենիքի ամրացման համար:

#### 4. ԲԱՐԵՎ ՄՈՍԿՎԱ

Վերջապես մենք Մոսկվայում ենք: Վորքան յերկար թվաց ճա-  
նապարհին անցկացրած վերջին գիշերը: Մեզանից և վոչ մեկը չեր  
ցանկանում քնել: Վագոնների պատուհաններից մենք նայում էյինք  
կայարանների և գյուղերի փայլող լույսերին:

Յեվ ահա յերկար սպասված Մոսկվան: Մենք բոլորս ի՞նչպես  
ուրախ ու աշխույժ ենք: Կատարվեց մեր նվիրական յերպանքը:  
Շուտով մենք կտեսնենք Լենինի դամբարանը, Կարմիր հրապարակը  
և Կրեմլը, վորտեղ ապրում է ընկեր Ստալինը:

Չորս և կես ամիս մենք հանգստացանք արևային Արտեկում, Սև  
ծովի ափին, խաղում էյինք, լողում, ինքնաթիռների մոդելներ պատ-  
րաստում, զբաղվում էյինք սպորտով, սովորեցինք ձեռագործել, ուրախ  
յերգեր էյինք յերգում:

Այդ բոլորի համար է՛մենք շնորհակալություն ենք հայանում  
խորհրդային կառավարությանը և յերեխաների ամենալավ բարեկամ  
ընկեր Ստալինին: Մենք նրան շնորհակալություն ենք հայանում նաև

պալատի նմանվող այն գեղեցիկ աան համար, վորտեղ մենք Մոսկ-  
վայում պեռք է ապրենք և սովորենք:

Մեր ամենամեծ ցանկությունն է թեկուզ աչքի անկյունով  
տեսնել թանկազին ընկեր Ստալինին: Մենք կարծում ենք, վոր մեր  
յերազը կկատարվի, յերբ խորհրդային պիոներներին հետ հարմիր հրա-  
պարակը միտինգի կընանք: Մենք ամբողջ ձայնով կգոչենք. «Վիվա  
կամարադո ՄՍՍՍՐՆ»:

Իսպանական պիոներներ՝

ԱՄԵՐԻԱ, ԲԵՐՆԱԼԴՊ ԴԵ ԿԻՐՈՍ, ԼԱՌԻՐԱ ԴԵ ԼՅԱ ԲՈԿԵՅՅԵ:

Մոսկվա

#### 2. «Ձ» ՅԵՎ «Ձ» ԲԱՂԱՉԱՍՆՆԵՐԻ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ա) Ը բաղաձայնից հետո մյուս բոլոր անհնչյունափոխ բառաձայն-  
ներում լսվում և գրվում է չմիայն գարչից և չարչի բառերում:

բ) Ը բաղաձայնից հետո մյուս բոլոր անհնչյունափոխ բառա-  
ձայններում, յերբ լսվում է չ կամ ջ, գրվում է ջ:

Որինակ՝

լուրջ,	յերջանիկ,
բազառ,	արջ,
մարջան,	ջրջան,
Մարջանիկ,	արջասպ,
բաղարջ,	շուրջ,
խարջ,	շրջել,
հորջորջել,	շրջարերական
մաշյուն,	թրջել,
ստերջ,	անուրջ,
վորջ,	վերջավորություն,
կամուրջ,	վերջակետ և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Շրջգործկումի հողբաժինը շրջարերականով հայտնեց շրջանի  
գյուղերին այգիներն արջասպի լուծույթով սրեկերու մառին:

2. Մեր գյուղխորհուրդը հանգամիջյան ճանապարհները կարգա-  
վորելիս կառուցեց մի շարք նոր կամուրջներ և վերանորոգեց հները:

3. Դարչինն արևադարձային բույսից է ստացվում:

4. Մեր յերկրում վերացել են չարչիներն ու ապեկուլյանտները:

5. Մարջիկը լուրջ աղջիկ է:

6. Կոլտնտեսական կարգերը յերջանկություն բերեցին մեր աշ-  
խատավոր գյուղացիությանը:



7. Վազարչապատի, Զանգիբաթաբի, Կարաբաղարի, Վեդու, Հոկտեմբերյան և Ղամարլուի շրջանները գերազանցապես բամբակացան և այգեգործական շրջաններ են:

8. Նախագառության վերջում գրվում և վերջակետ:

գ) Պ բաղաձայնից հետո յսվում և գրվում է չ միայն գեղջեղ բառի մեջ:

զ) Պ բաղաձայնից հետո, յեթ յսվում է չ կամ ջ, գրվում է ջ հնչյունափոխության չեմբարկված բոլոր բառաձայններում:

Որինակ՝	վողջույն,	յեղջուր,
	առողջ,	յեղջերու,
	աղջիկ,	չղջիկ,
	վողջտխոն,	գաղջ,
	վողջ,	զղջալ,
	ամբողջ	այծեղջուր,
	շեղջ,	աղջամուղջ,
	գեղջուկ	և այլն:

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Վողջույն Խապանիայի հերոս ժողովրդին:
2. Ամբողջ աշխարհում ծածանվելու յե Լենինյան դրոշմը:
3. Մեր յերկրի մանուկներն առողջ են ու յերջանիկ:
4. Ֆիզկուլտուրայի մրցումներին մեր դասարանի աղջիկներն առաջին տեղը բռնեցին:
5. Տունդրաների բնակիչների համար հյուսիսային յեղջերուն ամենազատակար կենդանին և:
6. Չղջիկը թռչող կաթնասուն կենդանի յե:
7. Այն նախադասությունը, վորի յենթական չի արտահայտված, բայց մաքուր իմացվում և, կոչվում է գեղջված յենթակայով նախադասություն:
8. Վողջույն Գրոմովին, Յումաշելին, Դանիլինին, խորհրդային ավիացիայի Ստալինյան բաղեներին, վորոնք նոր անմար փառքով պատկեցին մեր հայրենիքը, վորոնք ամբողջ աշխարհին ցույց տվեցին, թե ինչի յե ընդունակ մեծ Ստալինի դաստիարակած խորհրդային հայրենասերների սերունդը:

**ԹԵԼԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ**

**1. ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԵՐԳԵՅԵՎԻՉ ՊՈՒՇԿԻՆ**

(Հատված)

Յերեք-չորս տարի առաջ յես գրոսնում եյի Ոստաֆյեվոյի պուրակում, վարսեղ Պուշկինը հաճախ եր լինում: Այս հին, չքնաղ պու-

րակը զարգարված եարձաններով՝ ժուկովեկու, Կարամզինի, Վյադեմ-սկու: Այս արձանների շարքում կա և մեկը, Պուշկինինը:

Պուրակում կային մի խումբ եքսկուրսոնատ կոմյերիտականներ— յերեք-չորս տղա, յերեք-չորս աղջիկ: Նրանք հետաքրքրությամբ շրջում եյին պուրակում և կանգ առան Պուշկինի արձանի առջև:

Նրանցից մեկը կուսցավ (մակաբուրժուանը վորոշ չափով անընթեռնելի յեր գարձել) և կարեաց.

«Վողջույն քեզ, սերունդ մատաղ, անծանոթ»:

Յես կանգնած եյի բավականին մոտ և ապշել եյի այն անտավոր պատենությամբ, վոր ստացավ այդ միջավայրում արձանի մակագրությունը: Ըստ յերեվույթին ապշել եյին նաև կոմյերիտականները: Նրանք լոցին և իրար նայեցին: Ուղղակի գերիզմանից նրանց եր զիմում մեծ ձայնը: Կարմիր վզկապով փոքրիկ կոմյերիտուհին Պուշկինին ուղղեց իր վեհերոս, վորոշ զարմանքով, սակայն և բարեարտությամբ լի աչքերը և կամացուկ առաց.

«Վողջույն Պուշկինին»:

**2. ԴՈՒՐՈՎՍԿԻ**

(Հատված)

Սոված արջին վազում եյին դատարկ սենյակում, պարանով կապում պատին ամբացված ողակին: Պարանի յերկարությունը գրեթե հավասար եր լինում սենյակի վողջ տարածությանը, այնպես, վոր միայն հակադիր անկյունը կարող եր ապահով լինել ռարսափելի գազանի հարձակումից: Սովորաբար նորեկ մարդուն բերում եյին այդ սենյակի դռան մոտ, անսպասելի կերպով ներս եյին հրում սենյակը, փակում դուռը և գծրախ գոհին թողնում բրդոտ մենակյացի մոտ: Խեղճ «հյուրը» պատաստոված փեշերով, ճանկոտոված ու արյունլվիկ դարձած, շոտով գանում եր անվտանգ անկյունը, բայց ստիպված եր լինում յերբեմն ամբողջ յերեք ժամ կպչել պատին և տեսնել, թե ինչպես իրենից յերկու քայլի վրա կատաղած գազանը մռնչում եր, ցատկոտում, ծառս լինում, աշխատում պարանը պոկել և հատնել իր գոհին: Սրանք եյին ուս աղայի ազնիվ զվարճալիքները:

\* \* \*

Ուսուցչի ժամանելուց մի քանի որ հետո Տրոյեկուրովը հիշեց նրան և մտադրվեց հյուրասիրել արջի սենյակում: Դրա համար մի առավոտ կանչելով նրան, տարավ մութ միջանցքներով, հանկարծ կողքի դուռը բացվեց, յերկու սպասավոր ներս հրեցին Ֆրանսիացուն և դուռը բանալիով փակեցին: Ուշքի գալով՝ ուսուցիչը տեսավ կապ-



ված արջին: Գաղանն սկսեց փրփրալ, հեռվից հոտոտելով իր հյուրին և հանկարծ կանգնելով հետին թաթերի վրա՝ հարձակում գործեց... Յրանտիացին չչփոթվեց, չփախավ, այլ ապասեց հարձակման: Արջը մոտենում էր: Դեփորժը գրպանից հանեց փոքրիկ պիստոլը, ուղղեց սոված գաղանի ակննջին ու կրակեց: Արջը գլորվեց: Հավաքվեցին բոլորը, գուռը բացվեց, Կիրիլա Պետրովիչը ներս մտավ, գարմա- նարով իր կատակի վերջավորութեան վրա:

### 3. ԱՌՅՈՒԾԸ, ԱՂՎԵՍԸ ՅԵՎ ԱՐՋԸ

Ըստ Այգեկցու

\* \* \*

Հզոր առյուծը տկարացել, քաշվել էր իր վորջը և ցավից ծանր հառաչում էր: Բոլոր կենդանիները գալիս, հավաքվում էին նրա շուրջը, վողջույն տալիս կենդանիների արքային, հարցնում նրա վողջությունը և իրենց պարտքը կատարած՝ թողնում ու հեռանում:

Ամենավերջինը յերեկաց աղվեսը և յերկյուղիցամբողջ մարմնով դողալով դեռ նոր էր մոտեցել վորջի մուտքին, յերբ հանկարծ լսեց, թե ինչպես արջը չարախոտում էր իրեն: Խորամանկ աղվեսն անմիջապես ծրագրեց իր անհիքը և ներս մտնելով խոնարհվեց առյուծի առաջ:

Առյուծը բարկացած գոչեց.

— Բարի ժամի չեկար, գարշելի, առա, վիրտեղ եյիր մինչև հի- մա և ինչո՞ւ ուշացար:

Աղվեսը լրջացավ և անմիջապես վրա բերեց.

— Մի հուզվիր, տեր թագավոր: Յերդվում եմ քո գլխով, վոր ուշ ու միտքս միայն քո վողջությունն էր: Այդ պատճառով այցելեցի շատ բժշկապետների, շատ չարչարանք ու տանջանք քաշեցի, բայց վերջիվերջո իմացա քո բժշկութեան միջոցը:

Առյուծն ուրախացավ և բարի դեմք ընդունելով՝ ասաց.

— Բարի յեկար, իմաստուն կենդանի, քո վողջամիտ լինելն ինձ վազուց է հայտնի: Առա, վիրն է այդ դեղը:

\* \* \*

Աղվեսն աչքի տակով նայեց արջին, ու մինչդեռ վերջինս ան- մեղ ձեանալով քաշվել էր մի անկյուն ու չեր էլ նախազգուս, թե ինչ դժբախտություն է գալու իր գլխին, ասաց առյուծին.

— Տեր արքա. բժշկապետներն ինձ ասացին, վոր յեթե արջի մորթին տաք-տաք գցեք հիվանդի վրա, խուլույն նրա ցավը կչքանա և անմիջապես կառողջանա:

Արջը դեռ լավ չեր հասկացել, թե ինչպե՞ս կարելի յե արջի մորթին տաք-տաք գցել առյուծի վրա, յերբ նրան բռնեցին և սկսեցին մորթին հանել:

Արջն աղաչում էր խնայել իրեն, հառաչում էր ցավից, խոտա- նում անմիջապես նվեր բերել առյուծին դեր յեղջերու, արջառ և այլ կենդանիներ, բայց նրան լսող չկար:

Նենգամիտ աղվեսն անտարբեր վկա լինելով այդ բոլորին, չա- բախնդու թյամբ ասաց՝ միայն արջին լսելի ձայնով.

— Այդպես է պետք քեզ և բոլոր նրանց, ովքեր կչարախոտեն և կզրպարանեն ուրիշին՝ անձնական շահերից յելնելով:

### 4. ՅԵՂՋԵՐՈՒՆ

(Հատված)

Արշալույսից առաջ մենք դարան եյինք մտած:

Յեռ իմ դիրքից պահում էյի առաջիս ընկած բացատը: Դիմացս կանգնած էր խոր ու անթափանցելի մութ անտառը:

Հետզհետե դիշերվա խավարն սկսեց նոտրանալ: Ժայռերը խոժոռ քնաթաթախ դուրս նայեցին աղջամուղջի միջից: Յերկինքն սկսեց գունատվել ու պարզվել: Ապա յերևաց յեղջերուն—լուսաստղը: Վեր կացավ վաղորդյան զեփյուռը: Ծաղիկները շարժեցին իրենց գլխիկ- ները, խոտերը դողդողացին, տերևները շրջացին: Անտառն սկսեց զարթնել: Մոտակա թփից մի ծիտ ճկաց, մի ուրիշը՝ մյուս թփից, մեկն էլ հեռվից...

Յեռ աննկատելի գուրս էյի յեկել իմ թաքտից ու զմայլած դիտում էյի շուրջս—բնությունը, այն ժամին, յերբ ծագում է տա- ջին լույսը:

### 3. «2» յեվ «3» ԲԱՂԱՉԱՅՆ ՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ա) Բ բաղաձայնից հետո յավում է գրվում է ց հնչյունափոխու- րյան չենթարկված հետևյալ բառարմասներում.

մրցել, արցունք,  
հաց, ապաթաց (կեսադրական նշան),  
ընթեցել, պախուրց (ռանձ, կապ).

բ) Բ բաղաձայնից հետո, յեթե յավում է ց կամ ձ, գրվում է ձ մյուս Բոլոր անհնչյունափոխ բառարմասներում.



արձազանք,	դարձյալ,
արձակ,	դարձ.
արձան,	դիմադարձություն,
արձանագրել:	ընդարձակ,
աշխատավարձ,	իրադարձություն,
մանկաբարձ,	հետադարձ,
որավարձ,	սանձարձակ,
վարձ,	վարձակալ,
փոքն,	փոքնառու և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մեր սոցմրցման պայմանագիրն ուստարվա յերկրորդ կիսամյակի կապակցութեամբ լրացրեցինք նոր կետերով:
2. Յետ ընթերցել եմ ժյուլ-Վեռնի հայերին թարգմանված բոլոր գրվածքները:
3. Այսոր աշխարհագրական խմբակի պարագմունքին կազմակերպեցինք հարց ու պատասխանի ժամ:
4. Ապաթարց նշանը նոր ուղղագրութեամբ հայերենում չի գործածվում:
5. Պախուրց նշանակում և սանձ:
6. Ամառային արձակուրդը յետ անցկացրի պիտներական ճամբարում:
7. Մենք բարձր ենք պահում պիտներական կոչումը:
8. Յերեվանի Լենինյան հրապարակն ընդարձակվեց և առֆալտապատվեց, այդ հրապարակում գրվելու յի ընկեր Լենինի արձանը:
9. Մենք անվեյրագարձ կերպով ջախջախել ենք հին կարգերը:
10. Յերեվանի արվարձաններից և Նորքը:
11. Թարմ կանաչեղենն ստացվում և մերձքաղաքային տնտեսությունից:
12. Խիզախ տուրխտները բարձրացան Արագածի դադաթը:
13. Կապիտալիստական յերկրներում կրճատվում և բանվորները աշխատավարձը և ավելացվո՞մ՝ աշխատանքի ժամերը:
14. Ստալինյան Սահմանադրութեամբ ալ ձանագրված են մեր հոյակապ նվաճումները:
15. Իսպանիաի հեղափոխական ժողովրդին ոգնելու կոչին արձագանքեցին մեր միլի նավոր աշխատավ րձերը:

դ) Ղ բաղաձայնից հետո լսվում և գրվում և ց հետևյալ բառերում.  
 քաղց, քաղցկեղ,

դ) Ղ բաղաձայնից հետո, յերբ լսվում և ց, գրվում և ձ մնացած բոլոր անհնչունախոխ բառաձայններում.  
 Ուրիճակ՝

իղձ,	մաղձ,
ըղձալ,	մելամաղձոտ,
բաղձանք,	մղձավանջ,
դեղձ,	ջրահեղձ,
զեղձանիկ,	շնչահեղձ,
դաղձ,	փղձկալ,
գուղձ,	հեղձուցիչ և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Միրուն եր Հասոն, նոր ծաղկող արևի պես չքնաղ... Հապա նրա նվազելը: Նրա սրնգից հանած ձայները... այնքան գրավիչ, այնքան թիրահույզ, Ջայներ, վորոնք հոսում եյին մելամաղձիկ, քչքչում եյին վորպես հեղիկ վտակ, դայլայլում վորպես թիրահար սոխակ: (Վ. Փափազյան—Լուր-դարուր)
2. Կապիտալիստական յերկրներում աշխատավորները կիսաքաղց վիճակում են ապրում:
3. Կապիտալիստական յերկրների պրոլետարիատի բաղձանքն ու իղձն և՛ հաստատել խորհրդային իշխանություն:
4. Այսոր բերանացի սովորեցինք Պուշկինի «Ջրահեղձ» վոտանավորը:
5. Դաղձը հոտավետ բույս և: Մեր գյուղերում դաղձ են անվանում նաև խաղողի վորթի վրա վաթաթվող պարազիտ բույսերի մի տեսակին:
6. Քաղցկեղը (ոակ) վատ հիվանդություն և:
7. Դեղձանիկը գեղեցիկ թռչուն և:
8. Դեղձն ամենալնտիք մրգերից և:
9. Ատաղձագործը տնային կահկարասի յե պատրաստում:

ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1. ՀԱՆՅԱԳՈՐԾԻ ՀԵՏԱՊՆԴՈՒՄՆ ԻՆՔՆԱԹԻՈՎ  
 Մթնում եր: Ինքնաթիռն անցնում եր կոլտնտեսային դաշտի վրայով: Դաշտում կրակ յերևաց: Ոգաչուն ցած նայեց: «Յերեի տղա»



ները գիշերով դուրս են քշել ձիերին ու խարույկ են վառել»—մտա-  
ծեց նա:

Բայց ահա յերկու բոց, կարմիր լեզուների ձևով, սկսեցին  
բարձրանալ: Ողաչուն նկատեց, վոր վառվում են կոլտնտեսային հա-  
ցաճառիկի խուրձերը: Հնձված դաշտով, վախեցած իր շուրջը նայելով,  
վազում եր մի մարդ: Նա յերեք խուրձ ետ վառեց և, ձի հեծնելով,  
սլացավ դեպի անտառ: Ողաչուն սկսեց ցածրանալով մոտենալ հան-  
ցագործին, խուզող թոփքով: Ձին կատաղած ծառս յեղով և հետ  
սլացավ: Մտորի խլացուցիչ հունդոցը նրան մի կողմից մյուսն եր  
քշում: Հանցագործն ըստ յերևույթին վախենում եր ձին թողնել,  
նա շարունակում եր սլանալ դաշտով:

\* \*

Այնինչ, գաշտը շտապուհեց: Գյուղում ահազանգ տվին: Կու-  
տնտեսականները վազում եյին հրդեհի վայրը: Հանցագործը փորձեց  
անառուժ թաքնվել: Ինքնաթիռը կտրեց նրա ճանապարհը: Ձին  
հետ թռավ դեպի փոսը և թամքից ցած նետեց ձիավորին: Վերջինս  
կարողացավ վազել դեպի անտառ: Ողաչուն պտույտներ եր գործում:  
Նրա վրա, վախեցնում եր, ձևացնելով, թե վայրեջջ ե կատարում:  
Այդ պահին վրահասան կոլտնտեսականները և հանցագործին բռնեցին:  
Պարզվեց, վոր նա մարդասպան և բանդիտ Սամսոնենկոն և, վորն  
առաջ քանիցս դատվել ե:

Այս դեպքը պատահել ե Կիևի մարզի Կրասնիլովկա գյուղում:

2. ԱՌՅՈՒԾԻ, ԳԱՅԼԻ ՅԵՎ ԱՂՎԵՍԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

(ըստ Այգեկցու)

\* \*

Վորտեղից վորտեղ հանդիպել եյին իրար առյուծը, գայլն ու  
ազվեքը: Յերեքն ել քաղցած եյին և շնչակտուր հազիվհազ բարձրա-  
նում եյին գիմացի բլրակն ի վեր: Նրանց միակ իղձն ու ցանկու-  
թյունն եր՝ ձարել գոնե մի նապաստակ, մի հորթ կամ մի այլ անա-  
սուն և իրենց քաղցը հագեցնել:

Այդ եր նրանց համեստ բաղձանքը և ուրիշ վոչինչ:

Այս անուրջներով տարված, քաղցր-քաղցր զրուցելով, կամաց-  
կամաց առաջ եյին ընթանում, յերբ հանկարծ դիմացի ձորակում

նկատեցին մի խոյ, մի վոչխար ու մի գառ, վոր հոտից անջատվել  
եյին ու մնացել այդտեղ:

Յերեք գազաններն ել ուրախացան:

Առյուծը խրոխտ դեմք ընդունեց և առաջարկեց գայլին՝ յերեք  
կենդանիներին բաժանել իրենց մեջ:

Գայլը, լորձուհքը թափելով, բարդ խնդիրն անմիջապես լուծեց,  
առաջարկելով խոյը՝ առյուծին, վոչխարը՝ իրեն, գառը՝ ազվեսին:

Առյուծը փրփրակալեց և թաթի մի այնպիսի հարված հասցրեց  
գայլին, վոր գայլի աչքերը դուրս պրծան: Այլս գառնալով ազվեսին՝  
առաջարկեց բաժանել ավարը:

\* \*

Ազվեսը մի քիչ դադար առավ, ապա շողոքորթ, կեղծավոր կեր-  
պով մոտեցավ առյուծին և խոնարհաբար հայտնեց.

— Տեր արքա, արդեն բաժանված ե:

— Ինչպե՞ս, — հարցրեց առյուծը:

— Վոչխարը քեզ նախաճաշ, խոյը՝ ճաշ, իսկ գառը՝ ընթրիք:

— Ինչ լավ լուծեցիր խնդիրը, — ասաց առյուծը, — սակայն ասա, քեզ  
ձվ սովորեցրեց այդպես հեշտ լուծել այդ բարդ խնդիրը:

— Տեր արքա, ինձ սովորեցրին գայլի դուրս պրծած՝ աչքերը, —  
պատասխանեց ազվեսը, մի խորամանկ հայացք ձգելով գայլի՝ ար-  
ցունքով ու արյունով վողոված դեմքին:

4. «Դ» և «Թ» ԲԱՂԱՉԱՅՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ա) Ե բաղաձայնից հետո լսվում և գրվում ե Բ հետևյալ ան-  
հնչյունափոխ բառաժամերում:

Աբբուն,	հարբ,
թարբել,	աինթարբ,
հոբբ (կովի),	վոբբ (խաղողի),
շոբբ,	շողոքոբբ,
հեբբ,	մեբբ,
մեբբընդմեբբ,	յեբբելիկ,
յեբբ,	քրբմնջալ,
շքեբբ,	շոբբել,
զվարբ,	կարբ,
կիբբ,	մոբբի,
խրբին,	քեբբված,



քերթող, փաբամ,  
 պարթև, մորթադերծ,  
 մորթել, լուրթ(կապույտ),  
 խորթ (անհարազատ),  
 սաղարթ, թերթ և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կարմիր բանակը մեր յերկրի արթուն պահակն է:
2. «Պիտներ կանչ» և «Ավանդարդ» թերթերը ՀԼԿՅՅԾ կենտկոմի որդաններն են:
3. Զվարթ ու կենսուրախ են մեր մանուկները:
4. Մենք ամբողջ դասարանով բաժանորդագրվել ենք «Ավանդարդ» և «Պիտներ կանչ» թերթերին:
5. Սև ծովի ափերին աճում է մերձարեկադարձային փարթամ բուսականութուն:
6. Պիտներ Զվարթը վերցրել է կոլտնտեսութայան հորթերից մեկի շեֆութունը:
7. Մեր կոլեկտիվը լավ էր նախապատրաստվել և որինակելի կերպով մասնակցեց Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ հեղափոխութայան 21-րդ տարեգարձի տոնակատարութայան շքերթին:
8. Կոլտնտեսութայան աշխատանքի խաղողի վորթերն առողջ են ու փարթամ:
9. Սորճրդային Հայաստանի անտառները մեծ մասամբ սաղարթավոր ծառերից են բաղկացած:
10. Բաղմաթիվ նոր գյուղացիների շինարարութայամբ վերանում են գյուղացիական պարապմունքների շեֆերը:

բ) ր բաղաձայնից հետո մյուս բոլոր անհնչյունափոխ բառարմատներում, յեթ լսվում է ք, գրվում է գ.  
 Արեւա կ՝

մարգ,	յերգում,
վարգ,	կարգալ,
Վարգուշ,	յերգ (յերգակից),
Վարգան,	յերգիկ,
Վարգուհի,	հորգ (վարար),
Նվարգ,	վորգ (ճիճու),
բերգ,	հարգ (դարման),
բարգ,	արգուկ,
լյարգ,	արգար,

նյարգ,	արգարազատ,
զարգ,	արգարազատութուն,
խորհուրգ	խորհրդային,
արձակուրգ,	ժողովուրգ,
խորգուրորգ,	յերգմնադանց,
անձրևորգ,	պարապուրգ,
հորգացած,	արգյունք և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սորճրդային արգարազատութունը միակ ճշմարիտ արգարազատութունն է:
2. Զկա վոչ մի բերդ, վոր բոլշևիկները չգրավեն:
3. Ամեն տարի Կարմիր բանակը յերգում է տալիս՝ հավատարիմ ու անդավաճան ծառայել խորճրդային յերկրին ու նրա աշխատավորությանը:
4. Մենք ապրում ենք այն յերկրում, վորի ժողովուրդը Լենինի—Ստալինի հանճարով աղքատութայան և իրավազրկութայան անդունդից բարձրացված է ազատ և ուրախ կյանքի գազաթները:
5. Փառք ու պատիվ Ստալինյան հերոսներին՝ Պապանինի խրամբակին, վորոնք նոր գլուխ բաց արին բնությունը մարդու կողմից նվաճելու պատմութայան մեջ:
6. Այս գիշեր Ակորն կլի լապտերը ձեռին բարձրանում է ձորամըտի կածանով: Նա մենակ է. ինչ-վոր գործով ուշացել է, հեռմնացել ընկերներից:  
 Ծանր է ճամբան, խորգուրորգ, զառիվայր: Ակորի վտանները դիպչում են թափված քարերին, ընկնում են ջրի ու ցեխի մեջ, դեմ ընկնում դիք յելնող ժայռին: (Արագի—Վոյսերը)
7. Գյուղի վերջին խրճիթն էյի հասել, յերբ նրա դուռը ճռնչաց, գոմի ներսում կովի բառաչ լսվեց, մի քանի մանուկների ճիչեր ականջիս հասան, և առաջս դուրս յեկավ մի ալեգարդ ծերունի բահը ուսին: (Վ. Փափազյան—Արտը)
8. Վարդը ծաղիկների զարդն է:
9. հարթ նշանակում է ուղիղ (տափակ), իսկ հարգ՝ դարման (անասունների կեր):
10. Վորթ նշանակում է խաղողի վաղ, իսկ վորգ՝ ճիճու (անձրևորդ, յերկրորդ և այլն):
11. Հորթ նշանակում է կովի ձագ, իսկ հարգ՝ վարար (վարար անձրև, վարար գետ):



12. Յես պիտի դուրս գամ դեպի հրապարակ:  
 Առանց քնարի, անզարդ խոսքերով,  
 Յես պիտի գոչեմ, պիտի բողոքեմ,  
 Խավարի ընդդեմ պատերազմելով:  
 (Նալբանդյան — Մանկության սրեր)

գ) Ե բաղաձայնից հետո, յերբ լսվում ե ք կամ գ, գրվում ե  
 դ. այսպես ե գրվում նաև ընդ նախածանցով կազմված բառերում.  
 Որինակ՝

կենդանի,	անզամ,
խնդիր,	հանգ,
վանդակ,	շահախնդիրք,
ընդհանուր,	ընդամենը,
ընդարձակ,	ընդլրկել,
ընդունել,	անընդհատ,
ընդդեմ,	ընդդիմախոսություն,
ընդդիմադրություն,	ընդորինակել,
ընդլայնել,	ավանգ և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Զվարթը, Վարդանը և Վարդուհին կոմյերիտմիության թեկնածությունից անզամ փոխադրվեցին:
2. Ամեն զարնան սկզբին գյուղխորհուրդը վերանորոգում ե մեր հանդամիջյան ձանապարհները:
3. Մի ընդարձակ ու հարթ տարածության վրա յե կառուցված Սինթեակ կաուչուկի գործարանը:
4. Կենդանաբանությունից այսոր անցանք նյարդային համակարգությունը:
5. Յես խնդիր եմ դրել իմ առաջ գերազանցից ցած գնահատական չստանալ և վոչ մի առարկայից:
6. Իպրոցականների ընդհանուր ժողովում քննության առանք չամ. ԼԿՅՅՄ առաերորդ համագումարի վորոշումները դպրոցի մասին:
7. Նոր ուսումնական տարվա ընդունելությունները կապարվում են մինչև սեպտեմբերի 1-ը:

դ) Ե բաղաձայնից հետո մյուս բոլոր բառերում լսվում և գրվում ե ք. Որինակ՝

կանրեղ,	ընթրիք,
ընթերցարան,	ընթերցել,
ընթացք,	ընթացավարտ,
դասընթաց,	համընթաց,
ձեպընթաց,	զուգընթաց,
սըընթաց,	յենթակա,

խենք, մոնք — (աշակերտ),  
 յենքադրություն, յենքարկել և այլն:  
 ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մոսկվայից Լենինգրադ, վոր վեցհարյուր կիլոմետր տարածություն ե, ձեպընթաց գնացքն անցնում ե ընդամենը տաս ժամվա ընթացքում:

2. Մեր գրադարան-ընթերցարանը բաց ե ամեն որ և լիքն ե ընթերցողներով:

3. Յենթական անպայման դրված պետք ե լինի ուղղական հոլովով:

դ) Զայնավորից հետո լսվում ե ք, բայց գրվում ե ՚դ մի քանի բառերի մեջ.  
 Որինակ՝

ող,	վառող,
Ազամ,	Թագելոս,
դադար,	ողանցք և այլն:

Մյուս բոլոր բառերի մեջ լսվում և գրվում ե ք.  
 Որինակ՝

թուք,	մուք,
թաք,	լաք,
խուք,	սաք,
կիք,	կաք,
կովկիք,	ոքելան,
վաքսուն	ոքյակ
ուք,	բացոքյա,
ուքսուն,	ոքոց,
յոք,	վիքխարի,
յոքանասուն,	կազասուն և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Թշնամու դեմ մեր վառողը միշտ չոր ե, հրացանը՝ պատրաստ:
2. Դաշտային աշխատանքի դադարներին կոլտնտեսականները լրագիր են ընթերցում:
3. Դասամիջոցներին ողանցքները պետք ե բաց անել զասասենյակների ողը մաքրելու համար:
4. Պիտանքները ձամբարում որվա մեծ մասը՝ բացոթյա յեն անցկացնում:
5. Մենք հրձվում ենք մեր ձեռք բերած վիթխարի հաջողություններով:



- 6. Մեր յերկրում վաթսուեն, յոթանասուեն, ութսուեն տարեկան ձերունիներն անգամ իրենց յերիտասարգ են զգում:
- 7. Խուժերը վտանգավոր են նավերի համար:
- 8. Կովը, վոչխարը, գոմեշը, այծը կաթնասուն կենդանիներ են:

**ԹԵԼԱՂՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ**

**1. ԱԶԳԱՅԻՆՆԵՐԻՆ**

Նման չեմ յես ձեր սիրելի պոետներին,  
 Ձեր քուրմերին յերգս ոտար, մի խորթ հնչյունս:  
 Յես չուզեցա հաճոյանալ ձեր սրտերին,  
 Այս առորյա, մեղկ ու թունոտ մզձավանջումս:

Յես յերգեցի գործարանի սև աշխատանք,  
 Յեզ ճարճատված պողպատ մեջքերն անիվի տակ:  
 Ստեղծագործ հրաշքները կոշտ ձեռքերի,  
 Հաղթանակող թափը նրանց վնճ պայքարի:

Սթափման յերգ յես յերգեցի լքվածներին,  
 Յեզ հրավեր՝ պատրաստ լինել զարթնոց որին:  
 Յես յերգեցի աշխարհ ցնցող խենթ փոթորիկ,  
 Վորոտ ու շանթ տեղալուց յես՝ խաղաղ յերկիրնք:

**2. ԻՄ ՅԵՐԱԶԱՆԻՐԸ**

(Մ. Դեմ չենկոյի գրածից)

Յես մի նամակ ստացա Յիմլյանսկի ստանիցայի խաղողաբույժներից:

Նրանք ինձ գրում են.

«Իս, Մարիա, առաջինը ձակնդեղից բարձր բերք ստացար՝ հեկտարից 500 ցենտներ: Հինգ հարյուրականներն այժմ հաղարավորներ են: Նրանք դեռ ավելի կշատանան: Յերկիրը շատ շաքար կունենա: Իսկ մենք ձեռնարկել ենք յերկրին տալու շատ նշանավոր խաղող: Յեզ շաքարն է մերը և խաղողը, զրանք անվրեպ գնդակներ են մեր յերկրի թշնամիների համար»:

Գնդակների մասին շատ ճիշտ ետաված: Յերը յես ու իմ ընկերուհիները պայքարում եյինք ժողովուրդների մեծ առաջնորդ ընկեր Ստալինին տված իմ խոստումը կատարելու համար, մենք այսպես

եյինք դատում. վորքան ավելի հարստանա մեր յերկիրը, այնքան ավելի նա ամուր և ահարկու կլինի թշնամիների համար:

Յես հայրենիքիս ավեցի խոստացածս 500 ցենտները: Բայց այդ միայն սկիզբն է: Այժմ յես ուսանում են Գյուղատնտեսական ինստիտուտում, համառորեն տիրապետում եմ գիտությանը: Ինձ հետ պարապում են լավագույն պրոֆեսորները:

Վորպես հայրենիքիս հավատարիմ դուստր՝ այս ուշադրության և ուրր փոխարեն յես շատ բան եմ ուզում անել:

Հենց դրա համար ել մտա Գյուղատնտեսական ինստիտուտ ուսանելու:

**3. ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՎԱՐԳԵՐԸ**

(Հատված)

Հաֆիսն ապրում եր մի փոքրիկ տան մեջ, Իրանի Շիրազ քաղաքում, վոր կոչվում եր Իրանի վարդ, վորովհետև, ինչպես վոր վարդը բոլոր ծաղիկներից գեղեցիկ է, այնպես ել Շիրազը Իրանի ամենալավ քաղաքն եր:

Բանաստեղծի ընակարանը շատ փոքր եր՝ ուներ միայն յերկու լուսամուտ և մի փոքրիկ դուռ: Սենյակում կային յերկու բազկաթոռ և մի սեղան: Հաֆիսը զարդարանք չեր սիրում: Տան արևելյան պատի յերկարությամբ վարդի թփեր կային տնկած, վորոնք ամբողջ տարին վարդեր եյին տալիս: Հաֆիսն ինքն եր խնամում այդ վարդերը, անվանելով նրանց իր միակ ուրախությունը և հարստությունը:

**4. ԹՇՆԱՄԻՆՆԵՐԸ**

\* \* \*

Ճակատամարտը վերջացավ: Հեռվում լսվում եյին թնդանոթների դրդյունը և հաղթանակող զորքերի համազարկերի ու փողերի ձայնը: Կովի դաշտում կոտորված սայլերի, թափթփված հրացանների և փըշըրաված սրերի միջև ընկած եյին սպանվածների կույտեր, մարդկանց և ձիերի դիակները, այդ կույտերի միջից տեղ-տեղ լսվում եյին վիրավորների խոր հառաչանքներ:

Մի չորացած առվի յեղերքին, խիտ յեղինջի մեջ, իրարից վոչ հեռու պառկած եյին յերկու զինվոր, յերկուսն ել ծանր վիրավոր:

Նրանց համազգեստները տարբեր եյին: Մի քանի ժամ առաջ նրանք դեռևս կատաղի թշնամիներ եյին, իրար դեմ կանգնած, պատրաստ սվիններով միմյանց խողխողելու, իսկ այժմ...

Այժմ լուռ նայում եյին իրար և այնպես ուզում եյին խոսեն, զոհն մի բան առեն, բայց ավաստ վոր իրար լեզու չեյին հասկանում:



Հանկարծ ավելի յերիտասարդը՝ դժվարութեամբ մի յերկու քայլ հազիվ սողնաող տարով, մոտեցավ իր թշնամուն և մեկնեց նրան իր գինու սրվակը. հետո աշխատեց թաշկինակով դադարեցնել նրա վերքից հոսող արցունքը: Բայց վոչինչ դուրս չեկավ. ինքն ավելի ևս թուլացավ ու պահկեց:

Յերբեմն մեկը, յերբեմն մյուսը ճիգ եյին թափում մի փոքր վեր բարձրանալու համար. ոգնութուն եյին կանչում, բայց նրանց կանչերին պատասխան եր տալիս միմիայն փորը ճղված մի ձիու ազնկաուր խրխինջը:

Վերջապես յերիտասարդը հոգնած և թուլացած քուն մտավ: Վրա հասավ պարզկա գիշերը. ցուրտ քամին գալիս, փչում եր հեռավոր լեռներից: Կովի գաշտում հառաչանքներն ավելի ու ավելի եյին նվազում. վիրավոր ձին ել չէր խրխինջում:

Ավելի տարեքավոր վիրավորը կես գիշերին կրկին մի փորձ արավ նստելու, բայց խզուր, արգեն բոլորովին արնաքամ եր յեղել: Մահվան սառնութունը սկսել եր պատել նրա մարմնի անդամները:

Աչքը գցեց իր հարևանի վրա: Յերիտասարդ վիրավորը քնած եր և կուշ եր յեկել գիշերվա սոսկալի ցրտից:

— Պիտի սառչի,— անցավ հասակավորի մտքով,— անպատճառ պիտի սառչի. խեղճ, ինչքան ել յերիտասարդ ե:

\* \*

Յերբ արշալույսի դեմ վիրավորներին հավաքող խումբը մոտեցավ նրանց, յերիտասարդը զարթնեց, ուղեց բարձրանալ ու զարմացավ, վոր իր վրա մի վերարկու կար գցած:

Նայեց շուրջը, նայեց հարևանին. Հարևանը մեռած եր և պահած առանց վերարկուի. նրա վերարկուն եր իր վրա:

Ի՞նչ չարչարանք պիտի կրած լիներ այդ հոգևարքի մեջ արնաքամ յեղած մարդը, մինչև վոր կարողանար վերարկուն հանել իր վրայից և ծածկել մոտը պահած վիրավորին:

Յերբ յերիտասարդին բարձրացնում եյին, վոր տանեն, նա խորին հուզմունքով ու յերախտագիտութեամբ նայում եր «Թըշնամու» տանջված ու կարկամած յերեսին ու հայացքը հեռացնել չեր կարողանում նրա կիտախուփ, մարած աչքերից:

### 5. ՄԱՀՎԱՆ ՈՂԱԿԸ

\* \*

Ողաչու Նեվերովին հանձանարարված եր թոչել Դագոտանի բարերի վրայով և հայտնաբերել Հաջի Համիդի բանդան:

Նեվերովը թոչում եր և ուշադրութեամբ նայում ներքև:

Հանկարծ տեսավ, վոր մոտորը վատ ե աշխատում:

Պեռ ե իջնել:

Նա սկսեց մի վոքրիկ մարդագետին, ցած իջավ և սկսեց մոտորը նորոգել:

Հանկարծ նրան մոտեցան յերկու լեռնցի և ատրճանակները դեմ տնելով ասացին:

— Ձեռքերդ վեր: Գնանք:

Նեվերովին տարան և ներկայացրին Հաջի Համիդին:

Հաջի Համիդն սկսեց իր հարց ու փորձը.

— Ինչո՞ւ յես յեկել մեզ մոտ: Թոչուդ կոտորվել ե:

— Այո, կոտորվել ե:

— Հրամայում եմ, վոր թոչուդ նորոգես և ինձ ողում մանածես: Իսկ յեթե չես նորոգի, գլուխդ կթոցնես:

\* \*

Նեվերովն ողանավը նորոգեց, կարելի յե թոչել:

— Իսկ յեթե մտածես ինձ ձեզ մոտ տանել, յես ել կկորչես, բայց քեզ ել կզնդակահարես,— ասում ե Համիդը:

Համիդը նստում ե ողանավի մեջ, իսկ նրա ընկերները հավաքվում են մեքենայի շուրջը. Նեվերովն ասում ե, վոր պետք ե պտուտակը ձեռքով շարժել:

Հինց վոր նրանցից մեկը բռնում ե պտուտակը, Նեվերովը վեր ե բարձրանում:

Բանդիտը կոտրված ձեռքը բռնելով՝ օարօսփելի ձիչ ե արձակում:

Նեվերովը հետ նայելով տեսնում ե, վոր Հաջին ունքերը խոփոտած նստած ե և ատրճանակը դեմ ե արել իր մեջքին:

Մեքենան պտուտում ե մարդագետնի շուրջը: Հաջին ուրախուրթս նայում ե ներքև, իր ընկերներին և գլուխը թափ տալիս:

\* \*

«Այ դու օտտանա,— մտածում ե Նեվերովը,— չի վախենում: Սպասիր, հիմա կսկսես յերգել»:

Հանկարծ ողաչուն մահվան ողակ ե անում:

Աչքերը չոած Հաջին, ատրճանակը դեն ե գցում և բռնում մեքենայից:

Նեվերովը հետ ե նայում:



—Հաջին պատրաստվում է հարձակվել նրա վրա:

Նորից մահվան ողակ: Մեքինան շուռ ե գալիս մեջքի վրա և պլանում է, անիվները վեր դարձված:

Ինչպես հոկա թևերը բացած սև թռչուն, ցած է թռչում Հաջին...

Նեվերովը տեսնում է, թե ինչպես նա պտույտներ գործելով, ընկավ գետնի վրա և մնաց անշարժ...

5. «բ» և «փ» ԲԱՂԱՉԱՅՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ա) Ի բաղաձայնից հետո լսվում և գրվում է փ հետեվյալ անհնչյունափոխ բառաձայններում կամ իրև արմատ գիտակցվող բառերում.

արփի (արև), փրփուր,

Արփիկ, փրփրաբաշ,

յեփին (յերանգ), տարփանք,

յեփներանգ:

բ) Ի բաղաձայնից հետո մյուս բոլոր անհնչյունափոխ բառաձայններում և դրանցով բարդված բառերում, յեքե լսվում է փ կամ բ, գրվում է բ.

Որինակ՝

արբիչ,	արբանյակ,
յերեսարբիչ,	հարբել,
յեբ,	հարբեցող,
յերբմն,	արյունարբու,
յերբք,	արբենալ,
նուբ,	արբունք,
նրբություն,	ձեբակալել,
նեբան,	վոբ,
նեբող,	գարբին,
բոբ,	գարբնոց,
բոբոքել,	ուբաթ,
բոբոսնել,	հարբուխ

և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վտակեփայլ արփին իր շողերը տարածեց յերփներանգ ծաղիկներով զարդարված մարգալեանի վրա:

2. Սրբնթաց գետակի փրփրադեղ ալիքները բաղխվում էյին ավերին ու թավալլոր անցնում, գնում:

3. Ինչ-վոր ջրի հեղեղատներ էյին հոսում աջնակ, ջրակույտեր

փայլվում: Մի գուցե այդ ջրերը նրա արտի միջով են անցել, ամեն ինչ սրբել-տարել:

(Վ. Փափաղյան—«Արտը»)

4. ԱՐՏԱՎԱՋԴ

Ջարկեցեք, դարբիններ, կոանը սալին,  
Ջարկեցեք կոանը՝ շղթայքն ամրանան,  
Անիծյալ արքայի կապանքն ամրանան.  
Ջարկեցեք, դարբիններ, կոանը սալին:

(2- Հովհաննիսյան)

5. Յերբ ավարտեց, մի քանի վայրկյան լուռ եր, անշարժ, աչքերը տակավին հառած արեգակի շողերին, վորոնք հետզհետե գունատվում էյին:

Յես չկարողացա ինձ դապել, վորեկորված գոչեցի.  
— Կեցցես, Լևոն, կեցցես...

Բայց նա չլսեց: Անշարժ եր, նուրբ շրթունքները, վորոնք միշտ սեղմված էյին, դողդողում էյին Նկատելի: Հանկարծ նրա ձեռները թուլացան, գլուխը մի փոքր թեքվեց ուսին, մանդոլինան հանդարտիկ սահեց կրծքից և ընկավ նիհարիկ ծնկների վրա: Յեվ նրա դեպի շողերը հառած աչքերի մեջ նշմարեցի արցունք: (Շիրվանզադե—«Արտը»)

6. Լուսինը յերկրի արբանյակն է:

7. Կապիտալիստական յերկրներում ձերբակալվում, աքսորվում և հալածանքի յեն յեն թարկվում բանվոր դասակարգի ամենալսվազույն զավակները:

8. Դաշնակների ժամանակ Հայաստանը դարձել եր թալանի, ավերի, վորբերի, սովյալների ու հիվանդների յերկիր:

9. Արարկիլի արհեստանոցներում ներգաղթած հայ աշխատավորները պատրաստում են լավագույն յերեսարբիչներ:

10. Կապիտալիստական արյունարբու գիշատիչները նոր համաշխարհային սպանդ են նախատպատրաստում:

11. Մենք յերբեք հեռին շարքելում չենք լինի:

12. Հնոցում բորբոքվում է կրակը:

գ) Պ բաղաձայնից հետո լսվում և գրվում է փ հետեվյալ բառերում. հղփանալ, փողփողել:

դ) Պ բաղաձայնից հետո անհնչյունափոխ բառաձայններում և դրանցով բարդված բառերում, յեքե լսվում է փ կամ բ, գրվում է բ. Որինակ՝

յեղբայր, աղբուր,  
հորեղբայր, մորեղբայր,



բողբոջ, բողբոջել,  
շեղբ, շեղբակույս,  
կողբ, կուղբ և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մայիսի 1-ին շքերթին վողկողում ելին ալկարմիր դրոշները:
2. Մայիսի մեկին ամբողջ աշխարհում դողում են բոլոր շա-  
նապործողներն ու բանվորների քրտինքով հղիացածները:
3. Խորհրդային Վրաստանի, Աբխազիանի և Հայաստանի աշխա-  
տավորների յեղբայրական կապն անխախտ է:
4. Մեր գյուղխորհուրդը մոտակա աղբյուրների ջուրը խողովակ-  
ներով հասցրեց գյուղի կենտրոնը և գյուղի մի շարք թաղամասերում  
ջրի ձորակներ կառուցեց:
5. Նախկինում կեղտի ու աղբի բույն գյուղն այսօր դարձել է  
կուլտուրական և մաքուր:
6. Չմուսն քնից զարթնած ծառերն առողջ ու զվարթ բողբոջներ  
են արձակել:
7. Կուղբը կրծող կենդանի յե. նրա մարթին թանկ է գնահատ-  
վում:
8. Նոր կողբը գտնվում է Յերեվանի մերձակայքում:
9. Հորյեղբոր շեմքում մյուս ուրը ծեփին  
Դավիթ կանգնեց աղեղը ձեռքին.  
— Հորյեղբայր Ոհան, ինչո՞ւ չես առել՝  
Իմ հերը վորսի սար է ունեցել,  
Այժամ կա ենտեղ, յեղջերու, կխտար.  
Վեր կաց, հորյեղբայր, տար ինձ վորոտար:

(«Սասունցի Դավիթը» — Հ. Թումանյան)

ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1. ԱՐՏԻՍՏԸ

(Հատված)

— Ահա և՛ ձեր արտիստը, — առաց Իցկոն՝ ցույց տալով սեղանի  
ծայրը:  
Այնտեղ նստած էր Լևոնը: Նա կիթառ երնվագում և զվարճաց-  
նում սեղան սկիցներին: Չնայելով իր չքավորութանը, յեռ միջև  
այդ արը նրան կեղտոտ չեյի տեսել: Գոնն շապիկը միշտ անարատ էր,

ձեռներն ու յերեսը մաքուր, կոշիկները վաքած, փայլուն: Իսկ  
այժմ նա նմանում էր գործարանական բանվորի:

Իմ յերևալը նրան զարմացրեց: Նա չընդհատեց նվագելը, բայց  
չափազանց շփոթվեց, կարմրեց: Նավաստիները նրան լսում էին  
ուշադիր, թեև արդեն բոլորն էլ հարբած էին: Իրանց հիացմունքն  
արտահայտում էին գոռում-գոչյուններով: Յերբեմն մեկը կամ  
մյուսը վեր եր կենում, գրկվում ու համբուրվում նրա հետ կամ  
մեջքին դարկելով, արտասանում էր.

— Մալադեց, Լեա, մալադեց...

2. ՃԱՄԲԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԳՐՈՇԸ ԾԱԾԱՆՎԵՅ ՀՍԳԻՍ ԼԵՈՍՆ ԳԱԳԱԹԻՆ

\* \* \*

Հուլիսի 14-ին, յերբ գեղածիծաղ արփին գեռ իր վոսկեղոծ ճա-  
ռագաթխները չեր սփռել մեր բարձրարերձ լեռների վրա, մեր փոք-  
րիկ արշավախումբը, թվով քսան յերկու հոգի, կազմ ու պատրաստ  
ընկալ ճամփա: Ճանապարհն անցավ հետաքրքրական: Մեզանից  
առաջ ուղարկեցինք յերեք պիտներ, վորոնք պայամանական նշան-  
ներով մեզ առաջնորդում էին գեպի առաջ: Ահա նրանց գծած պայ-  
մանական ուղիքը, վորը նշանակում է՝ թե այս ուղղութեամբ յեկեք:  
Ահա նրանց թողած նամակը, վորի մեջ գրված է՝ «Այստեղից ջուր  
վերցրեք» և այլ պայամանական նշաններ: Մենք ճանապարհին գյու-  
ղերով անցնելիս տեսանք, թե ինչպե՞ս մեր ունեվոր, յերջանիկ կու-  
տնտեսականները ժրաջան կերպով աշխատում էին իրենց ընդարձակ  
դաշտերում:

\* \* \*

Հասանք Բաշ-գյուղ: Նստեցինք աղբյուրի մոտ, հանգստացանք,  
ճաշեցինք և գրույց լսեցինք մեր յերկրի խիղախ բազենների՝ ընկեր-  
ներ Գրոմովի, Յուսուպովի և Դանիլինի թոխչի մասին: Ապա առաջ  
ջուր վերցնելով՝ սկսեցինք բարձրանալ Հադիս լճուր: Անտահման վո-  
գեվորված մեր յերկրի հերոսների՝ Վոդուպյանովի, Չկալովի, Գրոմովի  
և մյուսների հերոսութեան սրինակով, ձեռքներումս բռնած կարմիր  
դրոշը, աչքերս հառած դեպի գագաթը, բարձրանում ենք: Խիստ շագը  
զժվարացնում էր մեր վերելքը:

— Դե, տղերք ջան, — առում է ժորժիկը, — յեթե հյուսիսային  
բեվեռի խիտ բուքը, սառնամանիքը չկարողացան արդելք հանդիտա-  
նալ մեր յերկրի հերոսներին՝ մեր մեծ հայրենիքի կարմիր դրոշն  
այնտեղ ծածանելու, ապա մի՞թե շողը մեզ արդելք կհանդիտանա  
մեր դրոշը Հադիսի գագաթին ծածանելու: Վաղեվորված մեր հերոս-



Ներքի հաղթանակով, արագացնում ենք քայլերը: Հարյուր մետր և օ մենք Հաղթի գազաթիւն ենք: Ժորժիկն իր ձեռքով դրոշն ամրացնում է լեռան գազաթիւն:

Յերգելով սկսում ենք ցած իջնել: Յերեկոյան յերփնեւրանդ ծագիկներէ ծագիկները ձեռքներին մտանք ճամբար, ուր մեզ գլխամփոքեցին ճամբարականները:

### 3. ԱՌՅՈՒԾՆ ՈՒ ՄԱՐԴԸ

Ըստ Այգեկցու

\* \*

Համարձակ առյուծը՝ կենդանիներէ արքան, կուշտ ուտելուց հետո, հենց նոր եր սառնորակ աղբյուրից ջուր խմել և ուրիշ կենդանիներին արգելք չլինելու համար քաշվել եր մի կողմ ու նստել ճանապարհի վրա՝ խոնկերով լի:

Բարդ մտքերի մեջ խորասուզված, աչքերը հառած դեպի ընդարձակ ու հարթ գաշտը, նա մի վայրկյան սկսեց նիւրհել:

Հանկարծ սթափվեց հեռվից լավով վողբից և աղիողորմ ճիչերից: Մաքերը բորբոքվեցին: Արյունարբուն բորբոքվեց այդ փոքրոգի ու վախկոտ լաց ու կոծից, վողբ ու ճիչերից:

Քիչ հետո կենդանիներէ մի հոծ բազմութիւն, գլուխը կորցրած, ներքեի ճանապարհով փախչում-գնում եր: Առյուծը շհամբերեց և անկապողորդ ձայնով գոչեց.

— Այդ ում անից-եք զարհուրել և ուր եք փախչում, վողորմելիներ:

Ուղտը մոտեցավ և խոնարհաբար հայտնեց.

— Տեր իմ, դուք ել փախեք, յեթե վոչ, ահա մեր հետեւից գալիս և մարդը, անպայման վտանգի կենթարկվեք:

Առյուծը քահ-քահ ծիծաղեց հիմար ուղտի հայտարարութեան վրա, լիաթոք աչ շնչեց և խնդրեց ուղտին իրեն խորհուրդ չտալ:

Ուղտը հեռացավ:

\* \*

Այսպէս բյուրավոր կենդանիներ յերկշտ հայացքներով անցան, գնացին, կրկնեցին ուղտի առածները, բայց առյուծն անդրդվելի մընաց: Վերջապէս յերեկաց մարդը: Առյուծն ուղղակի կարեց նրա առջն ու ասաց.

— Բոլոր կենդանիները փախչում են քո անից, իսկ այժմ պատրաստվիր. պետք է մենք կովենք:

— Կովելը՝ կովենք, հարգելի արքա, բայց չե՞ վոր քո զենքերը քեզ հետ են, իսկ իմո՞ տանը. ապա ուրեմն թույլ տուր՝ յես ևս զենքեր վերցնեմ:

— Համաձայն եմ, — ասաց առյուծը:

— Այդ դեպքում, — ավելացրեց գյուղացին, — վորպէսզի դու չըփախչես, թույլ տուր քեզ կապել այս ծառից, մինչև յես գնամ տուն, զենքերս վերցնեմ գամ:

— Համաձայն եմ, — պատասխանեց առյուծը, — միայն յերգվիր, վոր անպայման կգաս:

Մարդը յերգվեց:

Առյուծը թույլ տվեց իրեն կապել ծառից: Յերբ մարդն առյուծին պինդ կապեց ծառից, վերջացրեց, վերցրեց մի փայտ և սկսեց անխնա ծեծել առյուծին:

Առյուծը գլուխը կախեց և արցունքոտ աչքերով ասաց.

— Յեթե, իրավ, դու յես մարդը, ապա ուրեմն լավ ծեծիր ինձ, վորովհետև այս խելքին այդ է արժանի:

### 6. «Գ» և «Բ» ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ա) ր բաղաձայնից հետո գրվում և արտասանվում է ք հետեւյալ արձաններում և վորպէս արձան գիտակցովոյ բառերում.

հե՛հել, կի՛հ,  
քր՛իջ, քր՛րել,  
նե՛հին, քու՛րե:  
նե՛հուսա,

բ) ր բաղաձայնից հետո, յեթե լավում է ք, գրվում է գ մյուս բայտ անհնչյունափոխ բառարձաններում.

Ռրինակ՝

թարգման,	Սարգիս
յե՛րգ,	կարգ,
մի՛րգ.	կարգապահ,
արգելք,	հարգելի,
Մարգար,	մարգ,
Գեղորգ	պարգև և այլն:

### ՎՍՏԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մեր դասարանում բարձր է գիտակցական կարգապահութիւնը:



2. Յերգն ու պարը մեր անբաժան ընկերներն են:

3. Ռուսական մեծ բանաստեղծ Պուշկինից հայերեն թարգմանված են «Կապիտանի աղջիկը», «Դուբրովսկի», «Ճանապարհորդութուն դեպի Արզրում» և բազմաթիվ այլ գրվածքներ, հեքիաթներ ու վտանավորներ:

4. Հայաստանը, Վրաստանը և Ադրբեյջանը մրգառատ յերկրներ են:

5. Մեր ընկերներից՝ Սարգիսը, Մարգարը, Թորգոմը, Գեվորգը և Նարգիզը վորպես գերազանցիկներ պարգևատրվեցին:

6. Ուսուցիչների և աշակերտների միջև պետք է բարձր լինի փոխադարձ հարգանքն ու սերը:

7. Մարգարիտը հանում են ծովի խորքից:

8. Վաչ մի արգելք ու խոչընդոտ չի կարող խանգարել մեր հագթական առաջընթացը:

9. Այսօր մենք ունենք տասնյակ ու հարյուր հազարավոր զարգացած, կուլտուրական և տեխնիկական զինված արդյունաբերական ու կոլտնտեսական կազմեր:

10. Մի յերգ գիտեմ յես աննման

Հորը մուրճի թափի նման,

Վորոտի պես հատու, խրոխտ,

Մի յերգ գիտեմ յես աննման:

( Հ. Հակոբյան—«Աշխատանքի յերգը» )

### ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

#### 1. ԳՍՐՈՒՆԸ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Ծագում է մանուկ արևը գարնան  
Կովկաս լեռների ձյունի պառնեղից,  
Զարթնում են մեկ-մեկ սարերն աննման  
Զմռան անվրդով քնի մշուշից:  
Ահա Լալվարի վիթխարի ուսին  
Բազմում է արփին թարմացած ուժով,  
Մաքեր ու ձորեր իրար յերեսին  
Նայում են, ժպտում ամպի մշուշով...  
Վերջին ձյուններն ել արդեն հալ ընկան,  
Արտառվեց խկույն լեռների հսկան,  
Ամեն մի ձորից աղբյուր է հոսում,  
Ամեն մի թփից բյուրբյուր է խոսում.  
Յե՛վ դալար հովիտ, և՛ ժայռի կրճեքեր,  
Արձագանք տալով, զարուն են հնչում.

Զմռան փարախից հովվական յերգեր

Զեփյուռի թևով սարերն են թռչում:

Ծաղկալից աշխարհ անվերջ ձորերի

Բացվում է, ժպտում կռկռից զվարթ,

Փարթամ գեղության վոգին Գուգարքի

Շնչում է գարնան բույրով անաղարտ.

Ամպերն ել իրար համբույրներ տալով,

Զվում են կայտառ, Լալվարը գրկում,

Առաջին անգամ խիտ վորոտալով,

Գուգարք աշխարհին վողջույն են յերգում:

#### 2. ՅԵՎՍ ՄԻ ՆՈՐ ՀԱՂԹԱՆԱԿ

\*  
\*\*

Զորս հարյուր տարի առաջ կաթուղի յեկեղեցին արգելեց փորել  
Պանամայի ջրանցքը, վոր պետք է բաժաներ Հյուսիսային և Հարավային  
Ամերիկան իրարից և միացներ Սաղաղ և Ատլանտյան ովկիանոսները:  
Տերտերներն ասում էին. «Այն, ինչ աստված միացրել է, մարդը չի կարող բաժանել»:

Տերտերները չէին ցանկանում, վոր մարդիկ իշխեյին բնության վրա.  
Դա նրանց վնաս էր:

Ճարական Ռուսաստանում ժողովրդական մի յերգում ասվում էր.

«Զի կարելի մայր Վոլգային,

Մայր Վոլգային ստիպել,

Վոր նա փոխի այն ընթացքը,

Վոր աստված է սահմանել»:

Սակայն բուլղեիկներն ստիպեցին Վոլգային, վոր նա իր ընթացքը  
փոխի և իր ավելորդ ջրերի մի խոշոր մասը բերի կարմիր  
մայրաքաղաքը՝ Մոսկվա:

\*  
\*\*

1937թ. մայիսի մեկին աշխարհի ամենամեծ կառուցումը՝ Մոսկվա—  
Վոլգա ջրանցքը լրիվ ավարտվեց և առաջին գեղեցկուհի շոգենավը  
ժամանեց Մոսկվա:

Մեծ Ստալինի առաջարկով բուլղեիկները ճահիճների, լեռների և  
պնտառների միջով ջրային նոր ճանապարհ կառուցեցին ութսուն-  
հինգ մետր լայնությամբ և հարյուր քսան ութ կիլոմետր յերկարու-  
թյամբ՝ Վոլգայից մինչև Սորհրդային Միության սիրա՛ր՝ Մոսկվա:

Այդ ճանապարհով դեպի Մոսկվա կգան մարդատար և ապրանք-  
քատար շոգենավերը Սորհրդային Միության հինգ ծովերից՝ Բալթիկ  
Սպիտակ, Կասպից, Սև և Ազովի:



Այդ ջրանցքը խմելու ջուր կտա Մոսկվայի չորս միլիոնանոց բնակչութեանը, գործարաններին ու ֆաբրիկաներին:

Այդ ջրանցքի վրա կառուցվելու յեն ութը նոր հիդրոէլեկտրակայան, վորոնք լույս կտան շրջակա կոլտնտեսութեաններին և կաշխատեցնեն հարյուրավոր մեքենաներ:

\* \* \*

Մոսկվա Վոլգա ջրանցքի կառուցումը տեղի չորս տարի: Պահանջայի ջրանցքը, վոր ընդամենը ութսունմեկ կիլոմետր յերկարութեան ունի (վորից յերեսուն հինգ կիլոմետրը բնական լիճ է) կապիտալիտոնները կառուցեցին յերեսունհինգ տարվա ընթացքում: Այդ ջրանցքի շինարարութեան ընթացքում անչափ դեղձարարութեաններ յեղան, ահագին թվով մարդիկ դատի արվեցին և այդ որվանից «Պահանջ» բառը նշանակում է նաև ժուլիկութեան: Այդ ջրանցքի ափերին թաղված են վաթսուն հազար բանվորներ ու ճարտարապետներ:

Սուեզի ջրանցքը, վոր միացնում է Միջերկրական ծովը կարմիր ծովի հետ և ընդամենը հարյուրվաթսունչորս կիլոմետր յերկարութեան ունի, կառուցվեց տասնմեկ տարվա ընթացքում: Այս ջրանցքի կառուցման ժամանակ ել միլիարդներ գողացվեցին, տասնյակ հազարավոր բանվորներ ու ճարտարապետներ սովի ու հիվանդութեան զոհ գնացին:

Իրան հակառակ, Սորհրդային Միութեան այս պանծալի հաթխանակի ժամանակ հազարավոր նախկին հանցագործներ վերադատարակվեցին, ազնիվ աշխատանքի վարժվեցին ու դարձան Սորհրդային մեծ Միութեան ազնիվ ու ոգտակար քաղաքացիներ:

Բոլշեիկները կամքով, մեր յերկրի բանվոր դատակարգի կամքով որ ավուր փոխվում է մեր յերկրի դեմքը: Սոցիալիզմի յերկրում որ ավուր ապրելն ավելի հեշտ է դառնում, կյանքն ավելի լավ, ավելի ուրախ:

3. ԼՐՏԵՍԸ ԽԵՂԱԳԱՐԻ ԳԻՄԱԿՈՎ

Ամառանոցային գնացքը մոտեցավ սահմանամերձ կայարաններից մեկին: Վագոնից դուրս յեկավ շքեղ հագնված մի աղամարդ:

Մի քանի բոպե կանգնած մնալով վագոնի մոտ՝ նա ուղղվեց սահմանի կողմը:

— Գաղաքացի, ձեր փաստաթղթերը, — կանգնեցրեց անձանոթին սահմանապահը: Անձանոթը նայեց սահմանապահին և վսշինչ չպատասխանեց: Յերբ կրկին անձնագիր պահանջեցին, անձանոթը հանկարծ սկսեց վայրագորեն քրքշալ: Այնուհետև կարծես բարկանալով սկսեց հիտերիկաբար աղաղակել:

— Իուր յեղազարգել եք: Ի՞նչ անձնագիր է պետք ձեզ: Միթե չգիտեք, վոր անձնագրաթերթերը վաղուց վերացված են:

Առաջին պահին սահմանապահը շփոթվեց:

Ի՞նչ է սա՛ յեղազա՞ր, թե...

Անձանոթին բռնեցին: Նա յերեք որ շարունակ վարպետորեն եր խաղում իր դերը, յեղազար ձևանալով: Սակայն նրան չհասցրեց յարել յորհրդային սահմանների հավատարիմ պահապաններին: Չորրորդ որը նա յոտստովանեց, թե մտադիր է յեղել անցնել սահմանը լրտեսական նպատակով: Նա վորոշել եր յեղազար ձևանալ, հույս ունենալով, վոր նրան իսկույն կարձակեն:

7. «Ղ և Խ» ԲԱՂԱՉԱՅՆՆԵՐԻ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ա) Անհնչյունափոխ բառարմատներում և դրանցով բարդված բառերում բաղաձայններից տուայ յսվում և գրվում է յս նեթելյայ բառերում:

ախս (ցալ),	բախս, բախսավոր:
գմրուխս,	յերախսիք, ապերախս,
ծխտել,	պանդուխս,
սախսակ,	գրատախսակ,
թախս,	ուխս (պայման)
ախսոր,	ուխսագրուծ,
թուխս,	վախճան, անվախճան,
գրախս,	նախուս,
դժոխս,	թուխս, թխպոտ,
ապուխս,	լախս,
սխրագործութեան,	խրոխս և այլն,

Ինչպես և գուլխս վերջավորվող հատուկ անուններում, որինակ՝ Հայկանդուխս, Սանդուխս և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սրոխտ առաջ են շարժվում կարմիր բանակի զորաոյունները:
2. Ի՞նչ նախշուն ու սիրուն են մեր դաշտերն ու անտառները գարնանը:
3. Մավառնակները ձախրում են լուրթ յերկնակամարում:
4. Բախտավոր ու յերջանիկ են յորհրդային յերկրի աշխատավորները:
5. Աննախընթաց են մեր հերոս ողաշունները սխրագործութեանները:
6. Անժխտելի յեն մեր հոյակապ նվառումները:
7. Չմրուխար թանկագին քար ե:



- 8. Գարնանն ու աշնանը յերկինքը հաճախ և թխպած լինում:
- 9. Թորախտը տարափոխիկ հիվանդութունն է:
- բ) Մնացած բոլոր դեպքերում անհնչյունափոխ բառաբանումներում և դրանցով բարդված բառերում բաղաձայնից առաջ, յերբ լսվում է խզամ դ, գրվում է դ.

Որինպի՝

ադբ, ադբակույտ,	հադբ,
ադս (կեզտ), ադսոտ,	հադբանդամ,
ադբյուր,	չդջիկ,
թուղբ,	խեղդել,
մադրել,	ուղս(կենդանի)
ադբատ,	վոդբ,
հադրել,	ուղսապան,
վոդբագին,	ուղդակի,
շեղջ,	գաղսնի,
բղխել,	ծաղբ,
մաղձ,	բաղձանք,
մեղի,	իղձ,
մեղբ,	գուղձ,
դաղձ,	դեղչ, գեղդչել,
վոդջ,	խեղդուկ և այլն:

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Մտակվա-Վոլգա ջրանցքի շինարարութունը իս սում է Ստալինյան հնգամյակի հաղթանակի մասին, Լենինյան ինդուստրացման պլանի հաղթանակի մասին, կոմունիստական կուսակցության գլխավոր գծի լիակատար հաղթանակի մասին: («Պրավդա»):
2. Վոլջույն Հյուսիսային բևեռի վերայով Մոսկվա — Հյուսիսային Ամերիկա անվայրելի թռիչք կատարող հերոս ուղաչուներ՝ Գրոմովին, Յումաշեվին և Դանիլինին:
3. Արտասահմանից Սորհրդային Հայաստան ներդաղթող հայ աշխատավորները մոռացած իրենց անցյալ վոդրալի ու անուրախ որերը, Սորհրդային իշխանության ամենալալն աջակցությամբ բերկրալից ու յերջանիկ կյանք ստեղծեցին, իրենց համար:
4. Կուլտանեսային կարգերը վերջ են տվել աշխատավորության դարավոր աղքատությանը և տեղեկ են ունեվոր ու բախտավոր կյանք:
5. Աղբյուր, աղբյուր ջան, աղբյուր, ջուրդ գլգլան աղբյուրը (Միրաբյան — «Լավարի վորբ»)

- 6. Կադնի ծառն ապրում է մինչև 2000 տարի:
- 7. Ո. դտը սակավապետ և շատ դիմացկուն կենդանի յի:

**ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ**

1. Մ Ո Ւ Մ Ո Ւ  
(Հատված)

Յերբ հասավ և մտավ իր խուցը, փրկած շանը դրեց թախտի վրա, ծածկեց իր հաստ վերնադղետով, ապա նախ վազեց գոմը ծըղնոտի, հետո խոհանոցը՝ մի բաժակ կաթի: Վերադարձավ, վերաբերուն զգուշությամբ հետ քաշեց, ծղնոտը փռեց շան տակ ու կաթը դրեց տախտակի վրա՝ նրա առաջ: Սեղձ շնիկն ընդամենը յերեք շաբաթական եր: Աչքերը նոր բացվել էին. մի աչքը նույնիսկ փոքր ինչ մեծ եր թվում մյուսից: Բան լակել գեռ չեր կարողանում. դողում եր և աչքերը կուչ ածում: Գերասիմը յերկու մասով բռնեց նրա գլուխը և դունչը մեկնեց կաթին: Փոքրիկ շունը հանկարծ սկսեց ազահաբար լակել կաթը և փնչացնել միաժամանակ: Գերասիմը նայում եր նրան, նայում և հանկարծ ծիծաղից թուլանում... Ամբողջ գիշեր նա քաշ յեկավ այդ փոքրիկ շան հետ. սրբեց, չորացրեց նրան, ծածկեց և վերջապես քնեց նրա կողքին մի ուրախ և խաղաղ քնով:

2. ՉԱՊԱՅԵՎ  
(Հատվածեր)

\*  
\*  
\*

Լեռներով, նեղ արահետներով, հանգիպող գետերի ծանձաղուտներից անցնելով, վորովհետև նահանջող թշնամին պայթեցնում եր կամուրջները, անցնելով անձրևի տակ, ցեխի միջից, առափոտյան ցողով, յերեկոյան մառախուղի միջից, մի որ կուշտ, յերկու որ քաղցած, կիսամերկ և համարյա բոկոտն, վիրակալած վտաններով, հիվանդ, հաճախ վիրավորված, շարքերից չհեռանալով գնում էին նրանք հաղթականորեն, գնում էին գյուղից գյուղ, գնում էին անվճատ, անհաղթ, ամեն ինչից համբերատար, թշնամուն դիմադրելու համար՝ հպարտ և հաստատակամ, գրոհի ժամանակ՝ անվեհեր, խիզախ ու ահարկու, թշնամուն հալածելու ժամանակ՝ համառ: Կովում էին հերոսներ զինա, մեռնում վորպես կարմիր ասպետներ, գերի էին ընկնում ու նահատակներ ի նման մեռնում տանջանքներից ու խոշտանգումներից: Այսպիսի հուսալի ու ժով չեր կարելի չհաղթել. միայն



հարկավոր եր կառավարել այդ ուժը: Չապակը կառավարելու շատ մեծ ձիրք ունենր՝ հատկապես այդպիսի մասնա, այդպիսի մոմենտում և այն վիճակում, վորի մեջ գտնվում եր նա այդ որերին:

\* \*

Կոնվենսը յերբեմն լինում եյին այնքան լուրջ ու կատաղի, վոր վերացնում եյին ամեն մի չնթաղրություն, ամեն մի վտահու-  
թյուն այն մասին, վոր սկսվել է սպիտակ բանակի քայքայումը: Ամենա-  
կայուն սպիտակ գնդերը մասնակցում եյին այդ ճակատամարտերին: Ընդհանուր մասսայի համեմատությամբ զբանք սակավաթիվ եյին, բայց հիանալի կովում եյին և հիանալի տեխնիկա ունեյին: Չիշմայի մոտ տեղի ունեցած կոնվենսյան քան լուրջ եր, վոր կարմիր գնդերի մի քանի վաշտերում մնաց ընդամենը յերեսուն-քառասունական հոգի: Կովում եյին կատաղի ու վորովորված: Չեռքի ուղեբերով հարձակ-  
վում եյին զբանապատ գնացքի վրա, դիակներ եյին փռում վողջ ճանապարհին, վազում եյին հրեշի հետեից, «ուռն» գոռում, գնդակ-  
ների պես նետում եյին զարհուրելի սպիտակ շշերը: Յերբ յերևում եր զբանապատ ավտոն, շղթաները պառկում եյին յերեսնիվայր մարտիկները գլուխները չեյին բարձրացնում գետնից և այդ կերպ, ազատվում եյին, վորովհետև զբանապատը պառկածներին չէ կարող խփել... Նա ճեղքում եր շղթաները, շրջում թիկունքում, կրակում եր, բայց ապարդյուն, իսկ յերբ փախչում եր, նրա հետեից նույնպես վազում եյին, ինչպես զբանապատ գնացքի հետեից: Վազում եյին ու նրա վրա սպիտակ շշեր, — նռնակներ նետում:

8. «Ռ» և «Բ» ԲԱՂԱՉԱՅՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ

ա) Ե Բաղաձայնից առաջ Ե կառոյ Ե գրվել միայն այն դեպքում, յերբ բառարմասի հնչյունափոխության հետեւում Ե-ի և Բ-ի միջի ձայնա-  
վորք գուրս Ե րնկնում.

Որինակ՝

գարուն-գարեանային,  
արյուն-արեաշաղխ,  
վերին-վերեառուն:

Անացած դեպքերում Ե-ից առաջ սովորաբար լսվում և գրվում Ե ո.

Որինակ՝

առնել, առնչություն,  
առնետ, խառնել:

սպառնալ,	սպառնալիք,
առնակուն,	առնորակ,
նռնենի,	տռնի:
ձեռնունայն,	ձեռնամարտ,
ձեռնամուտ,	լեռնային,
խառնափնթոր,	խառնակիչ,
դառնություն,	բռնություն,
դառնալ,	բառնալ,
դառնուկ,	խառնել,
դռնակ,	նռնակ,
ձեռնարկ,	փռնել,
բռնել,	մեռնել,
յեղեռնագործ,	վոռնալ և այլն

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Չկա վոջ մի ձեռնարկություն, վորտեղ ստախանովյան շար-  
ժումը հրապարակ հանած չլինի արտադրության առաջարկում աշ-  
խատող տասնյակ ու հարյուրավոր նորանոր առաջավոր մարդիկ:
2. Մեր կոլտնտեսությունը վարնանային աշխատանքների պը-  
լանը լրիվ կատարեց:
3. Յերեվան քաղաքի ջուրն ստացվում Ե կոտայքի շրջանի  
Ղրխբուլաղ կոչվող վայրի սառնորակ աղբյուրներից:
4. Նռնակը պայթուցիկ արկի մի տեսակն Ե:
5. Գողն Ել մի կոնից, գելն Ել մյուս կոնից,  
Աչքդ թեքեցիր — բանիդ տերը չեռ.  
Քաշում են տանից, քաշում են դռնից,  
Ու չես իմանում, վոր կողմը թռչես:  
Թե տանուներին զանգատ եմ գնում,  
Բան չեմ վառտակում բացի դուշմանից,  
Գողերի հեաքը իր տունն են տանում,  
Համեցեք, դիվան ուղիք սրանից:

(Ն. Թ. ումանյան — «Հառաչանք»)

բ) Մյուս բաղաձայններից առաջ ու-ն գրվում Ե միայն հետեւյալ  
բառերի մեջ.

ուռկան, ուռձանալ,  
կուռք, առվույտ,  
խապոս, կովան,



կառչել, մատուցակ (գինի տվող),  
կաթնեկ, հաչակ և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Առվույտն անստուգանքի սննդարար կեր է:
  2. Ուռկանը ձկնորսական պարագա յն:
  3. Մեր տրամադրութեան տակ առկա յեն բոլոր հնարավորութեանները՝ ավելի լավ սովորելու, ավելի արագ թափով առաջ գնալու համար:
  4. Մեր յերկրի ինքուստրացումը, մեր գործարանների և ֆաբրիկաների վերակառուցումը, նոր տեխնիկայի ու նոր բարձրորման առկայութեանը ստախանովյան շարժումը ծնող պատճառներից մեկը հանդիսացան:
- գ) Մյուս բոլոր բաղաձայններից առաջ անհնչյունափոխ բառաւատաներում յերբ լսվում է *ա*, պիտի է գրել *բ*.  
Որինակ՝

արծաթ,	արծիվ,
մարգ,	արս,
դարգ,	բերդ,
բարգ,	կարթ,
լյարգ,	կիրթ,
նյարգ,	հարթ,
շրջան,	հարգ,
թերթ,	հորգ,
յերթ,	հարթ,
մերթ,	գուրա և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Աորհրդային մարդիկ գիտեն, թե զեպի ուր են գնում, թե ի՞նչի համար են աշխատում և պայքարում: Սրա մեջ է կոմունիզմի անպարտելիութեան մեծ ուժը, մեր հայրենիքի հզորութեան անսպառ աղբյուրը:
2. Գրոմովը, Յուժովը, Դանիլինը մի անգամ ևս դրսևորեցին խորհրդային մարդկանց, ստալինյան կոփված քի մարդկանց հիմնական հատկութեանները, նրանց բնավորութեան գեղեցիկութեանն ու վեհութեանը:
3. ԽՍՀՄ-ն արկտիկայում կատարում է ոգերեվութաբանական արժեքավոր աշխատանք, վորը մեծ նշանակութեան ունի, վորով-

հետեվ Յեվրոպայի, Ասիայի և Ամերիկայի յեղանակի պայմանները մեծ չափերով կախված են արկտիկական շրջաններում տեղի ունեցող ոգերեվութաբանական փոփոխութեաններից:

4. Յերբ արևն առաջին անգամ ժպտաց լեռան արծաթափայլ կատարին և իր վոսկեզոծ շողերը սփռեց բազարթախիտ ու ցողապատ անտառի վրա, շեփորների վազորդյան կանչի հետ մեկտեղ կրկին արթնացավ պիտերական ճամբարը:

գ) *ա*' ն կարող է ընկնել բաղաձայնից առաջ, յեթե բառաւատի հնչյունափոխութեան հետևանքով դրանց միջի ձայնավորը դուրս է ընկնում և կամ *ա*-ով վերջավորվող բառն անանցվում կամ բարդվում է. Որինակ՝

- առթիվ—առիթ,
- պառկել (պառիկ բառից),
- կավարար—կարիվ,
- փառք (արմատն է՝ փառ),
- կառք (արմատն է՝ կառ),
- սպառվել (արմատն է՝ սպառ),
- կշռել և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Պիտերական ճամբարում ամենակարևորը ուսումն է, պետք է ժամանակին վեր կենալ, ժամանակին պառկել քնելու, մահճակալի վրա պառկած չկարդալ, ժամերով չմնալ ջրի մեջ, ուտել վորոշ ժամերին, պահպանել առողջապահութեան կանոնները, ուտելուց առաջ ձեռները լվանալ, քրտնած վիճակում սառը ջուր չխմել:

(Կրուպոկայայի նամակից)

2. Փառք ու պատիվ Ստալինյան դարաշրջանի հերոսներին:
3. Հողը ձեռքից խլել էյին, թողել էյին, վոր մաքրեր, հերկեր, թողել, վոր անպետք հողն իր քրտինքով փափկացներ, համառ կամքով բերրիութեան հասցներ, և ապա հանկարծ մի որ վճիռ տվել, անտառի պահպաններ ուղարկել, ձեռնել էյին նրան, հողից դուրս շարտել ու թողել, վոր ջարդված, ընկճված՝ նստեր արտի կողքին ու լար, և լար կռկմալից, աղիտորմ ու հուսահատ...

(Փափազյան—Էնդի աշխատավորը)

ե) *ա*-ով վերջավորվող արմատի կրկնությամբ կազմված բարդ բառեր մեջ առաջին *ա*-ն դառնում է *բ*.  
Որինակ՝



բարբառ, Վարժապետ,  
 Թրթիս, զրգիտ,  
 սարսուռ, մամուռ և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Առաջին իսկ դասարանից պետք է սխտեմատիկ պայքար տանել՝ դավաճարարառով խոսելու դեմ:

2. Հասոն քարերին եր դողացնում, Սև ջրի ալիքները հուզում, բնությունն եր քարացնում, զեվյուսին վողբացնում, ամեն ինչ շարժում, հրեշտակների նախանձը զրգոում:

(Փափազյան - Վուր-դա-լուր)

3. Մի բույս կանգ առանք բարձր ժայռի կատարին, վորի ներքեվում խուլ զղրդյունով հոսում եր գետը: Մեր մարմնով սարսուռ անցավ և մենք շտապեցինք հեռանալ այդ վտանգավոր տեղից:

զ) Նմանաձայնությամբ կազմված բառեր գրվում են ուսով:

Որինակ՝

մամուլ,	ճոճուլ,
խախտալ,	կոկոալ,
գոռգոռալ,	զոզոալ,
զոզոալ,	թոթոալ,
սասալ,	չոչոալ,
հահալ,	ֆոֆոալ և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կատուն մամուռ է:
2. Թուխը կրթիկրթում է:
3. Զրվեժը չոչոալով թափվում է ժայռից:
4. Ամպերը գոռգոռում են:
5. Ագռավը կոկոում է:
6. Կրո, կրո, կոկոան, կոունկները հա թան, կոունկների թևի տակ, յեկավ ամառ մեր դռան:

է) Ոսարագգի բառերի սկզբում գրվում է ու:

Որինակ՝

ուեթիմ,	Ռոստով,
ուեալիզմ,	Ռիգա,
ուեկորդ,	Ռուսթավելի,
ուեակցիա,	Ռազին,
ուենտա,	Ռիմա,

ուումբ,	Ռորերա
ուեպրեթիա (ճնշում),	Ռուբեն,
ուենեզաա,	Ռոզալիա,
ուամանտիզմ,	Ռուսոտ,
ուեալ,	Ռումինիա,
ուեֆերենդում,	Ռուզովի և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նոր Սահմանադրությունը մացնում է համաժողովրդական հարցում՝ ոեֆերենդում:

2. Ռուսթավելին վրացական մեծանուն բանաստեղծ է, վոր ապրել է մեղանից յոթ հարյուր հիսուն տարի առաջ:

3. Ռորերա Ֆուլտոնը առաջին շոգենավ հնարողն է:

4. Սորհրդային Ռուսաստանը խորհրդային ֆեդերատիվ սոցիալիստական հանրապետություն է:

5. Յեկեղեցին կապիտալի հավատարիմ ոգնականն է: Նա իմպերիալիստական ոեակցիայի առաջին շարքերում է գտնվում, նա խոքով ու գործով ոգնում է հեղափոխական շարժումը խեղդելուն:

6. Կրեթականները, հանդիսանալով ոեակցիոն, շահագործող դասակարգերի հենարանը, պայքար են մղում մտքի ազատության և ամեն մի առաջադիմության դեմ:

ը) Ոսարագգի բառերի մեջ ո գրվում է 1 և 6 բաղաձայններից առաջ և կրկնատու ո-ով վերջավորվող բառերի մեջ:

Որինակ՝

վառնա,	վառլեն,
Մառնա (գեա Ֆրանսիայում),	
Բեռլին,	ժուռնալ,
Կառլ	տերրոր—տեռոր,
Բեռն (Շվեյցարիայի մայրաքաղաքը):	

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բեռլինը Գերմանիայի մայրաքաղաքն է:
2. Մառը խոշոր լեզվաբան գիտնական է:
3. Բեռնը Շվեյցարիայի մայրաքաղաքն է:
4. Մառնա գետը Սենայի աջակողմյան վտակն է և գտնվում է Ֆրանսիայում:



5. Վառնա քաղաքը գտնվում է Բուլղարիայում և նավահան-  
գիստ է Սև ծովի ափին:

բ) Մնացած դեպքերում բառամիջում գրում ենք ր, յերբ բառն  
ուսացրի յե.

Որինակ

պրոլետարիատ Փրանսիա,  
սերիա, Սիրիա,  
ոսիննատացիա, Պոստուզալիա,  
թևոսիա, Բոսադիլիա,  
գիբեկցիա, Արգենտինա և այլն:  
Վ.Ս.Բ.ՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Պրոլետարները բոլոր յերկրների, միացե՛ք:
2. Մեր դպրոցի գիրեկցիան ժամանակին լավագույն կե բազմ  
նախապատրաստել եր նոր ուսումնական տարին:
3. Բրազիլիայում է գտնվում աշխարհի ամենաշրառատ գետը,  
Ամազոնը:

### ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

#### 1. ՎՈՉԵՍՈՒԻ ԿԻԹՈՂ

(Կրճատ)

Վերջացավ արդեն վոչխարի կիթը,  
Կաթսաներ տարան թարմ կաթով լիքը.  
Մեկն էլ գդակը շարժելով ողում,  
Դեռ գառնարածին՝ «յեկ հեյ» է կանչում:  
Յերկար չանցնելով, քարի գագաթին  
Գառների կայտառ հոտը յերեկաց,  
Խառնվելով նրանք մայրերի հոտին,  
Բերկրանքի հույզով մայում են ցրված.  
Կանչում են, բայում գառն ու մաքին,  
Անուշ ձայներով փնտռում են միմյանց.  
Վորը գտնելով իրա գառնուկին,  
Ծծել է տալիս փայելով քրտանց.  
Վորը խաղում է մոր հետ կուշտ փորով,  
Վորն էլ մնում է տխուր մայելով.  
Յեվ ամեն անգամ գառը մեր տալիս,  
Կարծեա թե անուշ համերգ են տալիս:  
Բայց շուտ ջոկելով մայրերը գառնից,  
Հովիվը քշեց նրանց դեպ արոտ.  
Մահակն էլ ուսին՝ գառները բինից  
Տարավ գառնարած սառն աղբյուրի մոտ:

#### 2. ՉԱՊԱՅԵՎ

(Հատված)

Նրանք, չապակցիներն. իրենց յերջանիկ եյին համարում հենց  
այն պատճառով, վոր Չապակի գործակիցներն եյին: Չապակի փառքի  
ցոլքերը նրանց վրա էլ եյին ընկնում: Ստենկա Ռազինի գնդում  
կային յերկու հերոսներ, վորոնք կոխիներում կորցրել եյին վոտները,  
նրանք սողում եյին փայտե «վոտներով»... Վոչ մեկը չեք ուզում  
թողնել իր փառապանծ գունդը: Ամեն մեկը յերջանկություն եր հա-  
մարում, յերբ գալիս եր Չապակը ու գեթ մի քանի խոսք ասում  
նրանց: Գնդի համար նրանք բեռ չեյին՝ կովի ժամանակ գնդացի-  
ների վրա եյին աշխատում:

Կանցնեն մեր հերոսական որերը, ու մարդիկ չեն հավատա դրան,  
հեքիաթ կհամարեն, մինչդեռ, իրոք, այդպես է յեղել, յերկու բոլորո-  
վին անվոտ մարտիկ բանակայիններ աշխատել են կոխիներում գնդա-  
ցիների վրա: Յեղել է նաև մի կուշտ, տեսողությունից բոլորովին  
զուրկ մի մարտիկ: Յեվ խորհրդային իշխանությանը նվիրված այս  
նահատակը, կուշտ կարմիր բանակայինը, վոր հարգում եր Չապակի  
քաջագործություններն իբրև քրքություն, լավագույն պատմողն եր  
այդ քաջագործությունների:

#### 3. ՄԱՅԻՍԸ ԳՅՈՒՂՈՒՄ

(Հատված)

Ի՞նչ ախորժալուր է հովվական քրնդի ձայնը մայիս ամսին,  
յերբ նա մի քարի վրա նստած, կամ լեռան գլխին թիկնած՝ սուլում  
է ինքնաբավական: Դու չկարծես, թե նա իր քրտի ուրախության  
համար է միայն ածում. վոչ, դրանով հասկացրեց իր սիրելի հոտին,  
թե ժամանակ է հավաքվել իր չորս կողմը և գնացքն ուղղել դեպի  
փարախը, ուր սպասում են թիրուխիկ ու խատուտիկ գառները՝ լսելու  
իրենց «իրելի մայրիկները մայունը: Ո՛հ, ի՞նչ հրաշալի տեսարան,  
ի՞նչ քաղցր ըոպե յե այդ գառները լսում են հեռվից մոր ձայնը և  
անհամբերությունից ուզում են կտրատել դուռը, դուրս թափվել  
դիմավորելու այն ամենաթանկագին եյակին, վոր իրենց համար կուրծ-  
քը լիքը ախորժահամ կաթն է բերում: Մինչև վոր հովիվը կբանա  
դուռը, ուլերը — այն ճարպիկ, պատիկ սատանաները — վորք է մնում  
բարձրանան նրա ուսերը:



Նախանձելի յի այտեղ հովվի գրությունը. այդ գառն ու ուլի անուշ մկկոցը, այժ ու վոչխարներն հարայեցոցը նրա սրտի վրա անպատմելի տպավորություն են անում. վոչ մի յերաժշտություն չի փոխարինիլ այդ համերգին. վոչ մի մարդ չի կարող բոլոր ցավերը շմոռանալ այն միջոցին, յերբ գառնուկներն իրենց փափրիկ զմակները շարժելով և ուլերն իրենց անհանգիստ պոչուկը խաղացնելով՝ միմյանց գլխով են դիպչում:

Գառն ու վոչխարն իրար են խառնվում, և յուրաքանչյուրը նրբանցից աշխատում և գանել իր մորը կամ ձագին:

4. Ա. Գ. Վ. Ա.

(Հատված)

Ահա նրանք ընկան մի լճակ, մի խաղաղ լճակ, վորի յերեսին լողում էյին բադիկներ, իսկ հատակում ապրում էյին գորտեր, կեկոան գորտեր: Լավ եր լճակը կաթիլներն համար. նրանք յերբեմն թռչում, նստում էյին լողացող բադերի մեջքին, և այդ ժամանակ նրանց թվում եր, թե զրոսնում են նավակով: Յերբեմն ել կպչում էյին վստաստող գորտերի մեջքին և ուրախանում անսահման:

Բայց Աքվան շատ չմնաց լճակում, ընկավ լճակից դուրս յեկող գետակի գիրկը, և գետակը դուրս բերեց նրան իր ջրերի հետ: Գետակը հոսում եր հարթ տեղերով, մեղմ ու հանդարտ և հետզհետ լայնանում, խորանում իր մեջ թափվող առվակներից ու վտակներից: Նրա ափերին յերևում էյին գյուղեր, գործարաններ ու քաղաքներ. նրա վրա լողում էյին բեռնավորված մեծ շոգենավեր:

Աքվան ու իր ընկերները սաստիկ հետաքրքրվում էյին այդ բոլորը տեսնելով, ուզում էյին մի լավ գննել այդ ամենը, սակայն չէյին կարողանում կանգ առնել, վազում էյին առանջ, առանջ...

Յեկ հանկարծ, մի գեղեցիկ, մի պայծառ որ Աքվան նկատեց, վոր իրեն առաջ սփռված և մի մեծ, կանաչավուն փայլուն տարածություն: Աքվան ճանաչեց իր հայրենի ծովը, ցնծագին ընկավ նրա գով ալիքների մեջ ու գրկախառնվեց նրանց հետ, այն հով ու աղի ալիքների հետ:

Միրելի մանուկներ, գրոսնեկ կք դուք արդյոք ծովի ափին: Լսե՛լ եք ալիքների շփշփոցն ու թշշոցը: Այդ Աքվան և, վոր ընկերներին պատմում եր իր անվերջ ճամփորդությունների մասին:

(Հատված)

Ճըռռ... ճըռռ... ճըռռ... ճըռռ...

Լսե՛լ եք են թախծալի ճըռռոցը, վոր ծաղկի բուրմունքի ու կանաչի թարմության հետ խառնված հոսում և զարնան դաշտերի յերեսով:

Իհարկե, լսել եք, և ինչքան եք լսել: Դեռ ով գիտի, գուցե եղ ժամանակ մի ծառի կամ թփի տակ ել պնդեց խորատուզվել եք ջինջ կապույտ յերկնքի խորության մեջ, մաքուր, թեթե յերազների մեջ, իսկ չորս կողմերդ ծավալվում են համատարած՝ ճըռռ... ճըռռ...

Հանդի կամ դաշտի ծղրիղն և իր անթիվ ու անհամար ընկերներով:

9. «Մ»և«Ե» ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐԻ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ա) Բոլոր օրքնային բաղաձայններից առաջ (բ, պ, փ) լսվում է գրվում և մ.

Որինակ՝

ամբար,	համբերել,
ամբարտակ,	համբույր,
ամբիոն,	Համբարձում,
ամբոխ,	Փամբակ,
ամբարտավան,	ճամբար,
ամբառտանել,	կշտամբել,
ամբիծ,	բմբոստ,
ամբողջ,	կաղամբ,
ապստամբ	խմբակ,
բամբիո,	զամբյուղ,
բամբյուն,	բմբուլ,
բամբ,	ամպ
բամբակ,	ամպրոպ,
զամբարան,	բմպել,
զամբուլ,	լամպա,
դամբ,	ամփոփել,
թամբ,	զամփո,
թուամբ,	ճամփա,
թամբուկ,	համբավ և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Որոհրդային Միության հերոս ողաչունների համբավը տարածվել և ամբողջ աշխարհով մեկ:



2. Կոլտնտեսականների ամբարները լիքն են ամեն տեսակ բարիքներով:

3. Հայ գրող Վրթանես Փափազյանի լավագույն գրվածքներից ե «Ըմբոստի մահը»:

Բ)Բ, պ, փ, բաղաձայններից առաջ & կգրվի միայն առ նախաձայնը կազմված բառերում.

Որիցեպ

Բ	Պ	Փ
անբերրի	անպատճառ	անխույթ
անբավ	անպետք	անփառունակ
անբնական	անպատեհ	անփոխարինելի
անբուժելի	անպաճույճ	անփորձ
անբաժան	անպարտելի	անփոփոխ
անբան	անպայման	անփետուր
անբովանդակ	անպտուղ	անփրփուր
անբավական	անպիտան	անփարոս

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Խորհրդային իշխանությունը միլիոնավոր հեկտար խոպան ու անբերրի հողեր դարձրեց ծաղկալից դաշտեր ու պարտեզներ:

2. Անբավ հարստությունների տեր ե մեր յերկիրը:

3. Հզոր ու անպարտելի յե մեր պանծալի Կարմիր բանակը:

**4. Ա Ն Ո Ւ Շ**

(Հատված)

Ձմռան մի գիշեր կար մի հարսանիք,  
 Հրճվում էր անդուսպ ամբոխը գյուղի.  
 Գյուղն էյին իջել հովիվ պատանիք՝  
 Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի:

(2. Թումանյան)

5. Ինչպես մի հեղիզ վեր կենար հանկարծ,  
 Յերկնքի մթնած ամպերից իջներ,  
 Ինչպես փոթորիկ սաստիկ սրընթաց,  
 Գյուղից ալացան մի խումբ կտրիճներ:

(2. Թումանյան)

6. Յեզ իմ համբավը կանցնի Ռուսիայով մեծ և անծայր  
 Յեզ կկոչի ամեն մեկն ինձ իր լեզվով սեփական  
 Թոռը հպարտ՝ սլավոնի, ֆիննը նահ, դեռ խավար  
 Տուեզուսն անգամ, և զավուխն՝ ստեպաների բարեկամ:

(Գ ու լ զ ի ն)

**ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ**

**1. ԲԱՐԻԿԱԳՆԵՐԻ ՎՐԱ.**

(Հատված)

Բարիկաղները կառուցումը վերջապես ավարտվեց և մինչև անգամ կարմիր դրոշակ տնկեցին: Ամեն մի պաշտպան ստացավ յերեսուն փամփուշտ: Շատերն իրենց հետ վառոդ ունեյին և սկսեցին պաշարի համար նոր փամփուշտ պատրաստել: Տակառով վառոդը զբրված էր սեղանին՝ դռների առաջ: Այդ տակառը պահում-պահպանում էյին:

Ամբողջ Փարիզում անընդհատ թնդում էր թմբկահարությունը: Նրա աղմուկը մեթ հեռանում էր, մերթ մոտենում, բայց նրա վրա արդեն քիչ էյին ուշադրություն դարձնում: Բոլորը հանդիսավոր ու լուրջ կերպով լցնում էյին հրացանները, պահապաններ էյին դնում: Փողոցներն ամայի էյին, անցուկարձ չկար: Տները կանգնած էյին համր ու մեռած: Վերահաս աղջամուղջում զգացվում էր ինչ-վոր սարսափի մոտեցում: Ձինված ապստամբները հանգիստ ու վճռական սպասում էյին:

Յեկավ գիշերը, բայց հանդիստը ժոշնշով չխանգարվեց: Յերբեմն միայն հասնում էր հրաձգության հեռավոր ու խոռոնաշփոթ աղմուկը: Բարիկաղների հիսուն զինված պաշտպաններն սպասում էյին վաթսուն հազարանոց կառավարական զորքի հարձակման:

**2. Ա Վ Վ Ա**

(Հատված)

Ողբ հետզհետե սառչում էր, և Աքվան զգում էր, վոր ինքը ծանրանում է, ծանրանում. ահա պոկ յեկավ ամպից և մյուս կաթիլների հետ թռավ ու վայր ընկավ...

Գիտե՞ք ուր: Ծո՞վը, ցամաքի՞ վրա:

Վոչ ծովը, վոչ ել կոշտ հողի վրա, այլ ինչ-վոր կահուկ, թալշանման, անուշաբույր անկողնի մեջ: Պառկեց Աքվան ու քուն մտավ: չէ վոր նա սաստիկ հողնած էր ճամփորդությունից: Ամբողջ գիշերը քնած էր Աքվան: Հետևյալ առավոտը, հենց վոր արևն յելավ ու իր

Թեղաղբությունների ձեռնարկ—6



շողերը գցեց Աքվալի վրա, Աքվան զարթնեց, բացեց աչքերը և նայեց՝  
 տեսնի, թե վերտեղ և քնել գիշերը, և այդ ի՞նչ բուրավեա կարմիր  
 անկողին և, ուր ինքը ննջել և մուշ-մուշ:

Ի՞նչ եք կարծում, վերտեղ եր քնել Աքվան:  
 Մի մեծ, կարմիր վարդի անուշահոտ ծոցում:

VI. ԱՄԱՆՑՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ա) Թե նախածանցներ և թե վերջածանցներ գրվում են բառերի  
 նեց միասին.

Որիմակ՝

ՆԱԽԱԾԱՆՑՆԵՐ

ընդ — ընդունակ,	ընդհուպ.
արս — արսահանել,	արսադրել.
բաց — բացառու թյուն,	բացատրել.
գեր — գերազանցիկ,	գերակատարել.
հակ — հակադրել,	հակահարված.
համ — համաձայն,	համալտարան.
մակ — մակընթացու թյուն,	մակագրել.
յենք — յենքադրել,	յենքակա.
ներ — ներգործել,	ներգրավել.
պար — պարբերություն,	պարփակել.
վեր — վերադառնալ,	վերլուծել.
ան — աննման,	անպատճառ.
ապ — ավերախոտ,	ասլաշնորհ.
ս — սհաճ,	սմարդի.
դժ — դժգույն,	դժգոհ.
չ — չտես,	չխոսեկան.

ՎԵՐՋԱԾԱՆՑԵՐ

ակ — լճակ,	տնակ.
ուկ — գառնուկ,	ձագուկ.
իկ — մայրիկ,	Վաչիկ.
ուեի — ընկերուեի,	ուսուցչուեի.
երեն — հայերեն,	ոուսերեն.
անոց — արհեստանոց,	ջուլհականոց.
ոց — ամրոց,	դպրոց.
ասան — Հայաստան,	Ուզբեկաստան.

արան — դասարան,  
 ացի — իսպանացի,  
 եցի — գործուեցի,  
 ցի — յերևանցի,  
 ական — քաղաքական,  
 ովին — գլխովին,  
 բար — ընկերաբար,  
 պես — ամբողջապես,  
 որեն — բողջեիկորեն,  
 ային — խորհրդային,  
 ավոր — լուսավոր,  
 բորդ — յերկրորդ,  
 երորդ — հինգերորդ,  
 եղեն — մրգեղեն,  
 ե — փայտե,  
 եղ — ուժեղ,  
 ող — գրող,  
 աս — գունաս,  
 ոս — փշոս,  
 կոս — փութկոս,  
 իչ — գրիչ,  
 վես — ծաղկավես,  
 որդ — ճանապարհորդ,  
 ուրդ — ժողովուրդ,  
 պան — պարտիզպան,  
 ուքյուն — միություն,  
 յակ — հնգամյակ,  
 ացու — վարպետացու,  
 ք — խոսք, պետք,  
 յուն — սոսափյուն,  
 ուն — հնչուն,

գրադարան.  
 քաղաքացի.  
 նորքեցի.  
 վաղարշապատցի.  
 կոլտնտեսական.  
 լիովին.  
 բարեկամաբար.  
 տնտեսապես.  
 հարվածայնորեն.  
 հարվածային.  
 կանոնավոր.  
 յերրորդ, չորրորդ.  
 վեցերորդ, և ասներորդ.  
 ապակեղեն.  
 քարե.  
 համեղ.  
 սովառնող.  
 քնաս.  
 յուղոս.  
 ցաւկոս.  
 բրիչ.  
 բուրավես.  
 անցորդ.  
 խորհուրդ.  
 այգեպան.  
 կոլտնտեսություն.  
 մանյակ,  
 սերմացու.  
 տեսք.  
 մոնչյուն.  
 փայլուն:

ՎՍՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կեցցե Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Հեղափոխության  
 քոսներկույնորդ տարեդարձը:
2. Առաջին և յերկրորդ հնգամյակներն ավարտեցինք հոյակապ  
 նվաճումներով, աննախընթաց նվաճումներով ենք ավարտելու յերրորդ  
 հնգամյակը:  
 Պիոներները լիահնչյուն ուռն կոչեցին՝ կարմիր բանակի կարիճ  
 մարտիկների հաղթական զորասյունների յերթը տեսնելիս:
4. Բողջեիկների խոսքը՝ գործ ե:
5. Բազմի նավթահանքերն ու գործարանները շատ հեղափոխա-  
 կան ընկերների համար մարտական դարբնոց են յեղել:



ՔԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն Ը

\* \*

Ի՞նչ եր ներկայացնում իրենից նախկին Յերեվանը, ցարական կառավարութեան ժամանակվա այդ գովառական հետամնաց գյուղաքաղաքը:

Ծուռ ու մուռ փողոցներ, խարխուլ ու անշուք տներ, արևելյան հին տիպի բազար ու խանութներ, կեղտ ու ցեխ ամենուրեք: Յերեվանին՝ այսպես ասած քաղաքի տեսք ելին տալիս հայ ու աղբիջանահան աղաների ու խաների մի քանի քարաշէն բնակարանները, քաղաքային բանկը, մի քանի խանութներ, մոտ 20. 000-ի հասնող բնակչութեան, մի քանի դպրոցներ, նահապետական տեխնիկայով մի յերկու արհեստանոց-գործարան: Իսկ դաշնակ խմբապետների տիրապետութեան ժամանակ Յերեվանը վեր եր անվել հիվանդանոցի, վերքանոցի...

\* \*

Այսօրվա Յերեվանը յերբեք չի կարելի համեմատել նախկինի հետ: Բավական է կանգնել Քանաքեռ տանող ճանապարհի բարձրագույն մասի վրա և այնուհետ մի հայացք գցել Յերեվանին... Ի՞նչ հոյակապ տեսարան:

Ահա քաղաքի արևմտյան և հյուսիսային թաղամասերը՝ նրանք ծածկված են հարյուրավոր հոյակապ նոր շենքերով: Ահա համալսարանական թաղամասը—իր հսկա շինութեաններով, բարձրագույն դպրոցների շենքերով: Ուղիղ ձգվում են ասֆալտապատած գեղեցիկ փողոցները, վորոնց մեջ առանձնապես շողջողում և Ստալինյան պողոտան: Ահա և ելեկտրաքարշը, ահա Նորքի հոյակապ կամուրջը, վորի վրայով անցնում է նորահասուց յերկաթուղին, ահա քաղաքի տանյակ նոր ու հսկա գործարանների ծխնելույզները, ահա Ուպերայի և բաշետի, կինո «Մոսկվա»-յի, I և II հյուրանոցների հոյակապ շենքերը և այլն:

\* \*

Սորհրդային Հայաստանի մայրաքաղաքը՝ Յերեվանը բռնել է բարգավաճման, կուլտուրական ու գեղեցիկ սոցիալիստական քաղաք դառնալու ճանապարհը: Որորի վրա ընդարձակվում և ասֆալտապատվում են նորանոր փողոցներ ու հրապարակներ: Հպարտ ու խրոխտ բարձրանում են նորանոր բնակելի ու հիմնարկային շենքեր: Ավարտվում են Սինթետիկ կաուչուկի վիթխարի կոմբինատն ու նրա

բնակելի թաղամասի շենքերը: Ծառադարձվում և կանաչապատվում են քաղաքը և նրա շրջապատի բլուրները: Ընդարձակվում և ելեկտրաքարշի ցանցը: Այսօր Յերեվանն ունի 200.000-ից ավելի բնակիչ, 40 դպրոց՝ 36.000 աշակերտութեամբ, 10 բարձրագույն դպրոցներ իրենց բազմաթիվ ֆակուլտետներով, մոտ 10. 000 ուսանողութեամբ, բազմաթիվ տեխնիկոմներ, ուսումնական ու գիտահետազոտական հիմնարկներ, կինոներ, թատրոններ և այլ հանդիսատեսային վայրեր: Յերբող հնգամյակում Յերեվանը անձանաչելի կդառնա:

ՀՐԻԵՀ ՆԱՎԹԱՀԱՆՔՈՒՄ

(Հատված)

Շրջանից բաժանվեցին յերեք հոգի՝ Չուպրովը, Ռասուլը և կաբայետը: Նրանք հենց նոր ելին հասել հրդեհի տեղը և դեռ չգիտեին՝ վեր կողմումն է: Ամենից առաջ վազեց Չուպրովը՝ հրելով ընկերներին աջ ու ձախ: Ամբոխը, տեսնելով հսկային սանդուխտի վրա, վողկորվեց: Մի քանի վայրկյան կարմիր շապիկը փայլվեց բոսորագույն լույսի ներքո և չքացավ:

Ծուխն արդեն շրջապատել կր ամբողջ տունը: Մի քանի րոպե ևս, և ամեն ինչ կարող էր ուշ լինել: Յեթե կրակ ել չլիներ, ներսում յեղողները պիտի ծխից խեղդվեին: Նավթային հրդեհը նման չե սովորական հրդեհներին: Հանքերում ու գործարաններում կրակը յերբեմն տարածվում է հողմի արագութեամբ: Այստեղ այրվում է ամեն ինչ, նույնիսկ ողն ու յերկիրը, ամենուրեք տարածված նավթի ու գազի շնորհիվ: Շատ անգամ մարդիկ հաղիվ լսում են շփիկների սուլոցները, և արդեն նրանց կյանքը վտանգի մեջ է: Դեռ լավ է, յեթե կրակն սկսվում է բուրգից կամ վորևե շենքից: Իսկ յեթե սկսվել է նավթամբարից, վտանգն անխուսափելի յե: Ամբարի ազատ տարածութեան մեջ կուտակված գազը, ընդհարվելով կրակի հետ, պայթում է հարյուրավոր թնդանոթների ուժով, և կրակի հեղեղը ավելում է չորս կողմ:

VII. ԲԱՐԴ ԲԱՌԵՐԻ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ա) Յերբ բարդ բառի յերկրորդ բաղադրիչն սկսվում է ը-ով, այդ ը-ն պետք է գրել՝ Ուրիմակ՝

դաս և ընկեր—դասընկեր,  
արագ և ընթաց—արագընթաց,



դյուրև և ըմբռնելի—դյուրըմբռնելի,  
հատ և ընտիր—հատընտիր,  
դաս և ընթաց—դասընթաց:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. 1938—39 ուսումնական տարում մոտ հինգ հարյուր հոգի ավարտեցին Սորհրդային Հայաստանի մանկավարժական ուսումնա-  
րանների լրիվ դասընթացը և անցան ուսուցչական աշխատանքի:

2. Մեր ուսուցիչը շատ դյուրըմբռնելի կերպով է բացատրում  
դասը:

3. Անդրկովկասյան արընթաց լեռնային գետերը ջրային եներգիայի  
անսպառ աղբյուրներ են:

բ) Բարդուքյան կամ Թադևոսյան ժամանակ բաղաձայնից հետո  
յե-ավ սկսվող բառի յ-ն բնկնում է.

Որինակ՝

ծով և յեզր—ծովեզր,  
նոր և յեկ—նորեկ,  
խումբ և յերգ—խմբերգ,  
վեր և յելք—վերելք,  
հով և յեկ—հովեկ,  
արև և յելք—արևելք:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վալենտին և Բարեկոնան Իսպանիայի ծովեզրյա խոշոր  
քաղաքներից են:

2. Դիլիջանում, Ծաղկաձորում, Ստեփանավանում և Կիրովա-  
կանում այս տարի մեծ թվով հովեկներ կային:

3. Դուզանը յերեվում էր դաշտի ծայրում՝ իր կարմիր տանիք-  
ներով և գետեզրի ծառատաններով:

(Վ. Փափազյան—«Չրոչա-բարը»)

4. Աննախընթաց վերելք է ապրում մեր յերկիրը:

գ) Բարդուքյան կամ Թադևոսյան ժամանակ յերկրորդ բաղաձայնից  
բառի վո կապակցության վ հնչյունը դուրս է բնկնում.

Որինակ՝

լավ և վորակ—լավորակ,

բարձր և վորակ—բարձրորակ,  
ձուկ և վորս—ձկնորս,  
թուչուն և վորս—թուչնորս,  
ան և վորոշ—անորոշ,  
այտ և վոսկր—այտոսկր:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Անողոր պեաք է լինել Սորհրդային Հայրենիքի գավաճանների  
նկատմամբ:

2. Սորհրդային գործարաններն արտադրում են բարձրորակ աղ-  
բանքներ:

3. Թուչնորսությունն ու գաղանթսությունը տայգայի բնակիչ-  
ների զբաղմունքներից են:

4. Անորոշ դերբայը վերջանում է ալ և ել:

դ) յեվ կամ ու ջաղկապների ոգնությունը համադաս բառերից  
կազմված բառի բառերը գրվում են միացած.

Որինակ՝

այբուբեն                      առյեվտուր,  
անցուղարձ,                    յերթյեվեկ,  
յելումուտ,                        յելյեվեջ,  
կերուխում,                    յերթյեվեկություն,  
խորդուբորդ,                    այլյեվայլ և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մեր յերկրում ծնունդ է առել ու զարգացել նոր, խորհրդային  
առևտուրը, առևտուր առանց սպեկուլյանտների, առևտուր առանց  
կապիտալիստների:

2. Մեր գյուղամիջյան նախկին խորդուբորդ ճանապարհներն  
այժմ դարձել են հարթ, մաքուր ու կուլտուրական:

3. Մեր քաղաքի փողոցներում անցուղարձն ու յերթեկությունը  
կանոնավորվում են:

4. Հայերեն այբուբենն ունի յերեսունվեց տառ:

VI. ՀԱՐԱԳԻՐ ԲԱՌԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ա) Հարադիր բառերը գրվում են անջատ-անջատ.  
Որինակ՝

թույլ տալ,                      լուս ու մունջ,  
քարշ տալ,                      տակն ու վրա,



սիրա անել, ձայն ու ծպտուն,  
պար գար, վար ու ցանք և այլն:

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Մեր սոցիալիստական հզոր հայրենիքը թե ու թիկունք ե  
ամբողջ աշխարհի աշխատավորութեան համար:

2. Պիտնեբական ճամբարում մեր որվա մեծ մասն անցնում եր  
ծափ ու ծիծաղով, յերգ ու խնդումով:

բ) Վոռո հարադիր բառերի արտեմում դրվում ե միացման գծիկ-  
Որինակ՝

փունջ-փունջ,	կանաչ-կարմիր,
վոլոր-մոլոր,	հիուն-վաթսուն,
գիշեր-ցերեկ,	գրել-կարդալ,
գնալ-գալ,	ատել-խոտել և այլն:

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Մեր հերոս սահմանապահները գիշեր-ցերեկ հսկում ու պահ-  
պանում են խորհրդային հայրենիքի սահմանները:

2. Փունջ-փունջ աղջիկներ սարերը յեղան վիճակ հանելու աշ-  
խույժ յերգերով: (Հովհ. Թումանյան—«Անուշ»)

**IX. ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Նորագույն հապավումները կազմվում են՝

ա) Առաջին բառի կամ բառերի սկզբնամասով և վերջին ամբողջ բա-  
ռով ու գրվում են իրար հետ միացած.

Որինակ՝

Ժողկրթափին—ժողովրդական կրթութեան քափին,  
քաղխորհուրդ—քաղաքային խորհուրդ,  
Պետպերա—Պետական ոպերա,  
կոլտեսուություն—կուլեկտիվ տնտեսություն,  
գյուղխորհուրդ—գյուղական խորհուրդ,  
խորհնտեսություն—խորհրդային տնտեսություն:

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Մեր կոլտնտեսությունը միլիոնատեր կոլտնտեսություններ  
թվին ե պատկանում:

2, Խորհրդային աշխատավորութեան խնայած տառնյակ ու հա-  
րյուր հազարավոր ուրբլիները պահ են տրված մեր խնայդրամարկդ-  
ներում:

բ) Բառերի սկզբնամասերով, վորոնք գրվում են իրար հետ միացած.  
Որինակ՝

Ժողկոմխորհ—ժողովրդական կոմխարների Խորհուրդ,  
լուստոյկոմ—լուսավորութեան ժողովրդական կոմխար,  
շրջգործկոմ—շրջանային գործադիր կոմխար:

գ) Բառերի սկզբնամասերով, վորոնք գրվում են առանց անջատդ  
միջադեպերի: Յեթե հապավուդ բառերը հասարակ անուններ են, հապա-  
վումը գրվում ե փոքրատեսերով, իսկ յեթե հասարակ անուններ են (հիմնա-  
կուրյան անուն, պետուրյան անուն և այլն) գրվում են մեծատեսով.  
Որինակ՝

ԽՍՀՄ—Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների  
Միություն:

ՀԿ (Բ) ԿԿ—Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների)  
կուսակցութեան կենտրոնական կոմխար:

Հայկական ԽՍՀ—Հայկական Խորհրդային Սոցիալիստական  
Հանրապետություն:

Վրացական ԽՍՀ—Վրացական Խորհրդային Սոցիալիստական  
Հանրապետություն:

Ադրբեջանական ԽՍՀ—Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիս-  
տական Հանրապետություն:

ՀԼԿՅԵՄ—Հայաստանի Լենինյան կոմունիստական Յերիտա-  
սարդութեան Միություն:

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Նոր Սահմանադրութեամբ ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտնում են  
տասնմեկ միութենական հանրապետություններ՝ Ռուսաստանի ԽՖՍՀ,  
Բելուուսական ԽՍՀ, Ուկրաինական ԽՍՀ, Վրացական ԽՍՀ,  
Հայկական ԽՍՀ, Ադրբեջանական ԽՍՀ, Թուրքմենական ԽՍՀ,  
Ուզբեկական ԽՍՀ, Տաջիկական ԽՍՀ, Կիրգիզական ԽՍՀ, Ղա-  
զախական ԽՍՀ:

2. Մեր զարոյում ունենք ՄԱՄ-ի, ՄՈՊՐ-ի, Պաջը-Ավիաքիմի և  
այլ հասարակական կազմակերպություններ:



# ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Ունեւոր և յերջանիկ կյանքի ուղին.

\* \*

Վոսկան Մանուկյանը հայացքը գամած լրագրի եջին՝ կարդում է դանդաղ և ուշադիր, փոքր ինչ դժվարանալով, բայց կարգացածն այնպես է ամրանում նրա ուղեղում, ինչպես մեխը տախտակի մեջ: Այսոր նա կարդում է Հայկական ԽՍՀ Մահմանադրութեան նախագիծը: Հավաքվածները լուռ ունկնդրում են այդ հին պարտիզանին, վոր այժմ տնտեսութեան հմուտ ղեկավար է:

— «Ամբողջ իշխանութեանը Հայկական ԽՍՀ մեջ պատկանում է քաղաքի և գյուղի աշխատավորներին...» կարգաց Վոսկան ամին և սկսեց բացատրել:

— Մերն է իշխանութեանը, — սկսեց նա: Մեր սեփական արյունով նվաճեցինք այդ իշխանութեանը: Դարաթմբի քարերը դեռ կարմիր են: Եզ քարերի վրա թափվեց մեր ընկերների արյունը: Հո մտներիդ են զոլաքարցի Սարգիսը, Աղարեկն ու ելիշատերը, վոր դաշնակ շների գնդակով վեր ընկան:

Մի յերիտասարդ ընդհատեց Վոսկանին.

— Եղ յէրբ եր, ամի...

— Քսան թվին եր, են սև որերին, վոր դաշնակ խմբապետների զորքերը յեկան, սև ամպի պես չոքեցին մեր գյուղերի վրա, թալանեցին, շարդեցին, տարան... Ժողովուրդը փչացավ, սովն յեկավ չոքեց մեր բլին... Քսան՝ տուն փախան հենց մեր Գյոզալարայից:

\* \*

Ցարի ժամանակ ել մեր բանը բուրդ եր. հողը հարուստինն եր, մալը՝ հարուստինը:

Մի անգամ, գարնան գլուխ եր, գնացի մեր գեղի վաշխառու Մոսոնց Սրապի դուռը: Այգա, ասացի, քո վոտի հողն եմ: Սա ել թե՛

— Ի՞նչ կա, այ Վոսկան...

— Արտը ցել է, ասի, մի տասը լիտր գարի տուր ցանեմ...

— Լավ տղա յես, ասավ, կամ, համա...

— Ի՞նչ համա, աղա:

— Ասելս են և, վոր կալին յերեսուն լիտր պիտի տաս, ուրիշին չորս ու մեկ եմ տալիս:

Ճարս ինչ, վերցրի: Եզ տարին հացը չեկավ: Պարտքը մնաց վրեռ: Աղեն վերցրեց հողը պարտքի փոխարեն: Գերդատանս մեծ, հաց չկա: Դարդից թողեցի գյուղը, գնացի Ռուսաստան, բանվոր դարձա: Տասնչորս տարի հետո գյուղ յեկա, տեսնեմ հողերն ելի աղեն է ցանում: Ի՞նչ կարող եյի անել... Մի որ ել գուռը թակեցին, տեսնեմ՝ աղեն է:

— Գարտքդ ինչի՞ չես տալիս, ասում է, քանի՞ տարի յեղավ...

\* \*

Վոսկան Մանուկյանն այժմ պատմում է, թե Հայաստանի վրա ինչպես բացվեց խորհրդային ազատարար առավոտը:

— Տասնյոթ տարի յեղավ, մոռացանք սովը, աղքատութեանը: Գյուղացին իր հալալ աշխատանքի տերը դարձավ, իր իրավունքի տերը:

Հողագուրդ եյինք առաջ, հիմի պետական ակտով մեր պետութեանը մեզ՝ Գյուղալրարայի կոլտնտեսականներինս առանց վճարի, առհավետ վեց հազար հեկտարից ավելի հող է տվել: Ել չկան աղաներ ու զոռքաներ, վոր աշխատավոր գյուղացու հողը գավթեն:

Չկա հին Գյոզալարան: Ամեն կողմ այժմ կոլտնտեսականներինոր աներ են բարձրացել, գյուղի կենտրոնում՝ հիանալի դպրոցը, խեղ առաջ մի գրագետ ել չկար այստեղ: Են ել կոլտնտեսութեան հինգ նոր ու հսկա դոմերն են, վորոնց մեջ մոտ յերեք ու կես հազար վոշխար կա, ութ հարյուր գլխից ավելի կով ու յեզ. են ել մեղվաբուծական ֆերման և, են ել խողարուծական ֆերման. ունենք հիսունից ավելի քահլան ձիեր: Մի ամիս հետո ել բաղնիքը կաշխատի, բուլվարում կկանաչեն ծառերը, վոր անցյալ տարի յենք տնկել. մի յերկու տարուց հետո ել ծիրանի ծառերի բերքը կհավաքենք:

Հողն ել լավ աշխատանքով դարձել է պողաբեր, հեկտարից քսան ցենտներ բերք ենք ստանում: Մի տեղ ունեյինք լճի ափին, վոր ճահիճ եր առաջ, չորացրեցինք, հիմի հեկտարից մինչև քառասուն ցենտներ բերք ենք ստանում: Ճեղքեցինք սարերը, քարերը, շրանցք շինեցինք, վորը հազար ութհարյուր հեկտար վարելահող ջրովի դարձրեց:

— Շնորհակալութեան ընկեր Ստալինին ու Երախ և յերջանիկ կյանքի համար:

## X. ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Հասուկ անունների սկզբնատերեր գրվում են մեծատառով.

ա) Մարդկանց անուն ազգանուններ.

Աշոտ, Կիմիկ, Հովհաննես, Մարգար,

Արգարյան, Ավագյան, Գրիգորյան:

### ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մեր դասարանի գերազանցիկներն են՝ Կիմիկ Մատթեվոսյանը, Հովհաննես Սերոբյանը, Աստղիկ Սարգսյանը, Զվարթ Նիկողոսյանը և Լուսիկ Մարգարյանը:



2. Մեր դպրոցի լավ արտասանողներն են՝ Վարդուշ Վարդանյանը, Հարություն Թադևոսյանը և Մարսել Մարկոսյանը:

բ) Աշխարհագրական անուններ.

Մոսկվա, Վոլգա, Սև ծով, Սեվանա լիճ,  
Ասիա, Իսպանիա, Ատլանտյան ովկիանոս,  
Լենինական, Քանաքեռ, Ղափան, Ջանգու,  
Արագած և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. 1937 թվի հուլիսի 15-ին ԽՍՀՄ-ի կառավարության կողմից պաշտոնապես բացված համարվեց Խորհրդային Միության հոյակապ կառուցումներից մեկը՝ Մոսկվա - Վոլգա ջրանցքը:

2. Խորհրդային Հայաստանի անտառապատ շրջաններն են՝ Ստեփանավանի, Կիրովականի, Ալավերդու, Նոյեմբերյանի, Դիլիջանի, Իջևիկանի, Շամշադինի, Ախտայի և Ղափանի շրջանները:

3. ԽՍՀՄ-ի սահմանակից յերկրներն են՝ Ֆինլանդիան, Եստոնիան, Լատվիան, Լիտվան, Գերմանիան, Ռումինիան, Թուրքիան, Իրանը, Աֆղանստանը, Ջինաստանը, Մոնղոլիայի և Տուվայի Ժողովրդական հանրապետությունները և Ճապոնիան:

4. Խորհրդային Հայաստանի գետերն են՝ Ախուրյան կամ Արևմտյան Արփաչայ, Քասախ, Սեվ ջուր, Ջանգու, Գառնի, Վեդի, Արևելյան Արփաչայ, Մեղրի, Բաղարչայ և այլն, վորոնք բոլորն էլ թափվում են Արաքս գետը:

գ) Հիմնարկների, կազմակերպությունների, գաղափարների, հոլմսես-սուր ունեների, հիմնարկ-ձեռնարկների, հիդրոնյայանների անուններ (պայմանական անվանումներն առնվում են չափերսների սեջ).

Լուսժողովուհատ, Հողժողովուհատ,  
ՄՈՊՐ, Պաշը-Ավիաքիմ,  
Սինթետիկ կաուչուկի գործարան,  
«Անաստված» կոլեկտիվություն,  
«Պայքար» կոլեկտիվություն,  
Դնեպրոդես, Քանաքեռոդես, Ջագես և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Յերեվանի գործարաններն են՝ Կաուչուկի, Կարբիտի, Մեխանիկական, Կարի, Կոնսերվի, Գինու և կոնյակի («Արարատ»), Ձեթ-ձառի, Բամբակազտիչ, Փայտամշակման և այլն:

2. «Անաստված» կոլեկտիվությունն այս տարի անհամեմատ բարձր բերք ստացավ:

3. «ՄՏՁ» տրակտորի գործարանը (Ստալինգրադում) արտադրում է բարձրորակ տրակտորներ:

4. ԽՍՀՄ-ի խոշորագույն հիդրոկայաններն են՝ Դնեպրոդեսը, Վոլխովգեսը, Սվիրգեսը, Ջագեսը, Քանաքեռոդեսը և այլն:

դ) Կենդանիների սրված անուններ.

Ջուլբարս (շան անուն),  
Ծովան (կովի անուն):  
Ջեյրան (ձիուանուն) և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մեր կոլեկտիվության Ջեյրան ձիւն արագավազության մրցանակ շահեց:

2. Մեր կոլեկտիվության Ծաղիկ կովն աչքի յե ընկնում էր սեկորդային կաթնատուլթյամբ:

3. Հերթը յեկավ Սևին հասավ:

Գետին չերես փորը սե ձին:

— Հեյ ջան Սևուկ, մինչ յերբ, — ասավ,

Կհասցնես Դավթի կովին:

(Հ.Թումանյան—«Մասունցի Դավթ»)

4. Դյուղքյանդի կովաբուծական ֆերմայի անասուններն արածում են «Դյալի Ղայա» արտոսամասերում, վորտեղ առատ է խոտը, ջուրն ու ողն էլ մաքուր: Այտեղ արածում են ֆերմայի պարծանք ցուկերը՝ շվից-մետիս՝ «Ջեյրանն» ու «Գյարամը», բարձր կաթնատու կովերը՝ «Ջեյրանն» ու «Սոֆիկը» իրենց «Բիբար» և «Թութուշ» հորթերով:

5. Մեզանում ձիուն անուններ չեն գնում: Մեր Փաշան այդ կողմից մի բացառություն էր: Ամեն ձի իր գույնից է առնում իր անունը: Առում են՝ Սև ձի, Կարմիր ձի, Կապույտ ձի, Խալավոր, Մաքուր, Ղաշղա: Մեր Փաշան նույնպես դաշղա յեր. մի քսան կողեկանոցի չափ սպիտակ նշան ուներ ձակատի մեջտեղը:

(Ղ. Աղայան—«Մեր կարմիր ձին»)

ե) Լրագրերի, գրերի, գրվածների և ամսագրերի անուններ, վորոնք առնվում են չափերսների սեջ:

«Պրավդա», «Կոմունիստ», «Պրոլետար»,  
«Խորհրդային Հայաստան», «Ավանգարդ»,  
«Սպարտակ», «Գրանտ նավապետի վորդիները»,  
«Մայրը», «Կապիտանի աղջիկը»,  
«Անուշ», «Քաոս» այլն:



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Պրավդան» Համկ(բ)Կ Կենտկոմի և Մոսկվայի կոմիտեյի արգանն է:

2. Խորհրդային Հայաստանում լույս են տեսնում՝ «Խորհրդային Հայաստան», «Կոմունիստ» (ռուսերեն), «Սովետսկի Արմենաստան» (ազրբեջաներեն), «Ավանգարդ», «Ստալինեց» (ռուսերեն), «Խորհրդային դպրոց», «Գրական թերթ», «Պիոներ կանչ» կենտրոնական թերթերը և բազմաթիվ շրջանային թերթեր:

3. Ամառային արձակուրդների ընթացքում յես կարգացի Շիրվանզադեյի «Յերկերի ժողովածու»-ի առաջին և յերկրորդ հատորները, Մաքսիմ Գորկու «Մայրը», «Կլիմ Սամգինի կյանքը», Թուամանյանի «Յերկերի ժողովածուն», Լ. Տոլստոյի «Աննա Կարենինան» և այլն:

2. Գոյականների հոգնակի թվի ուղղագրությունը.  
ա) Գոյական անունների հոգնակին կազմվում է յեզակի ալղակաճին ավելացնելով եր (յերբ բառը միավանկ է) կամ ԵԵր (յերբ բառը բազմավանկ է) վերջավորություններ:

Որինակ՝

Յեզակի	հոգնակի
գիրք	գրքեր,
վարդ	վարդեր,
աշակերտ	աշակերտներ,
դպրոց	դպրոցներ,
քաղաք	քաղաքներ:

բ) Յերբ բազմավանկ բառի վերջին հնչյունն է Ե, հոգնակի թվում սացվում է յերկու Ե.

Որինակ՝

դասարան	դասարաններ,
գործարան	գործարաններ,
վառարան	վառարաններ և այլն:

գ) Մի շարք միավանկ գոյականներ հոգնակիում ստանում են ԵԵր վերջավորությունը, փոխտեղի էր ստանալու. այդ բառերի աբմասները գրաբառում վերջավորվել են Ե-ով, վոր աբխարհաբարի մեջ յեզակիում րնկել է, իսկ հոգնակիում պոհպանվել. (բացառությամբ են կազմում սերմ, աճն, մաս և նման բառերը, վորում հոգնակիում դառնում են սերմեր, աճներ, մասեր):

Գրաբար	աշխարհաբար	հոգնակի
յեզակի	յեզակի	
յեզ	յեզ	յեզներ
վոտ	վոտ	վոտներ
մատ	մատ	մատներ
լեռ	լեռ	լեռներ և այլն

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մեր կոլանտեսությունն ունի արակտորներ, կոմբայններ, հնձող և կալսող մեքենաներ, գուլթաններ, բեռնատար ավտոմեքենաներ, ֆուրգոններ, սայլեր, բահեր, թիեր, փոցխեր և այլ բազմատեսակ յերկրագործական մեքենաներ ու գործիքներ:

2. Մեր անասնաբուծական ֆերման ունի հարյուրավոր ազնվացեղ կովեր, ձիեր, յեղներ, գառներ, վոչխարներ, խոզեր և այծեր:

3. Սևանա լիճը հարուստ է բազմատեսակ ձկներով:  
4. Ուրալյան լեռները հարուստ են բազմատեսակ հանքերով:

ԹԵԼԱԿՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1. ՌԻՈՆ-ԳԵՍ

Ռիոն-գես,  
Ահա և յես...

Յես, վոր տեսա մեծ յեղբորդ՝ Վոլոդսարոյին,  
Հոչակավոր Դնեպրոստորոյին,  
Ձահեկ գյրղալ մեր Ձագեսին,  
Պոես դարձած Ձորագեսին՝  
Վողջույն քեզ:

2. ԱՌԱՏՈՒԹՅԱՆ ՅԵՂՉՅՈՒԲԻՅ

\*\*

Այգիների վրա ամառն է շնչում, սփռելով իր վոսկեգույն քողը:  
Թվում է, թե ամառը մի շոայլ ներկարար է, վոր վոսկու գույնով ներկում է ամեն բան, թե արտ, թե արոտ, թե կալ, թե այգի:

Խաղողը հասնում է...

Խիտ տերեվների շուքի տակ արդեն աչքով են անում փարթամ վողկույզները: Հատիկները կլանում են արևի լույսը և ամբարում



իրենց մեջ: Ասես արևն ե մեղրանում նրանց մեջ, և մեղրանում ե համայնական հողի յերջանիկ մարդկանց համառ աշխատանքը, նրանց բազուկներն անսպառ ուժը: Յեկ գրանից ե, վոր խաղողը հասնում ե: Ինչպես հեղեղի հորդառատ ջուրը՝ բերքը յեկնում ե այգու փերից:

\* \*

Շատ են այգիները: Վորթատունկերը ձկուել են սսես վողկույդների ծանրությունից: Իրանք շրջանի առաջին այգիներն են: Այստեղ խաղողը և՛ քաղցր ե լինում, և՛ մեծահատիկ: Առատ ե այստեղ շոգուն «ասկյարին», «մսխալին» դեղին ե ինչպես սաթ, «բիշմեշը» յերբ հասունանում ե, փայլում ե վարդի հաճելի գույնով, «շահանուն» հատիկները սև են ու խոշոր, ինչպես ազճկա սեվորակ աչքեր: Առատ են այստեղ և՛ փարթամ «հաչաբաշը», և՛ «խծապտուկը», և՛ մեղրահամ «խարջին»:

Անցյալ տարի ել Աղավնատնում առատ եր բերքը: Ամեն մի հեկտարից մոտ հարյուր ցենտներ խաղող ստացվեց:

\* \*

Աշունը շուտով վրա կհասնի, կսկսվի ուրախ, առատ այգեկութը: Ամենքն առած դանակ ու զամբյուղ, արշալույսի հետ կգնան այգի: Նրանք յերգելով կքաղեն իրենց ագնիվ վաստակը, կգարոնն ուռի կողովների մեջ ու կրերեն տուն: Ընդարձակ պահեստը վաղուց ե պատրաստ: Անթիվ, հաստափոր հեկաներինման շարված՝ սպառում են գինու կարասները: Գինին փրփրալով շուտով կհոտի ինչպես լայնահուն, վարարած մի գետ: Մառանները կլցվեն նոր բարեքներով: Այդ՝ կոլանտեսային հորդառատ ուժի, անխոնջ յեռանդի ծով արգասիքն ե: Այդ՝ լիությունն ե սոցիալիստական, վորը հոտում ե կոլարնտեսային մեծ առատության վտակ յեղջյուրից:

### XI. ԱՄԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գերադալան ասիանի ամեն բառ և ազույց վերջածանցը գրվում են մի քան անգամ հետ միասին:

Ուիանկ

- խակական — ամենախակական
- ոգտակար — ամենաոգտակար
- մեծ — ամենամեծ,
- գեր — գերագույն

լավ — լավագույն,  
գեղեցիկ — գեղեցկագույն,  
հզոր — հզորագույն և այլն:

(Ածականակերտ ածանցների ուղղագրությունը սես ածանցների ուղղագրության բաժնում):

### ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԽՍՀՄ պետական իշխանության բարձրագույն մարմինը ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդն ե:
2. Մարդկության լավագույն զավակների ամենաբարձր իղձերն ու յերազներն իրականացան և իրականանում են մեր խոտհրդային ազատ ու յերջանիկ հայրենիքում:

### ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

ԼՅՈՒԳԻԳՐՈՒՍԿՈՒ ԷՆՐՈՍՄԱԿԱՆ ՄԱՋԸ

\* \*

Լյուդիբրոդսկին Բուլղարական կոմունիստական կուսակցության անդամ եր: Նոր եր լրացել նրա քսանչորս տարին, յերբ նա մասվան դատապարտվեց:

Դատարանում նրա վարքը հիացմունք առաջ բերեց:

Դահիճներն օտարում եյին, վոր նա հրաժարվի հեղափոխական գաղափարներից և ստորագրի ներման դիմումը: Լյուդիբրոդսկին հրաժարվեց:

Հայրը նրան աղերսում եր խնայել իր կյանքը և ներում խընդրել:

Լյուդիբրոդսկին նամակով պատասխանեց հորը.

«Ավելի լավ ե մեռնել, քան կենդանի գիակ դառնալ»: «Ավելի լավ ե մեռնել, քան կենդանի գիակ դառնալ»:

Առավոտյան վոստիկանությունը ներխուժեց նրա կամերան: Ժանդարմները վոտաբռնիկ եյին քայլում, վոր մյուս բանտարկյալները ամենաչնչին աղմուկից, գիտենալով, վոր մյուս բանտարկյալները ամենաանհաշի կրարձրացնեն: Յերբ դահիճները հարձակվեցին նրա վրա և փակեցին նրա բերանը, Լյուդիբրոդսկին ժամանակ գտավ գոչելու:

— «Հառնջ, ընկերներ»:

\* \*

Կախազան բարձրացնելուց առաջ Լյուդիբրոդսկին մի նամակ գրեց իր հարազատներին: Նամակը Լյուդիբրոդսկին վերջացրել եր հետևյալ խոսքերով:



«Պարանը վզիս յես կոչ եմ անում ձեզ. գլուխներդ բարձր, հայր, քերելի կին և վորդի, վորին յերբեք չեմ տեսել: Հառնա՛, ընկերներ: Յեթե հարկավոր լինի, ամենածանր զոհերի գնով մենք պետք ե նվաճենք հաղթանակը: Մարտիկները կապրեն հաղթական պրոքետորիատի սրտում, յեթե նույնիսկ ֆիզիկապես մեռած լինեն: Մարտիկների գավազները կհաշակեն իրենց հայրերի ցանած պտուղները, և նրանց թվում դու ել կլինես, իմ փոքրիկ Քլյուչ, վորին յես չեմ կարող համբուրել վոչ առաջին և վոչ ել վերջին անգամ»:

**XII. ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒՅՈՒՆԸ**

ա) Մեկ տասնյակից մինչև մյուս տասնյակը յեղած քվերի անունները գրվում են միասին.

Ուրիճակ՝

տասնմեկ, տասներկու, տասնհինգ,  
քսանչորս, յերեսունվեց և այլն:

բ) Քառակական քվականներից անհրաժեշտ ե հիշել հետևյալների ուղղագրությունը.

ինն (ինը), տասնինն (տասնինը), յերեսուն,  
քոտասուն, հիսուն, վաթսուն, ինսուն, ինսունինն  
(ինսունինը), հարյուր, միլիոն, միլիարդ:

գ) Պատակամ քվականներ.

Պատակամ քվականների անուններ ե երուրդ, իսկ յերկու, յերեք և չորս բառերի համար՝ բուրդ:

Ուրիճակ՝

յերկուրդ,	
յերբուրդ,	
չորբուրդ,	
բայց՝	
հինգերուրդ,	վեցերուրդ,
յոթներուրդ,	ութերուրդ,
իններուրդ,	տասներուրդ,
տասնյոթերուրդ,	տասնիններուրդ և այլն:

դ) Արաբական քվանտաներով դասակարգ քվանտաներ կազմելու ժամանակ, բացի առաջինից (1-ին), մյուս դիպեհում քվանտանից հետք դրվում ե միացման զծիկ (-) և բոլոր մասնիկը.

Ուրիճակ՝

1-ին (առաջին), 2-րդ (յերկուրդ),  
3-րդ (յերբուրդ), 4-րդ (չորբուրդ)

10-րդ (տասներուրդ), 20-րդ (քսաներուրդ) և այլն: Դասակամ քվանտաները հոտմեյակամ քվանտաներով գրելու ժամանակ բոլոր մասնիկը չի գրվում.

Ուրիճակ՝

I (առաջին), II (յերկուրդ),  
III (յերբուրդ), IV (չորբուրդ) և այլն:

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Քարտուղարն արագ հանեց իր մաշված-ջարդված պորտմոնեն, բաց արեց, միջի վորդը, սև ու սպիտակ դրամներ, թափեց գրասեղանի վրա և սկսեց համարել դրամները՝ մեկ-մեկ քաշելով մի կողմը—10, 20, 25, 35, 50, 55, 58, 60, 62 կոպեկ: Սհա իմ ունեցած բոլոր կապիտալը: Թե վոր արանից հինգ ուսուրի դուրս կգա, վերցրու: Հինգ ամիս ե՛ ոտճիկ չեմ ստացել, կհավատա՞ս, թե չե՞ս. (Թվանշանները տալ բառերով): (Նար Դոս—«Նեղ սրբից մեկը»)

2. Բանն այն ե, վոր խեղճ Սողոմոնն ու իր յեղբայրները վաղուց պարտք ունեյին աղային: Մի տարի տավարների հիվանդությունը կոտորել եր գոմեշներին, յեղներն ել սովածությունից ընկել-առակել էյին, տուրք պիտի տային, ինչ անեյին. մի քանի, կարծեմ հենց յերկու հարյուր ուսուրի՝ պարտք էյին արել քառասուն տոկոսով. պարտքըն ել, գիտե՞ս խո, ձնագնդի նման գլորվել եր, գլորվել, սար եր դարձել և դեռ ելի գլորվում՝ Ջըռ-չըռ քարի չափ եր լինում: (Փափաղյան—«Ջըռ-չըռ—քարը»):

3. Ու կովում են, վորքան հնարավոր ե չորս հոգուն, մի մանուկ ել հետները՝ հարյուրի դիմաց:

Յեղբայրներից կրտսերը զարնվում ե թփի տակ և մեռնում տեղն ու տեղը, յերկուրդը վիրավոր՝ ժայռերից գլորվում ե ձորը և փշրվում քարերի վրա՝ մի քարայրի մոտ, և յերբուրդը վիրավոր բռնըվում-բռնտ ե դրվում ու նա ել բանտում ե մեռնում: Իսկ Սողոմոնն արյունաքամ, մի քանի գնդակ մարմնի մեջ, տառնամյա վորդուն գրկած՝ նհատում ե իրեն—նայեցեք այն վիհին—մեծ «քարայրը»: (Փափաղյան—«Ջըռ-չըռ—քարը»)

5. Հարյուր հիսուն ուսուրի, քինյոր, հարյուր հիսուն ուսուրի կար կոշիկիս մեջ, ձախ կոշիկիս... Այնտեղ էյի պահում հավաքած փոշերս. .

(Շիրվանզադե—«Արտիստը»)



ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1. ԱՅՍՊԵՍ ԵՅԻՆ ՄԵՌՆՈՒՄ ՀԵՐՈՍՆԵՐԸ

\* \*

Մաքսիմ Ֆուգայիի բանդան, զինված անգլիական լավագույն զինքերով, մոտենում եր Գարմին:

Նրա հետեվից գալիս եր Բուխարայի եմիրը՝ անգլիական զորքերով, գնդացիներով, թնդանոթներով ու գավառնակներով:

Մաքսիմի ջոկատն եյին շտապում կալվածատերերը, ազնվականները և նրանց վորդինները:

Գարմում ընդամենը մի յերեք տասնյակ խորհրդային աշխատողներ կային, մի քանի հատ հրացան և չնչին քանակությամբ փամփուշտ:

Առաջին իսկ ազդանշանով խորհրդային Գարմը հավաքվեց գործադիր կոմիտե, ալ զբոշի տակ ժպտացող Իլյիչի նկարի տակը:

Այդ որերին Գարմ եյին յեկել տասներկու տաշիկ ուսուցիչ, վերապատրաստման դասընթացներին մասնակցելու համար: Նրանցից շատերն առաջին անգամ եյին իրենց ձեռքը վերցնում հրացան, բայց մի մարդու պես միացան ինքնապաշտպանության ջոկատին:

\* \*

Կիմչակ գյուղում, Գարմից յերեսունհինգ կիլոմետր հյուսիս-արեւմելք, տասներկու ուսուցիչ, յերեք չեկիտ, պետական բանկի մի ծառայող և խորհրդի յերկու աշխատող ընդհարվեցին Ֆուգայիի բանդայի հետ:

Իսամաչներն ողակել եյին հերոսներին:

Յերը տասնութ հոգուց տասնյոթն արդեն սպանված եյին, Ֆուգայիի գեմ կռվելու մնաց միայն մեկ ուսուցիչ: Կրակելով վերջին փամփուշտները, նա իր ծոցատետրում գրեց.

— Մնացել եմ մենակ: Կմեռնեմ, բայց անձնատուր չեմ լինի...

Քիչ հետո սոված գայլերի նման վրոնում եր բասմաչների բանդան ուսուցչի դիակի վրա, վոր ձիուց կախ գցած քարը եր արվում գաշտերով:

Տասներկու խորհրդային ուսուցիչ, յերեք չեկիտ, խորհրդի յերկու աշխատող և պետբանկի մի ծառայող կռվեցին յերեք հարյուր հիսուն բասմաչների դեմ և ընկան այն մահով, ինչպիսի մահով մեռնել գիտեն միայն հերոսները:

2. ԻՄ ԱՇԽԱՍԱՆՔԸ

\* \*

Յերը յես կարգացի ընկեր Ստալինի ճառը՝ աշխատանքի արժեքը ողականության բարձրացման մասին, շատ խորն սկսեցի մը-

տածել, թե ինչ պետք և անել տեխնիկայի լրիվ ոգտագործման համար Չե՞ վոր Դ-նրառը վերջին տարիսերում զինվել և մեծ լրանակի մեքենաներով ու մեխանիզմներով: Չե՞ վոր խորհրդային արտադրությամբ պատրաստած հորատող մուրճը լավ և աշխատում միայն հարկավոր եր նրան աշխատանքով ծանրաբեռները:

Մոտենում եր միջազգային պատանեկության որը, և յես ցանկացա այդ որը հավերժացնել աշխատանքի արտադրողականության բարձրացման ուղիորդային ցուցանիշներով:

Պետք և ասել, վոր այդ որվանից դեռ շատ առաջ մենք, շախտում, կուսկազմակերպիչներ Պետրովի և Դյուկանովի հետ մտածում եյինք այն մասին, թե ինչպե՞ս վերենք հին նորմաների շղթաները, ինչպե՞ս հնարավորություն տանք հորատողներին գործադրելու իրենց մուրճերը լրիվ չափով:

Յեկ անա վորոշեցինք հորատողին հնարավորություն տալ աշխատելու ամբողջ հանքաշերտում:

\* \*

Ոգոստոսի վերջին ինձ մոտ յեկան շախտի կուսկազմակերպիչներն ու հանքամասի պետը և առաջարկեցին ինձ իչնել հանք: Յես մեծ ուրախությամբ հանձն առա այդ առաջարկը և ոգոստոսի յերեսունին զեղերն իջա հանք:

Յես աշխատեցի հինգ ժամ քառասունհինգ րոպե և հորատեցի հարյուր յերկու տոնն հանք:

Յելը հանքից դուրս յեկա, իմ ձեռքը ջերմությամբ սեղմեցին մի խումբ ընկերներ՝ շնորհավորելով իմ հաղթանակը: Բայց և շատերը կային, վոր չհավատացին: Ինձնից հետո հանք իջան մի քանի ընկերներ և նույն ձեկով աշխատելով հորատեցին հարյուր տասնհինգ, ապա հարյուր քսանհինգ տոնն հանք:

Նրանցից հետո յես մտնելով հանք՝ անցա և՛ իմ առաջվա, և՛ նրանց ուղիորդներն ու հանեցի սկզբում հարյուր յոթանասունհինգ, իսկ հետո՝ յերկու հարյուր քսանյոթ տոնն հանք:

\* \*

Իսկ վերջան աշխատավարձ եմք ստանում: Միայն հոկտեմբեր ամսում տասնչորս անգամ հանք իջնելով՝ յես աշխատեցի մեկ հազար ութ ուրլի: Իմ ընկերներս ավելի շատ անգամ հանք իջնելով՝ իրենց ամսական աշխատավարձը հասցրին մինչև մեկ հազար վեց հարյուր տասնութ ուրլու:

Իսկապես չգիտեմ՝ ինչո՞ւ յես այս շարժումն անվանում քառաշնորվական արշավ: Մեր կուսակցության և Խորհրդային Միության



ժողովուրդների սիրելի առաջնորդը և նրա ղեկավարած բողոքիչների կուսակցությունը յեղան մեր հաղթանակների վոզեշնչողը:

Նրան, մեծ Ստալինին ենք պարտական մեր յերկրի բախտավոր կյանքի, մեր գեղեցիկ հայրենիքի ուրախությունների և փառքի համար:

Նրա համար, բողոքիչ կուսակցության համար, մեր սիրելի հայրենիքի համար պատրաստ ենք մենք տալու մեր կյանքը մինչև վերջը:

### XIII. ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գերանուններից պետք է հիշել նեթվյալների ուղղագրությունը.  
ա) Յուրաքանչյուր գերանուններ.

- սույն, նույն
- միևնույն, մյուս,
- այդպես, այնպես,
- նույնպես, այդքան,
- այդտեղ, այդչափ և այլն:

բ) Փոխադարձ գերանուններ.

- միմյանց, մեկմեկու
- (մեկ մեկի):

գ) Հարցական գերանուններ.

- ի՞նչ չափ, վճռպես,
- վճռպիտի, քանի՞սրորդ:

դ) Վտրուցյալ գերանուններ.

- յուրաքանչյուր, ամբողջ,
- ամեն ինչ, ամեն վոք,
- յուրաքանչյուր վոք:

ե) Անորոշ գերանուններ.

- ինչ-վոր, ինչ-ինչ,
- այսինչ, այնինչ,
- ովև, վորև:

զ) Փոխակերպ գերանուններ.

- վոչ վոք, վոչինչ,
- վոչ մի, վոչ մեկը:

### ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սօցիալիզմը և կապիտալիզմը, յերկու հակադիր սխաեմներ, կանգնած են իրար դեմ առ դեմ:

2.—Ի՞նչ ես անում,—հարցրեց նա զուսպ գայրույթով և միայն-պիտի չոր յեղանակով, վոր հատուկ է խոտով մարդկանց, յերբ նրանք, հարկադրված, խուսափող հայացքներով դիմում են միմյանց: Անցած տարվա վեճից հետո նրանք առաջին անգամ եյին կանգնում դեմ առ դեմ:

Թեվոսը չպատասխանեց: Նույն անտարբերութամբ նա շարունակում էր ճյուղերը խրել ցանկապատի մեջ:

(Ս. Ջորյան—Ճանկապատը)

3. Ծանր է վերելքը, բայց նա սովոր է, չի նկատում: Նա քայլում է, մտածում որվա դեպքերի շուրջը, ու այս ու այն թփի, ժայռի նշանով, սովոր աչքերով, չափում է մնացած տարածությունը: Յերբեմն նա կանգ է առնում, շունչը հետ բերում, նայում ներքևի լույսերին: Ու միշտ այդ ընդհանրին մի արտասովոր ուրախություն է գալիս Ակորի վրա, կարծես մի նոր խանդավառ աշխարհ է այնտեղ, ուր ընկնողը մոռանում է իր անձնականն ու առորյան:

(Արագի—Վոյսերը)

### ԹԵԼԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

#### 1. ԳՐՈՒՆ Ե

Անձրև տեղաց:

Մինչև լույս թափվեցին մանր կաթիլներ, վորոնք բյուրավոր ասեղների նման քրքրեցին ձմռան սպիտակ ծածկոցը:

Գարունը յեկավ դաշտավայրերից: Յեկավ նա կարծես նույն գիշեր թափվող անձրևի հետ միասին և ծեր Արագածի ասորածնե-րում տարածեց իր բույրը:

Գարնանային բույր...

Քաղցր է այդ բույրը, ինչպես սիրո դացուս, հարեցնող՝ ինչպես բերկրալի կյանքի հմայք: Բույրը գալիս է հողից ու հերկից, հալ ընկած սառույցներից, արգավանդ հովիտներից, ուր արդեն իր կապույտ թերթիկներն է բացել մանուշակը:

Առավոտյան, յերբ քնից արթնացավ գյուղը՝ Սաբունչին, կուտնտեսական մաճկալը տանիք բարձրացավ: Նրա արեվավառ դեմքի վրա ծագեց յերջանկավետ ժպիտը: Նա զարմանքով էր նայում համայնական արգավանդ դաշտերին, վոր դեռ յերեկ ձյունով եյին ծածկված: Մանուկ արևի շողերի տակ սև ցեղերն եյին ցուրում և նրանց վրա ծխում էր գուրջին...



— Գարունն ես, — շնչաց մաճկալ Սեթը և բերկրանքի միզգացում համակեց նրան:

\* \* \*

Յերջանիկ ե կոլտնտեսային զարուհը: Մաճկալ Սեթի ուսերին արդեն հիսունյոթերորդ զարուհնն է նստում: Հիշում ե նա անցած շատ զարուհներ, վորոնք իրենց հետ բերում էին նոր զարդ ու ցավեր, նոր վիշտ ու թախիծ: Յեվ այդ դառն ու անուրախ որերին, կարիքի բեռան տակ կքած մաճկալ Սեթը յերգում եր իր վշտաբեկ ձայնով:

— Զոր ես դալիս, այ զարուհն...

Յեկավ նոր զարուհը, լսորհրդային զարուհը: Ինչպես հողից բարձրացող այն գոլորշին՝ ցնդեց գյուղացու վիշտը, կարիքը հանձնվեց մոռացության հողմերին...

Կոլտնտեսային զարուհը բացվում ե անհուն բերկրանքով: Յուրաքանչյուր անգամ, յերբ նա ծաղկում ե համայնական դաշտերում, նա հաղթանակի յե վրգեկոչում կոլտնտեսային մասսաներին, վորոնք իրենց զրոշների վրա գրել են բարձր բերքատվության լողունը, ցորենի նոր լեռներ նվաճելու լողունը:

### XIV. ՀՈՂԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ա) գ հողը, վոր փոխադրվում ե բո դերանվանք, բեկ յերբեմն լավում ե վարպես ս կամ ք, միտ գրվում ե գ:

Որինակ՝

գիրքդ (քո գիրքը), տետրակդ (քո տետրակը) —  
մատիտդ, թուղթդ, վոտդ, գոտիդ,  
ընկերուհիդ, ընծադ և այլն:

բ) Մեր, ձեր, նրանց, իրենց հոգնակի սացակամ (պահպանելու-բյան) իմաստն արտահայտելու համար սացակամ հոգերը վորոք բառերում դրվում են ներ վերջավորության վրա:

Որինակ՝

աչքերդ բաց, աչքներդ բացեք,  
նվերդ ստացիր, նվերներդ ստացեք,  
զրքերդ, զրքներդ և այլն:

գ) Յերբ վորոշյալ բառին հաջորդող բառն սկսվում ե ձայնավորով կամ սպ, սկ, սք, սե, սփ, սս, սայ, սկ, գք, գգ, յերկբադաձայնով, վորոշյալ բառի ք վորոշող հոդի փոխարեն կառելի յե գեղ Ե. (եսս Ե—ի ուղղագրությունը):

Որինակ՝

Տիգրանը գնաց, Տիգրանն առաց.  
Հոփսիկը սեսու վ, Հոփսիկն ուրախացավ.  
Ներկայացումը վերջացավ, ներկայացումն սկսվեց.  
Արիիկը կարդում ե, Արիիկն գրոսնում ե և այլն:

### ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այսուամենայնիվ դու քո նպատակին հասել ես. տղիդ բարձր ուսում ես ավել ու թիֆլիսի նման քաղաքում հայտնի մարդկանց շարքը զցել, այդ ել մեծ բան ե,— նկատեց ընկերս:

(Մուրացան—Վնայի ազգավր)

2. Այնտեղ ե և մեր աչքի լույս,  
Մեր ոջախի վառ ճ, ագ—  
Հայրդ կովում սիրտն ալեհույզ,  
Սրտում և թույն և կրակ...

Մի լար վորդիս, վոր չես լուռ  
Ել մայրական քաղցր որոր,  
Յես մեծ կովի յերդ եմ հյուսում  
Որոցքիդ մոտ ամեն որ...

(Ար. Մատուրյան—Վանվորուհու որորը)

3. Կլկլացող ձենիդ մատաղ,  
Որամգեսի ուրախ դիզել,  
Հնչյուն յերգովդ ուրախանում,  
Ծափ եմ տալիս յես ել, յես ել:

(Հ. Հակոբյան—Վերամգեսին)

### ԹԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1. ՄԱՅԻՍԸ ԳՅՈՒՂՈՒՄ

(Հատված)

Մայիս ամիսն ե. զարուհն իր բոլոր փառավորություններովն ամեն շնչավորների վրա իր հրաշալի տպավորությունն ե ներշնչել, վարդահոտը բարակ զփյուռոթի շորհիվ ամեն կողմը հետդ ման գալիս և քթիդ հոտոտելիքը գրգռում: Լեռ ու դաշտ կանաչներով, սեզերով լիս և քթիդ հոտոտելիքը գրգռում: Լեռ ու դաշտ կանաչներով, սեզերով լիս և սիրի-սիրի համեստ յերեքտերեկյան խոտերով՝ զարգարվել են, ու սիրի-սիրի համեստ յերեքտերեկյան խոտերով՝ զարգարվել են, յերփներանգ հազարավոր ծաղիկները յերեսիդ ծիծաղում, խնդում են



ու ընդհանրապես մի բուռ հող յեղած տեղը բուսական թագավորու-  
թյունն իր գահն և դերել: քարափնների ծերպերիցն ել կյանք և ար-  
տադրվում, մի կտոր կոշտ ընկած տեղն ել կանաչի գլուխ և դուրս  
ցցվել, ել ապառաժ ու մերկ գետին չի մնացել:

Մքանչելի յե մայիսը, այդ հրաշալի ամսի մեջ բնությունը դառ-  
նում և մի թովուան յերեխա, մտածում, հնարում և ամեն տեսակ  
խաղեր, ամեն արարածի մեջ նա իր խաղալու առարկան և գտնում:  
Տես, թե ինչպես և գլարճանում նա իր վորդիների վրա, իր փոքրիկ,  
սիրունիկ, ողասլաց թեկավորների վրա. տես՝ ինչ կյանք, ինչ շար-  
ժողություն և դրել նրանց մեջ, նայիր, ահա նրանք իրենց յերջանկու-  
թյան ամենակատարյալ կետումն են:

2. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ-ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՏՎԵՐՆԵՐ

Յերբ գրում ես, կուրծքդ մի հենիր օեղանին, գլուխդ մի թեքիր,  
աջ ձեռքդ պահիր գրասեղանի վրա:

Մաքուր պահիր տետրդ, գրչակոթդ և գրչածայրդ:

Վերնազգեստով և գլխարկով յերբեք մի նստիր սենյակում:

Մատներով աչքերդ ու բերանդ մի տրորիր:

Յերբ սենյակ (դասարան) ես մտնում, լավ մաքրիր վոաքերդ  
դրսի փոշուց ու կեղտից:

Հաճախ ողափոխիր այն սենյակը, վորտեղ աշխատում ես:

Ոգտագործիր թքամանն ու թաշկինակդ:

Ուրիշի սանրով գլուխդ չսանրես:

Մաքուր պահիր յեղունգներդ ու հագուստներդ:

Սուսափիր ուրիշի ամանից ուտելուց և խմելուց, ուրիշի գդալ  
ու սրբիչ յերբեք մի գործածիր:

Ամեն անգամ ուտելուց հետո և քնելուց առաջ մաքրիր առամ-  
ներդ ու ձեռքերդ և վողողիր բերանդ:

XV. ԲԱՅԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ա) Ապառնի ժամանակի ոժանդակ բայերը (եմ, ես, ե, եմք, եք,  
եց), ինչպես և անցյալ ապառնի յեզակի յերբեք դեմի ոժանդակ բայը  
գրվում է «յ» նախաստով:

ԱՊՏՈՒՆԻ

յեզակի	հոգնակի
խոսելու յեմ,	խոսելու յենք,
խոսելու յեա,	խոսելու յեք,
խոսելու յե,	խոսելու յեն:

ԱՆՅՅՍԱԼ ԱՊՏՈՒՆԻ

Սոսելու եյի,	գրելու եյի,
խոսելու եյիր,	գրելու եյիր,
խոսելու յեր,	գրելու յեր,
կարդալու յիր,	գրելու յեր, խաղալու յեր և այլն:

բ) Հարակատար դերբայի վերջավորությունն է ած և ացած, վոր  
պահպանվում է հարակատար և անցյալ հարակատար ժամանակներով խո-  
նարիկելու ժամանակ:  
Ուրիմակ՝

ՀԱՐԱԿԱՏԱՐ

յեզակի	հոգնակի
գրած եմ,	գրած ենք,
գրած ես,	գրած եք,
գրած ե,	գրած են:

ՀԱՐԱԿԱՏԱՐ

կարդացած եմ,	կարդացած ենք,
կարդացած ես,	կարդացած եք,
կարդացած ե,	կարդացած են:

ԱՆՅՅՍԱԼ ՀԱՐԱԿԱՏԱՐ

յեզակի	հոգնակի
գրած եյի,	գրած եյինք,
գրած եյիր,	գրած եյիրք,
գրած եր,	գրած եյին:

ԱՆՅՅՍԱԼ ՀԱՐԱԿԱՏԱՐ

յեզակի	հոգնակի
կարդացած եյի,	կարդացած եյինք,
կարդացած եյիր,	կարդացած եյիրք,
կարդացած եր,	կարդացած եյին:

գ) Յերբերդ խոնարհման բայերի անցյալ կատարյալ ժամանակի  
վերջավորությունն է՝



յեզակիում	հոգնակիում
ացի,	ացիճճ,
ացիբ,	ացբբ,
աց,	ացիճ:

Որինակ՝

յեզակի	հոգնակի
կարգացի,	կարգացիճճ,
կարգացիբ,	կարգացիբ,
կարգաց,	կարգացիճ:

խաղացի, մնացի, ստացի և այլն:

դ) Հղձական յեղանակի անցյալ ապառնի վերջավորութունն Ե-

յեզակիում	հոգնակիում
յի,	յիճճ,
յիբ,	յիբ,
բ,	յիճ:

Որինակ՝

**ԸՂԶՍԿԱՆ ՅԵՂԱՆՍԿ**

անցյալ ապառնի

յեզակի	հոգնակի
զրեյի,	զրեյիճճ,
զրեյիբ,	զրեյիբ,
զրեբ,	զրեյիճ:

կամ՝

կարգայի,	կարգայիճճ,
կարգայիբ,	կարգայիբ,
կարգար,	կարգայիճ:

(Նույն վերջավորութունն ունեն նաև պայմանական և հարկադրական յեղանակների անցյալ ապառնի ժամանակները):

Ե) Պայմանական յեղանակի և յեղանակիչը գրվում Ե բայաբնասի հետ միտք միասին:

Որինակ՝

**ՊՍՅՄՍԿԱՆ ՅԵՂԱՆՍԿ**

ապառնի

յեզակի	հոգնակի
կկարգամ,	կկարգանք,

կկարգաս,	կկարգաք,
կկարգա,	կկարգան:

**ՍՆՅՅՍԼ ՍՊՍՌՆԻ**

յեզակի	հոգնակի
--------	---------

կկարգայի,	կկարգայիճճ,
կկարգայիբ,	կկարգայիբ,
կկարգար,	կարգայիճ:

զ) Ժխտական խոնարհման ժամանակ անցյալ ետատյալում, հրաժարական յեղանակում, բղձական յեղանակի ապառնի և անցյալ ապառնի ժամանակներում չ յեղանակիչը գրվում Ե բայաբնասի հետ միտք միասին:

Որինակ՝

**ՍՆՅՅՍԼ ԿՍՏՍՐՅՍԼ**

յեզակի	հոգնակի
--------	---------

չչափեցի,	չչափեցիճճ,
չչափեցիբ,	չչափեցիբ,
չչափեց,	չչափեցիճ:

**ՀՐՍՄՍՅՍԿԱՆ ՅԵՂԱՆՍԿ**

չչափեո,	չչափեք:
---------	---------

**ԸՂԶՍԿԱՆ ՅԵՂԱՆՍԿ**

ապառնի

յեզակի	հոգնակի
չչափեմ,	չչափինք,
չչափես,	չչափեք,
չչափի,	չչափեն:

**ՍՆՅՅՍԼ ՍՊՍՌՆԻ**

յեզակի	հոգնակի
--------	---------

չչափիյի,	չչափիյիճճ,
չչափիյիբ,	չչափիյիբ,
չչափիբ,	չչափիյիճ:

է) Ժխտական խոնարհման հարկադրական յեղանակում չ յեղանակիչը գրվում Ե պիտի նախադրության հետ միասին:

Որինակ՝



ապառճի

յեզակի	հոգնակի
չպիտի չափեմ,	չպիտի չափենք,
չպիտի չափես,	չպիտի չափեք,
չպիտի չափի,	չպիտի չափեն:

Ս.ՆՅՅՍ.Լ Ս.ՊԱՌՆԻ

յեզակի	հոգնակի
չպիտի չափեյի,	չպիտի չափեյինք,
չպիտի չափեյիր,	չպիտի չափեյիրք,
չպիտի չափեր,	չպիտի չափեյին:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.—Վոչինչ, գլխիդ մեռնեմ, հենց վոր քո մոտ կգան, իրեքի վրա ել կբարկանաս, վոր ամեն դատարկ բանի համար քեզ գլխացափանք են տալիս, կհրամայեա ծակը կոխել, յերկու որ կճգնեն, հետո յես միջնորդ կընկնեմ, կբաշխես. մեծին կհրամայես պատիկներին չղրնել, պատիկներին ել կպատվիրես մեծի պատիվը պահել, ինձ ել կկանչես, կհանձնես, վոր ինչպես խելքս կտրում ա դրանց բարիչեցնեմ:

(Գ. Պոռյան—«Միկիտան Սաքոն»)

2. Կանգնում ե Ակորը ճամփին, շունչ առնում, նայում ներքևի լուսաշխարհին. մտածում ե՝ ահա կանցնի մի յերկու տարի, հիզրոկայանը կյանք կտա նոր դործարաններին, իսկ այնտեղ, ձորի լանջին, ժայռի վրա կբարձրանա Լենինի հսկա արձանը, ու լույսերով վողողված աչքերը կգարձնի դեպի հեռուները...

(Սրազի—«Լույսերը»)

3. Մենք ունեյինք մի խիտ, շատ խիտ կառավարիչ, վոր օրում եր ամենափոքր հանցանքի համար ել մարդ պատժել: Կառք նստած կերթար, որինակ, և չորս կողմը կնայեր, թե չկա արդոք մի վորևե անկանոն բան, և յեթե նկատեր անկարգ մի բան, իսկույն կկանգներ, կկանչեր հանցավորներին, կհրամայեր.

—Գնա անմիջապես գրասենյակ և իմ անունից հայտնիր ավագ գործակատարին, վոր ճիպոտի քսանհինգ հարված տա քեզ. յեթե խաբեցիր, յես յերեկոյան կհրամայեմ իմ ներկայութեամբ կրկնակի հարվածներ տալ:

(Լեսկով—«Հիմարը»)

1. ԴԱՅԱԿ ՎԱՐՅԱՆ

\* \*

Վարյան նստում ե հատակի վրա, տիրուհու կրկնակոշիկները որբում ու մտածում.—Ինչ լավ կլիներ, գլուխը կոխեր այդ մեծ, խոր կրկնակոշիկի մեջ ու մի քիչ քներ այնտեղ...

Սողանակն ընկնում ե Վարյայի ձեռքից, բայց իսկույն թափ ե տալիս գլուխը, աչքերը չուում և աշխատում ե այնպես անել, վոր աչքերը չփակվեն:

—Վարյա, դրսի սանդուխքը լվա, ամոթ ե, ի՞նչ կասեն հաճախորդները,—լավում ե տիրուհու ձայնը:

Վարյան լվանում ե սանդուխքը, ավելում ե սենյակները, հետո վառում ե վառարանը և խանութ վազում: Գործ շատ կա, իսկ ազատ ժամանակ բոլորովին չկա:

Որն անցնում ե: Յերեկոյան մթնշաղը շոյում ե Վարյայի կիսոխուսի աչքերը և խոստանում, թե շուտով քուս կբերի նրան: Բայց հյուրեր են գալիս:

—Վարյա, ինքնայեռը դիր,—կանչում ե տիրուհին:

Ինքնայեռը փոքր ե, և մինչև վոր հյուրերը կկշտանան թեյով, պետք ե մի քանի անգամ յեռացնել:

\* \*

Թեյից հետո մի ամբողջ ժամ Վարյան տեղում կանգնած հրամանների յե սպասում:

—Վարյա, վազիր չերեք շիճ գարեջուր բեր:

Նա տեղից բաժանվում ե և աշխատում ե պինդ վազել, վոր քունը փախցնի:

—Վարյա, վազիր ողի բեր: Վարյա, վորտեղ ե խցանահանը: Վարյա ձուկը մաքրիր:

Բայց ահա հյուրերը գնացին վերջապես: Ծրագները հանգցրին, ամենքը պառկում են քնելու:

—Վարյա, որորիր յերեխին,—լավում ե վերջին հրամանը:

Հեռվում ձանչում ե ծղրիղը, կանթեղի լույսից առաստաղի վրա ընկած կանաչ բիծը, սենյակի իրերի ստվերները նորից մտնում են Վարյայի կիսաբաց աչքերը, յերեքում ու մթագնում նրա գլուխը:

—Նանաս, բալիկ ջան, նանաս,—մրմուռում ե նա,—անուշ քնով կշտանա...



Յերեխան ճչում ե, քիչ ե մնում լացից տրաքի, իսկ Վարյան հաղիվ ե գլուխն ուսերի վրա պահում. մարմինը տնքում ե հոգնա- ձությունից:

2. ԱՆՈՒՇ

(Հատված)

1

Ինչպե՞ս մի հեղեղ վեր կե՞սար հանկարծ,  
յերկնքի մթնած ամպերից իջնե՞ր,  
ինչպե՞ս փոթորիկ առատիկ սրընթաց,  
գյուղից սլացան մի խումբ կտրիճներ:  
Ցավից տաքացած ել բան չեն հարցնում,  
թոչում են, առե՞ս, ահից հալածված,  
ու նրանց առջև ահռելի բացվում,  
թշշում ե ձորը արյունով լցված:  
Գյուղը դատարկվեց մի ակնթարթում.  
Քարավի գլխին կանգնած անհամբեր,  
լուռ, արտատրոփ ականջ են դնում,  
նայում են ներքև... ձեն չի գալիս դեռ.  
Դերեղն ե մենակ անդնդում՝ հուզված,  
խլածայն վողբով սողում դեպի ցած:

3. Լինեյի չորան սարերում հեռու,  
Գայիբ, անցնեյիր վրանիս մոտով,  
Իրար նայեյինք անուշ կարոտով,  
Քնքույշ ժպտայինք հանկարծ իրարու:  
Գնայիր աղբյուրն ու հետ դառնայիր  
Թեթև, վորպես վիթ, յեյնեյիր ձորից:  
Մի ջուր տայիր ինձ քո լի սափորից  
Ու վրանիս մոտ հանգատանայիր:

XVI- ՄԱԿԻԱՅՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Մակբայներից պեսե ե հիսել հեսեվյալների ուղղագրությունը.

ա) Ցեղ ցույց սվող մակբայներ.

տեղնուտեղը, սլատնիվեր,  
գեմառգեմ, գեմհանդիման,  
սարնիվեր, ամենուրեք:

բ) Ժամանակ ցույց սվող մակբայներ.

արդեն, վերջիվերջս,  
տարեցտարի, որեցոր,  
ժամանակ առ ժամանակ:

գ) Քանակ ցույց սվող մակբայներ.

յեռակի, սակավ առ սակավ,  
փոքր ինչ, ավելի ևս,  
ամբողջովին, մեկիկ-մեկիկ,  
քիչ-քիչ, շատ-շատ:

դ) Ձեզ ցույց սվող մակբայներ.

լիովին, դարձյալ,  
հետզհետե, հաղիվհաղ,  
մեջ ընդ մեջ, կամաց-կամաց,  
իհարկե, ակնհայտնի,  
անպատճառ, թերևս,  
համարյա, մերթ ընդ մերթ և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մերթ ընդ մերթ ճնճղուկների քնքույշ ծլվլոցն եր բարձրա- նում և ողը լցնում ախորժալուր ձայներով:
2. Որեցոր և տարեցտարի բոյ ե քաշում մեր կոլխողը, հասակ առնում, զորանում ու փարթամանում:
3. Հետզհետե մթնում եր. հաղիվհաղ եյին յերևում սովեր- ները. իսկ փոքր ինչ անց, համարյա վոչինչ նկատելի չեր: Ապա մեկիկ-մեկիկ այտեղ ու այնտեղ վառվեցին ճրագները և մեր դեմ հանդիման հորիզոնը ծածկվեց հաղարավոր լուսակետերով:
4. Մի այլ անգամ, թերևս, մենք դարձյալ հանդիպենք, այն ժամանակ դու կտեսնես մեր գյուղը սոցիալիստական քաղաքի փո- խարկված, լիովին բավարարող մեր կուլտուրական բոլոր պահանջ- ներին:

ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1. ԱՔՎԱ

(Հատված)

\* \* \*

Աքվան վերջապես հոգնեց: Նա հետզհետե սառչում եր: Հանկարծ



Քամին յեւալ և արագորեն քշեց նրան ծովի վրայով: Յաճում շոգե-  
նավերը բոլորովին փոքր էին յերևում, իսկ նավակներն ասե՛ս՝ ման-  
րիկ տաշեղներ լինեցին: Քամին քշում էր ամպը հեռո՛ւ, հեռո՛ւ: Ծովն  
արդեն մի կողմը մնաց, ու ամպը ծանր-ծանր կախվեց յերկրի վրա:  
Բայց ահա մոտենում է յերեկոն, արևը կամաց-կամաց իջնում է դեպի  
ցած, սառնորեն փչում էր յերեկոյան հովիկը: Վերջապես արեգակը  
բոլորովին թագնվեց լեռան հետևում. մութն ընկավ դանդաղորեն,  
և Աքվան այլևս չի կարողանում դանազանել տները, ծառերը:

## 2. ԱՐՏԸ

\* \*

Դեմ ու դեմ, ալիքաձև բարձրանալով՝ մինչև մշուշալից հորիզոնն  
էր տարածվում սև լեռնաշղթան:

Նրա կուտակված տարածութունը վերևից թագնվում էր մառա-  
խուղի մեջ և ցածի կողմից ճզվում թացութունով: Թվում էր, վոր  
ձյուն էլ կար, բայց շատ հեռու. ամպի սպիտակ շերտեր լինեցին  
կարծես:

Թանձր, սևագույն սպիտակախառն մշուշը ծանրացել էր նաև  
ձորերի և հովիտների, լեռների և բլուրների շուրջը: Տեղ-տեղ ցան-  
ցաձև, յերկնքից գետին իջնող շեշտակի գծերը ցույց էյին տալիս, վոր  
խիստ անձրև էր տեղում դանազան կողմերում:

Յերևում էր, վոր ամպերը դեռ շատ ջուր ունեցին և այդ գծերը  
պիտի քայլեցին: Մշուշի քուլաները թավալվում էյին բլրակներն ի  
վար, քարը գալիս, ցրվում դեպի դաշտերը... և արոտների կանաչ  
խոտերը, արտերի ցորենի հասկերը կոացրել էյին գլուխները կաթիլ-  
ների ծանրության տակ:

\* \*

Մերունին ոկսել էր ավելի հանդարտ քայլել: Նրա հնամաշ  
տրեխներից ջուրը հոսում էր գուլպաների մեջ, վոտները թրջում: Խո-  
նավութունը թափանցում էր բաց կուրծքը, և վերարկվի վրա մշու-  
շից կաթիլներ էյին դիզվում:

Անցնելով միառմի դիտում էյի յերկու կողքի արտերը: Ծառերի  
միայն մի քանի ակոսներն էյին ավրվել և մեջտեղերում լճակներ  
գոյացել:

Մի քանիսը լիովին վազողվել էյին: Ջրի հոսանքներն արմա-  
տախիլ էյին արել, քշել-տարել ցորենի դալար ծիլերը և հավաքել ա-  
կոսների մեջ:

Յե՛ն էր գոյացել ամեն մի փոքր շավղի վրա. ամեն մի փոսի  
մեջ պղտոր, կարմրագույն ջուր էր կիտվել, և շատ հասկեր լողում  
էյին նրանց յերեսների վրա վորպես խեղդվածներ:  
— Վախ, վախ, — արեց ծերունին ու առաջ գնաց:

## XVII. ՇԱՂԿԱՊՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Շաղկապներից պե՛տ է հի՛շել հետևյալների ուղղագրությունը.

ա) Բարդ համազասական Շաղկապներ.

նաև,	այլև,
նույնպես և,	ուստի և,
այն ել,	մինչև իսկ,
նույնիսկ,	մինչև անգամ,
նամանավանդ,	կամ թե:

բ) Ստորագասական յե՛վ բաղադրյալ ստորագասական Շաղկապներ.

վորպեսզի,	վորովհետև,
հենց վոր,	այնպես վոր,
մանավանդ վոր,	թե վոր,
յեթե վոր,	թեպետ և,
նախ քան,	մինչդեռ:

## ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

\* \*

1. Մեր ճանապարհն առժամանակ սարի բաշովն էր անցնում:  
Ապա իջանք ձորի յեզերքը, ուր մի կածան գնալով հակվում էր  
դեպի անդունդը: Ջիերն այդտեղով քայլում էյին դարմանալի զգուշու-  
թյամբ, վորովհետև ամենափոքր տատանումը կարող էր գլորել  
նրանց դեպի ահարկու դառիվայրը, վորի ստորոտն անտեսանելի յեր  
վերևից: Դիչ ժամանակից հետո նորից սկսեցինք բարձրանալ, բայց  
այժմ արդեն չոր բլրակի կողերով, վորոնց վրա բարձրից հոսող հե-  
ղեղները պատվածքներ բանալով, անշմամբելի էյին դարձրել ճանա-  
պարհի հետքերը: Ջիերը շարունակ սահում էյին այդ դառիվայրի վրա,  
վորովհետև հողը փխրուկ լիկելով՝ փշրվում էր նրանց սմբակների  
տակ:

(Մուրացան—Վնայի աղավր):

2.—Սպասիր մի քիչ, —ասաց քարտուղարը, և գրիչը նրա ձեռքին  
պե՛տ շարժվել ավելի արագ: Նա շուտով գրեց, վերջացրեց թուղթը  
և գրած մյուս թղթերի հետ միասին ծալեց ու տվեց աշակերտին:—



Ահա, տար և վոր ելի գալու լինես—հարցրու՝ քանի՞ կողոն և պակասա՞

(Նար-Պոս—«Նեղ որերից մեկը»)

3.—Ո՞ւր ե խմբագիրը, ինչո՞ւ չի ողնում:

—Գնացել ե փող ձարելու, վորովհետև տպարանատերն սպասու- նացել և, վոր յեթե այսոր փող չստանա, համարը բաց չի թողնի: Եզուց-ելոր բաժանորդագրու թյուն ենք բանալու, և հանկարծ—այս- պիսի խայտառակություն... Գրիր, գրիր, խոսելու ժամանակ չես:

(Նար-Պոս—«Նեղ որերից մեկը»)

4. Պատրիկյանը, իբրև պարապմտող և իբրև ձրի աշխատակից, խմբագրատան ամենորյա այցելուն էր, այնպես վոր քարտուղարն ու նա, վորոնք մտերիմ ընկերներ էյին, այլևս չէյին բարևում իրար տեսնելիս: Այս անգամ ևս Պատրիկյանը մտավ քարտուղարի սենյակն առանց բարևելու, նստեց գրասեղանի ծայրին, վերցրեց տեղական ոտու լրագրերից մեկը, վորոնցից քարտուղարը լուրեր էր թարգմա- նում, և սկսեց կարդալ:

(Նար-Պոս—«Նեղ որերից մեկը»)

5. Ամառվա յերկարատև, անտանելի տոթ ուրը նոր էր մթնել: Պատով Հեղնարը և նրա յերկու փոքրիկ թոռները—մեկը տղա, մյուսն աղջիկ—ծալապատիկ նստած էյին թախտի վրա և հայտնի չե՝ ճաղ թե ընթրիք էյին ուտում, վորովհետև իրենք էլ չգիտեյին՝ վորն էր իրենց ճաշը և վորն՝ ընթրիքը: Կապույտ սուփրի վրա պլպլում էր մի փոքրիկ լամպ, վոր չմաքրած ապակու միջից պղտոր լույս էր սփռում նրանց հոգնատանջ, քրտնած յերեսներին:

(Նար-Պոս—«Թե ինչ պատահեց»)

1. «ԶՈՒՂ ՀԱՎՈՒՇԻՆԵՐԻ ԼՃԱԿԸ»

(Անգլիացի ջուլհակուհու պատմածը)

\* \*

Բասնինը տարի յես աշխատել եմ բամբակեղենի գործարանում: Իմ կյանքի լավագույն տարիները յես տվել եմ տիրոջս: Յեռ գեռ առողջ եմ, կարող եմ աշխատել:

Բայց յես մոռացել եմ, թե վերջին անգամ յերբ էյի կանգնած դադգյահի առաջ: Հիմա աշխատանք վորոնելը ժամանակի անողուս կորուստ է: Մեր քաղաքի 63 ձեռնարկությունից 57-ը չեն աշխատում: Յերթասարդ, առողջ մարդկանց մի ամբողջ բանակ անգործ թափա- սում և, մեծ մասը կանայք:

Վորքան են նրանք: Չգիտեմ: Ասում են տա հազար լրիվ գոր- ծագործներ են և տասնյոթ հազար հոգի էլ այնպիսիները, վորոնք շաքածական յերկու-երեք որ են աշխատում, յերբեմն էլ ամիսը մի քանի որ: Յոս այդ թերթերին չեմ հավատում: Մեզ մոտ գործագործ- ների թիվն ավելի շատ է:

\* \*

Բանվորական ընտանիքներից մեծ մասում լավագույն դեպքում աշխատում ե միայն հայրը: Միակ գրադմունքը, վորի մասին յերի- տասարդ աղջիկը դեռևս կարող է յերազել, դա աղախնի պաշտոնն է: Բայց այդպիսի յուրաքանչյուր անդի համար հարյուրավոր ցանկացող- ներ կան:

Տասնյակ հազարավոր յերիտասարդ աղջիկներ ապրում են սար- տափելի կարիքի մեջ, ապագայի համար վոչ մի հույս չունենալով: Արժե վորեւ արհեստ սովորել, յերբ գիտես, վոր միևնույն է, աշխա- տանք չես ստանա:

Իսկ ինչպե՞ս են նրանք ապրում:

Բալտիսում հարցրեք ամեն մի անցորդի, թե ինչպե՞ս գտնել «Զուլհակուհիների լիճը»: Նրանք ձեզ ցույց կտան մի լճակ, վորի մեջ շատ յերիտասարդ կանայք իրենց հաշիվն են փակել կյանքի հետ: Մրանից էլ նա ստացել է «Զուլհակուհիների լճակ» անունը:

2. ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՄԱՐ

Մտախանովյան կիսամյակում յես արտադրել եմ յերեք հարյուր հիսուն հազար մետրից ավելի հյուսվածք:

Յես հաշվեցի, թե գրանից քանի զգեստ կարելի յե կարել:

Դուրս ե գալիս հարյուր տասնվեց հազար զգեստ:

Ուրիշ էլ վոր յերկրում ե ջուլհակուհին հպարտանում իր աշխա- տանքով: Միայն մեր յերկրում ամեն մի բանվորուհի իր ամենամեծ յերջանկությունն է համարում սալ իր հայրենիքին այն բոլորը, ինչ վոր կարող է:

Հազարավոր բանվորուհիներ և կոլանտաուհիներ տիրապետում են տեխնիկային, կիրառում են աշխատանքի նոր մեթոդներ, վոր- պեսզի յերկրին ավելի շատ արդյունք տան, վորպեսզի կյանքն ավելի լավ լինի, ավելի առատ, ավելի ուրախ:

\* \*

Հիմա յես իմ յերկուհարյուր տասնվեց դադգյահիների վրա յոթ



ժամվա ընթացքում արտադրում եմ յերկու և կես հազար մետր հյուս-  
վածք: Յես այլ կերպ ել աշխատել չեմ կարող՝ իմ ուժերը, գիտե-  
լիքներս ինձ թույլ չեն տալիս վատ աշխատել:

Վարպետդ յերկրին ել ավելի ոգուտ տամ, յես պատրաստվում  
եմ արդյունաբերական ձեմարան մտնելու համար: Կգա ժամանակը և  
յես կգտնեմ ինժեներ, ինժեներ-ստախանովական:

Վորակդ, ել վճիռ յերկրում ջուլհակուհին կարող ե յերազել ձեմա-  
րանի մասին: Դա միայն մեր յերկրում ե, մեր հարազատ Անիին—  
Ստալինի կուսակցության յերկրում:

Յես սիրում եմ իմ հայրենիքը: Նրա համար են աշխատում իմ  
ձեռքերը: Իմ հարյուր հազարավոր մետր լավ վորակի հյուսվածքը  
պետք կգա ընկեր Վորոշիլովին՝ Կարմիր բանակի մեր սիրելի մար-  
տիկների համար:

XVIII. ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ա. ՏՐՈՂՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

1. Վերջակեսը դրվում ե յուրաքանչյուր պարզ և բարդ նախադասու-  
թյան վերջում և տյախտով խոսքի բաժանում ե կամ տրոհում նախադասու-  
թյունների: Վերջակեսն արտահայտում ե համեմատաբար յերկուս  
դադար  
կամ հանգիստ:

Որինակ՝

1. Յես կանգնած եմ սեպացած բլրի գագաթին: Իմ առաջ մերթ  
վտակեփայլ, մերթ արծաթափայլ շողշողում եր ծովի պես սփռված  
հաճարի հասուն արտը: Բայց այդ ծովը չեր ծփում: Ողբ խեղդուկ ու  
անշարժ եր և գուշակում եր մի մեծ փոթորիկ:

(Տուրգենևով—«Աղավնիներ»)

2. Նա իսկույն պատմեց իր ուրախության պատճառը: Յերկու  
որ է՝ նրան կանչում են «Մերսոն» շոգենավը: Այնտեղ նա նվազում  
ե նավապետի և իր ոգնակաճների համար: Այստեղ ոգնակաճներից  
մեկը տալով նրան իր մանգոլինան՝ առաջարկել ե նվազել: Անվունը  
կատարել ե նրա ցանկությունը: Նավապետին առանձնապես դուր ե  
յեկել «Մադրիդի շրջմուկիկը»: Նա մի շատ բարի մարդ ե:

(Շերվանդադե—«Արտիստը»)

2. Միջակեսը դրվում ե.

ա) Բարդ համադասական նախադասության մեջ համադաս նախա-  
դասություններից հետո, յերբ նրանք բով բավական օտս են և բայտը  
միտսին մի պատկեր կամ ամբողջական նկարագրություն են տալիս:

Որինակ

1. Սոճոր գործարանների շշակները սուրկեցին. կանգ առան գնացք-  
ները. կանգ առան նավերը. գլխահակ անշարժացան հետիոտները,  
խոնարհվեցին բոլոր դրոշակները. քարացավ ամեն ինչ՝ մեծ Անիին  
աճյունը գերեզման իջեցնելու պահին:

2. Միսում չիմացա. յերենները բաշխողով ծածկել եյին, մենակ  
աչքերը բաց թողել. միայն մեկի ձենը Սարոյինց Միկիչին նման  
ավեց: Ասենք դե ովքեր պետք ե լինեյին. մեր գյուղի կուլակները,  
մեր կուլսոզի թշնամիները...

(Արազի—«Հույսերը»)

3. Նա շարունակ պատվում եր Ակորի շուրջը. մեկ վերմակն եր  
ուղղում, մեկ բարձր. նայում եր աչքերին. ախանջ դնում շնչառու-  
թյանը: Ակորը պառկած եր կիսարթուն. նա կսկծում եր վերքերի  
ցավից ու խոժոռած դեմքի վրա արտահայտում գոսված գայրույթ,  
խիտ աև հոնքերը մոտեցել եյին իրար, կնձուել ճակատը:

(Արազի—«Հույսերը»)

բ) Ուրիշի ուղղակի խոսքից առաջ:

1. Վախեցրին, — մտածեց նա, — ենքան ել խո քարատիրտ չե՞ն:  
Հալբաթ լեռնիչուն ասել են, յեկել-տեհել, վոր վարած հողն անպետք,  
դեն գցած, վատ եր ու ասել են. «Թող մնա Թեվոսին, մեղք ա, ողլու-  
շաղի տեր, հողը քիչ... Համ ել մարդը գիտի չափը, ախր քրտինք ա  
թափել վրեն... Թող վայելի, խեղճ ա»...

(Փափազյան—«Հողի աշխատվորը»)

2. Աղջիկը հազիվ լինել 10—12 տարեկան: Նա շտապով վարդե-  
րից մի փունջ կապեց և թողեց ու փախավ: Հաֆիթի դարմանքին և  
բարկությանը սահման չկար: Բայց վոչինչ չեր կարելի անել. աղջիկն  
արդեն ծածկվել եր աչքից: Հաֆիթը վեր առավ մագաղաթը և ասա  
թե ինչ գրեց.

«Թող վարդն իր թփին: Յեթե քաղվի՝ նա կմեռնի, և դու չե  
տեսնի նրա գեղեցիկությունը և հոտը չես առնի: Թող վարդն իր թփին:  
Միթե դու չես կարող՝ չքաղած հիանալ նրանով: Թող վարդն իր թփին:  
Յեթե չքաղես նրան, քեզ համար կասեն՝ դու իմաստուն ես, դու գթու-  
թյամբ լցված ես. իսկ յեթե քաղես, կասեն, վոր քո ձեռները վայրագ  
են, քո սիրտը՝ անողորմ: Թող վարդն իր թփին»:

(Ա. Մակոյան—«Բանաստեղծի վարդերը»)



**Յ. Ստորակեցը գրվում է.**

ա) Յերկրադաշտան նախադասութիւնից առաջ և նետ՝ գլխավոր նախադասութիւնից զտեսելու համար.

**Որինակ՝**

1. Ել ինչ է լինում, ինչ չի լինում, մի թունդ կռիվ ու հայհոյանք հետևում է դրան:

Մանրամասն չի հասել մեզ, թե ինչպէս է լինում, վոր Հարեթ ազան մի թունդ, լիտի հայհոյանք է բաց թողնում բերնից, հետեւից ել մի մեծ ապտակ հասցնում Սողոմոնին: Սողոմոնն ել մոռանում է աղա, պարաք, անճարութիւն, արյունը գլուխն է խփում, տանում բերում և այնպիսի մի հարված է հասցնում աղային, վոր քա հետհետ է գնում ու խանութի գետինը չափելու պատկում:

(Փափազյան—«Չըռ-չըռ-քարը»)

2. Մեերաբը մեքենայաբար գլուխը բարձրացրեց, դառը տանջանքի կնիքը դրոշմվել էր նրա ճակատի վրա, աչքերը փայլում էին, գեմքն արտահայտում էր խելագար բարկութիւն: Նա այդ գրութիւն մեջ նմանվում էր մի կատաղի և հուսահատված առյուծի, վորը պատրաստվում էր հարձակվել իր թշնամու վրա:

(Շիրվանզադե—«Հրդեհը...»)

3. Ի՞նչ կարող էինք անել այժմ վշտից և հուսաբեկութիւնից անկողին ընկած թշվառին, յեթե վոչ՝ միմիայն վշտանալ նրա հետ, հուզվել և զայրանալ թե թե՛վոսի միամտութիւն վրա և թե աշխարհի խիտ անիրավ, չափազանց անարդար անհավասարութիւն և ընկերական զգվելի որենքներ զրա...:

(Փափազյան—«Հողի աշխատավորը»)

4. Հողի աշխատավորը կարծել էր, թե քրտինքն ու աշխատութիւնը նույնքան արժեք ունեյին հողի տեր դառնալու համար, վորքան բոնի ուժը կամ լրբութիւնը: Մակայն նրան շատ ազդու կերպով հասկացրել էին, վոր դեռ չեն յեկել այդ որերը, և վոր հողի տերը նա յե, վոր ուժ ունի, ունի զարնող ձեռք, կաշառելու, քծնելու վարպետութիւն, ունի մանավանդ բուռնցք, կոպիտ, վայրենի, գազանային բուռնցք...:

(Փափազյան—«Հողի աշխատավորը»)

բ) Համադաս նախադասութիւնների և նախադասութիւն բազմակի

անդամների միջև, յերբ համադասական բաղկացման չեն գրված կամ գրված են բայց, իսկ, սակայն համադասական բաղկացման.

**Որինակ՝**

1. Սրինգը դրեց բերնին և սկսեց ածել: Վոչխարները տեսան ներու վիճակը՝ կանգ առան, մտածեցին հետ գնալ, բայց դյուրութեամբ էյին, առաջ գնացին:

(Փափազյան—«Լուր-դա-լուր»)

2. Մեկը գտնում է բոլոր մուրհակները, դիզում, վառում է, իսկ Սողոմոնը վար է բերում տանտիրոջ արծաթապատ հրացանը, կամ մենալով զրկել նրան պաշտպանվելու միջոցից:

(Փափազյան—«Չըռ-չըռ քարը»)

3. Մինչև այդ, աղայի կինը օթափվում է, դուրս է վազում և ձիչ ու աղմուկ բարձրացնում: Լսվում են աղմուկներ, շներ ի հաջոց: Պետք է փախչել, բայց ազան ձյութի պես կպել է հրացանից, վոչ աքացիները, վոչ գլխին տված բուռնցքները չեն կարողանում պոկել նրան: Յեղբայրները հասկանում են, վոր վաշխառուն դիտմամբ է սարքում այս տեսարանը՝ մինչև ոգնութիւն հասնեն, բունն նրանց, և կամ, յեթե հրացանը թողնեն, հետևից գնդակահար անի մեկնում է մեկին:

(Փափազյան—«Չըռ-չըռ քարը»)

4. Յեվ ձեռնարկել էր հողի մյուս մասն ել մաքրելու, թեև արդեն ցուրտն սկսվել էր, և ձմեռը վրա յեր հասնում: Մտածում էր՝ գոնե փշերից ու տատակներից ազատի հողն այդ տարի, իսկ գարնանը միանգամ ևս շուռ կտար փխրացած հողը, գետնախնձոր կցաններ, ապա կաղբեր, ելի կվարեր... մի խոքով՝ մի լավ արտ կշիներ:

(Փափազյան—«Հողի աշխատավորը»)

գ) Միջանկյալ բառերի և միջանկյալ նախադասութիւնների սկզբից և վերջից.

**Որինակ՝**

1. Պատրիկյանը կամաց նստեց, գլխարկը ծնկներին վրա բռնած, և նայեց շուրջը: Սենյակը զարգարված էր դահլիճի պես՝ փարթամորեն:

(Նար-Ռոս—«Նեղ որերից մեկը»)

2. Բայց ով տարիներով ապրել է մեծ քաղաքում, միշտ միև-



նույն նեղ փողոցի վրա, նույն ապականված միջնուղորտի մեջ և գործել շարունակ լույսից ու ոգից դուրկ մի գրասենյակում, վորի բոլոր հրապույրը կազմում են յեղել չոր հաշվեմատյանները, յերկաթե պահարանը և անմիտ համրիչը, իրեր, վորոնք առնչություն ունեն միայն փողի և հաշվի հետ, բայց վորոնց անծանոթ և օրորը և ավելի ևս զգայուն հոգին, իրեր, վորոնք մարդու ուղիզը բխացնում, աշխուժ մարում և հոգին նվաստացնում են... Այդպիսին հարկավ կարողանալ կկարոտի այն ամենին, ինչ-վոր անհրաժեշտ և բնության զավակի համար. կկարոտի նրա դաշտին ու մարդին, նրա հովտին ու առվակին, նրա անտառի անուշ հովերին:

(Մուրացան—Շնոյի ազգովը)

3.—Բանը մի քանի որվա մեջ չէ: Մի քանի որ, ինչո՞ւ չէ, կարելի չէ սպասել, և տեսնում եք, վոր սպասում եմ: Բայց ցավն այս է, վոր մի քանի որից հետո, յերբ դարձյալ յեռ ինքս ստիպված լինեմ հիշեցնելու ձեր պարտքը, դուք կգաք ինձ մոտ, ինչպես այժմ եք յեկել, և դարձյալ կխնդրեք, վոր դարձյալ մի քանի որ սպասեմ: Յետ այդ փորձով գիտեմ և այդ բանի վերջը չեմ տեսնում:

(Նար-Դոս—Շնեղ որերից մեկը)

դ) Իրար հաջորդող այնպիսի նախադասությունների միջև, վորոնք բեն կապված են և շաղկապով, բայց ունեն արբեր յենրականեր:

Որինակ՝

Վորդուն նստեցրել և մի լծի վրա, վարձել եր չորս զույգ գոմեշ, և գութանի տակ հողն արագությամբ շուռ գալով խոր ակոտներ եր կազմում:

(Փափաղյան—Հողի աշխատավորը)

2.— Ի՞նչ հարկավոր է, վոր այդ բաները պատմում եք ինձ,— շատակեց ընդհատել Պատրիկյանին տանտերը, և նրա բրոնզյա դեմքի վրա յերևացին դժգոհության պարզ նշաններ:— Դուք կրթված յերթատասարդ եք, և ձեր անձնատիրությունը չպետք է թույլ տա, վոր ուրիշի պատմեք ձեր մասնավոր կյանքը:

(Նար-Դոս—Շնեղ որերից մեկը)

3.— Ի՞նչ դուք գիտեք,— տասց տանտերը և վերկացավ:— Ձեր կողքի կենողը, այն հրեա այրի կինը, վոր դանակներ և կողպեքներ է ծախում բակի դռան մոտ, տասը տարի յե՛ կենում է, և չեմ հիշում մի

ամիս, վոր ամենայն ճշտությամբ վճարած չլինի սենյակի վարձը: Նսայելով, վոր մեն-մենակ այնքան էլ անագին ընտանիք և պահում: Ատել այն է, վոր... Ինչևիցե, ցտեսություն: Մի քանի որ կապասեմ:

(Նար-Դոս—Շնեղ որերից մեկը)

4. Այդ ժամանակ դուրգարի կինը՝ մաղերը թափթփված, կուրծքը բաց, շքազգեստի փեշերը բռնած՝ բարձրանում եր տանիքի տակ չորացած շորերը վերցնելու: Հանկարծ սարսափի մի ճիչ լսվեց տանիքի տակից, և դուրգարի կինը, խելագարի պես, փակ աչքերով, չորեքթաթ, հետ-հետ գալով թռավ սանդուխքից:

(Տոյտոյ—Շոյիկուշկա)

5. Մայրը զարթնեց, բաց արավ լուսամուտի փեղկերը: Գարնանային արեգակի շողերը վոսկեգոծեցին մանկան յերեսը, և նայեց մայրն ու նրա սիրտն սկսեց ուժգին բարխել... Այն ինչ անդորր ու յերջանիկ ժպիտ եր մանկան դեմքի վրա: Յերբեք, յերբեք նա չեր տեսել այդքան պայծառ, այդքան ուրախ ժպիտ:

(Շիրվանզադե—Վյանքի ժպիտը)

ե) Կոչականներից առաջ և հետո՝ նախադասության մյուս անդամներից գտնելու համար՝

Որինակ՝

1. Բարեկ, թանկագին, սիրելի ընկեր ՄՍԱԼԻՆ: Մենք կատարեցինք քո առաջադրանքը: Բայց դրանով մենք չենք հանգստանա: Մենք արդեն մտածում ենք նոր, ել ավելի հոյակապ մարշրուտներով մասին, վորովհետև չկա ավելի մեծ պատիվ, քան աշխատել ի փառս կենսինի—Ստալինի մեծ, անպարտելի զորշի:

(Զկարով, Բայրուկով, Բելուկով)

2. Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք:  
3. Ահա, ընկերներ, մեր քաղաքի պարծանքը, Սինթետիկ Կաուչուկի գործարանը:

4. Վոդյուն ձեզ, հերոս մարտիկներից, վոր մարտնչում եք Փաշիզմի դեմ՝ ազատ Իսպանիայի համար:

5. Վերադառնանք սակայն Հարեթ աղային: Յեվ այսպես՝ նա իր գրականի և բռան մեջ եր հուպ տալիս մի ամբողջ դավառ: Իր յուզը, պանիրը, բուրգն ու հնձվորները՝ տոկոսի տոկոսներն եյին՝ իսկ տոկոսի տոկոսի տոկոսները.— «Այսօր բազա փորելու յեկ, Արշակ... Եզուց յեղներդ զրկիր գութանի, Մարկոս... Յեկող շարաթ պատասպիտի շինե», ուստա Ղազար...»: Յեվ կամ «Ես ուր եմ, այնպես»



զազա թորոս, բաս թողնելու յն՞ս, վոր ետ ծեր հալովս գնամ ցորենս հնձեմ, բերեմ կալա...»: Հասկանում եք... Սրանք բուն սովորները չեյին դեռ. բուն սովորներն սկստ մ եյին ձմեռնամուտին... «Լազար, մուրհակիդ որը հասել ե... Ադա Մարկոս, փողոս չե՞ս տալու... Տո Արջակ, թե փող չունես սովոր տալու, ել հըր ես հարողիդ խտը սուն աանում...» Յեվ ժողովում եր ու ճգնում բարդից ավելի անգուլթ:

(Փափազյան—Չըս—չըս քարը)

զ) Շեզված կրկնակ յեվ... յեվ, քե... քե Ետիկապետով սկսվող համադաս նախադասությունների և բազմակի անդամների միջև.

Ուրիմակ՝

1. Այգիների վրա ամառն է շնչում, սփռելով իր վոսկեգուլն քողը: Թվում է, թե ամառը մի շուշլ ներկարար է, վոր վոսկու գույնով ներկում է ամեն բան, թե արտ, թե արոտ, թե կալ, թե այգի:

2. Գուլ լտում էս այնտեղ, դրսում  
Շաչ ու շառաչ, լաց ու կոծ,—  
Մեր արյունն է այնտեղ հոսում,  
Ներկած է՝ տուն, է՝ փողոց...

(Մատուրյան—Բանվորուհու որորը)

3. Այնտեղ է և մեր աչքի լույս,  
Մեր ոջախի վառ ճրագ—  
Հայրդ կուլում՝ սիրտն ալեհույզ,  
Սրտում է՝ թույն, է՝ կրակ:

(Ալ. Մատուրյան—Բանվորուհու որորը)

4. Ամեն ինչ, ամեն ինչ նրա յերջանկության համար է յեղել, է՝ յերկիրն ու յերգիւնքը, է՝ ծովերը, է՝ աստղերը, համայն աիեղերքը մարդու համար: Յեվ մարդն յեղել է հպարտ ու վեհ, ուրախ ու յերջանիկ:

(Շիրվանզադե—Կյանքի ժպիտը)

5. Թե «Անուշ», թե «Ալմաստ», թե «Բաջնազար» և թե «Լուսաբացին» ոպերաները Խորհրդային Հայաստանի կուլտուրական նվաճումներն են:

6. Անտառի խշրոցի հետ նրա ականջին եր հասնում արվի քըչ-քըչոցը... նա ճանաչում էր այդ արուեստ. հնձի ժամանակ քանի անգամ էր հաց կերել նրա մոտ... Առվի քըչքըչոցի հետ Յեկրեմ պապի ականջին եյին հասնում և թռչունների յերգը, այդ արտուտներն եյին յերգում, է՝ խտերի շրշուռը, է՝ հովից որորվող թփերի շրուռը...

(Չորյան—Գապն ու թուրը)

է) Վորոցային հետադաս վարժիչներից առաջ է հետ.

Ուրիմակ՝

1. Կոլանտեսային գարունը, չքնադու բերկրալից, բազլում էր արդեն բոլոր կոլանտեսականների դռները:

2. Պիոներներն ու դպրոցականները, ճամբարների ու ամառանոցների բերկրալից որերն անցկացրած, թարմ ուժերով ու զվարթ խմբերով դպրոց են հավաքվում:

3. Դպրոցական շենքերը, նոր կառուցված, վերանորոգված ու գեղեցկացված, իրենց դռները բաց են անում մեր խորհրդային յերջանիկ ու կայտառ պատանիների առջ:

4. Մեր յերկիրը, անցյալում կեղեքված ու քայքայման յենթարկված, խորհրդային արեվի կենսատու ճառագայթների տակ ծաղկել է փարթամ ու գեղածիճաղ պարտեղի նման:

4. Բուրբ դրվում է.  
ա) բացածայսյալի վրա.

Ուրիմակ՝

1. Մեր ջերմ վողջույնն ընկեր Ստալինին՝ պորլետարիատի իմաստուն առաջնորդին:

2. Անճանաչելի յե դարձել Յերեվանը՝ Խորհրդային Հայաստանի մայրաքաղաքը:

3. Աղայանը մեռավ 1911 թվին: Նա սկսել էր գրել դեռ պատանի հասակից: Իր նշանավոր գիրքը՝ «Արություն և Մանվելը» նա գրեց Պետերբուրգում (Լենինգրադում):

4. Մեկ էլ հանկարծ տեսա նրան՝ ծանոթիս, վորին տասնեկինգոր յերազել եյի՝ ուղղակի աչքերիս չեյի հավատում:  
(Ա. Իսահայան—Ընկերը)

5. Ու ման է գալիս քարերը ընկած  
Սարոն՝ փախցրած յեղջերվի նման,  
Որհասն առաջին, գնդակն յետևից,  
Հանդերը՝ դժգոհ, ընկերը՝ դուշման:

(Չ. Բուճանյան—Անուշ)

բ) Ուրիշի ուղղակի խաբից առաջ, յերբ այն ջառ կտրն է.

Ուրիմակ՝



1. Վշվշում ե դետը—վճւշ, վճւշ,  
Ու հորձանք ե տալիս հորդ,  
Ու կանչում ե՝ «Արի, Անուշ,  
Արի տանեմ յարիդ մտա...»:

(Հ. Թումանյան—«Անուշ»)

2. Յերբ ուշքի յեկա, տեոս, վոր պառկած եմ ոենյակում, մահ-  
նակալի վրա, մայրս նստած ե կողքիս՝ սառը, գունատ, չոր դեմքով,  
իսկ Թոմաս Գասպարիչը—դիմացը՝ աթոռի վրա, վշտից սասած ու  
կուշ յեկած: Սկզբում կարծեցի, թե առավոտ ե և նոր եմ զարթնում,  
բայց յերբ նայեցի մորս, Գասպարիչին, նայեցի շուրջս, դարձյալ  
մորս, դարձյալ Թոմաս Գասպարիչին, արդեն յեղելությունը պարզ-  
վեց ինձ համար: Յեվ մինչև հիմա յես զարմանում եմ, թե այդ  
ժամանակ ինչպես կարողացա այնքան հանգիստ լինել:—Վոչ մի հա-  
ռաչանք, վոչ մի արտասուքի կաթիլ, վոչ մի դառնություն, վոչ մի  
վիշտ. կարծես մեռած եյի և զգում եյի, վոր մեռած եմ: Ատում եյին  
կեր՝ ուտում եյի, խմիր՝ խմում եյի, հագիր՝ հագնում եյի, բեր այս-  
ինչը՝ բերում եյի, տար այս ինչը՝ տանում եյի, արի՛ գալիս եյի,  
գնա՛ գնում եյի, մի խոսքով անում եյի, ինչ վոր ասում եյին և ա-  
րածս՝ վոչ հասկանում եյի, վոչ զգում:

(Նար-Դոս—«Աննա Սարոյան»)

գ) Նախագառուրյան. վառեւ գեղյված անդամի փոխաբեմ.

Որինակ՝

1. Զանգը տվին:

Գիքորը վեր թռավ: Ասել եյին, թե յերբ զանգը տալիս են,  
գնա տեսնի՛ ով ե, ինչ ե ուզում: Նա գուրս յեկավ, պատշգամբից  
նայեց, տեսավ՝ մի պարոն ու մի քանի տիկին զոտն առաջը  
կանգնած:

(Հ. Թումանյան—«Գիքորը»)

2. Ամուսնու վտանաձայնը վոր լսեց՝ սկսեց արտասովել, ավելի  
բարձր խոսել ու ամաններն իրար գլխով տալ:

—Ասում եմ՝ դուրս արա կորչի. յիս ծառայի բանն ել կտանեմ,  
թե խնայում ես՝ փող տաս, կարգին ծառա բռնեա... Լավ ե մարդ  
ծառայի տեղ ել քաշ գա, քան թե ամեն որ եսեց սիրտը շուտ բերի...  
Իմ թշնամին հո չեա...

(Հ. Թումանյան—«Գիքորը»)

3. Միլիոնավոր պայթյուններին, հարձակումի ականներով,  
Արփաչայի ժեռ ափերին գրոհ տվող ուռաներով,  
Դիրքերից - դիրք, նվաճումներ, մի թոննելը գողող մյուսին,  
Աշխատանքի հերոսները մատի շարժով նրան ասին.—  
Ուր ձեռք մեկնեա՞ այնտեղ հրաշք, այնտեղ մի գյուղ թող կանաչի,  
Ուր յերևաս, ուր ել հասնես՝ մի նոր սերունդ այնտեղ աճի.  
Ով ծարավ ե՞ թո՛ղ հագենա, ով յարամազ՝ թող կշտանա...  
Այսպես ե մեր Շիր-Կանալը, մի գյուղերցի ողուլ ե նա  
Յեվ դարգիման, և՛ որտարուխ, և՛ լայնաշուրթ, և՛ հյուրասեր—  
Քեփը տեղը, յերգը բերնին, խոսքը շրթին, լիառատ սեր:

(Հ. Հակոբյան—«Շիր-Կանալը»)

4. Մենք գոհ ենք մեր բերկրալից կյանքից, հպարտ՝ մեր գործով  
և անպարտելի՛ մեր ուժով:

5. 1878 թվին Պարոնյանը լույս ե ընծայում իր ամենախոշոր  
գիրքը՝ «Ազգային ջոջեր»-ը, վորով ծաղրում ե իր ժամանակի հայ  
հարուստներին և գործիչներին: Դրանից հետո հրատարակում ե «Մե-  
ծապատիվ մուրացիկաններ», «Ծիծաղ» և «Պատույտ մը Պալոս թաղե-  
րուն մեջ» գործերը:

6. Պոռոյանի առաջին վեպը՝ «Սոս և Վարթիթեր»-ը սպազբը-  
վում ե թրխիսիում 1860 թվին: Այս վեպն իր վրա յե գրավում ըն-  
թերցողների ուշադրությունը և Պոռոյանի անունը հայտնի յե դառ-  
նում վարպետ գրողի:

դ) Պարագայի վրա, յերբ այն արտահայտված ե դերբայական լրացու-  
մով և ինքն ունի կողմնակի լրացումներ:

Որինակ՝

1. Ծովանն ականջները խլշած՝ ուշադիր նայում եր մարդկանց և,  
նրանց հոգատար վերաբերմունքը տեսնելով՝ մտածում եր, վոր իրեն  
յերևի չեն նեղացնի և հանգիստ կթողնեն:

(Ստ. Զորյան—«Ծովանը»)

2 ... Առավոտը զարթնեցի՛ մի անսովոր ծանրություն որտիս վրա:  
Շուտով խմելով մի բաժակ թեյ՝ գնացի վերև: Կեսնը տանը չեր: Ալ-  
մաստն ասաց, թե գիշերը, անկողին պառկելուց առաջ, տվել ե իրան  
հիտուն ուրբի և համբուրվել հետը, թե գրեթե ամբողջ գիշեր նստած  
ե յեղել գրասեղանի առաջ, գրել ե, ջնջել, պատուի: Առավոտը կրկին  
համբուրվել ե նրա հետ և դուրս գնացել, տանը թողնելով կիթառը,  
վոր ամեն որ հետը տանում եր:

(Շիրվանզադե—«Արախաբ»)



3. Տխուր, անմոռանալի յերեկո. առաջին անգամ կողորովելուց հետո Լևոնի դեմքի վրա տեսա այդ յերեկո ուրախ ժպիտ: Նա իսկույն պատմեց իր ուրախութեան պատճառը: Յերկու օր է նրան կանչում են «Ներսոն» շոգենալը: Այնտեղ նա նվազում է նավապետի և իր ոգնականների համար: Այսօր ուղնականներից մեկը տալով նրան իբր մանդոլինան՝ առաջարկել է նվագել: Լևոնը կատարել է նրա ցանկութունը: Նավապետին առանձնապես դուր է յեկել «Մարդիկ շրջմոլիկը»: Նա մի շատ բարի մարդ է: Իմանալով, վոր Լևոնը ձգտում է գնալ Իտալիա՝ այսօր խոստացել է ոգնել նրան: Յերկու օրից հետո «Ներսոնը» գնում է Կրոնշտադտ: Այնտեղից հետ է գալու և ուղևորվելու յե Միջերկրական ծովը, հետո Հնոավոր Արեւելք: Անա այդ ժամանակ նա կվերցնի Լևոնին իր մօր հետ և կտանի մինչև Իտալիայի սահմանները...

(Շիրվանյազե—«Արաբազ»)

ե) Նախադատութեան մեջ իրար նկատմամբ լրացում և լրացյալ չհամդիպացող, բայց իրար հաջորդող բառերը գտեսելու համար.

### Որինակ՝

1. Իգնատովի տակի ձին ընկավ և նրա վոտը ճնշեց: Լեոնականներից յերկուսը թրերը պատյանից հանած՝ ձիերից չիջնելով, հարվածներ եր, վոր տեղում եյին նրա գլխին ու ձեռներին: Պատրակովը, վոր վազել եր ընկերոջն ոգնելու, հենց այդտեղ յերկու գնդակի հարված ստացավ՝ մեկը մեջքին, մյուսը կողքին և տոպրակի պես գլորվեց ձիուց:

(Տոլստոյ—«Հաջի Մուրադ»)

2. Յերկինքն այնպես պարզ եր ու վճիտ, ոգն այնպես թարմ եր, Նազարովի հողում կյանքի ուժերն այնպես բերկրալից եյին խայտում, յերբ նա, ամբողջ եյությամբ միաձուլված իր ուժեղ ձիու հետ՝ թռչում եր Հաջի Մուրադի հետևից, վոր նրա մտքովն ել չեք անցնում, թե կարող է մի վորևե տխրալի կամ սարսափելի բան պատահել:

(Տոլստոյ—«Հաջի Մուրադ»)

3. Թշնամիները՝ օդմկով ու ճչով մի թփից դեպի մյուսը վազելով, ավելի և ավելի մոտենում եյին: Մի գնդակ ել գիպավ Հաջի Մուրադի ձախ կողքին:

(Տոլստոյ—«Հաջի Մուրադ»)

զ) Թվարկութուններից առաջ.

### Որինակ՝

1. Արովյանի ամենաշանավոր գործը՝ «Վերք Հայաստանի» վերնագիրը կրող գիրքն է, վորը համարվում է աշխարհաբար լեզվով գրած առաջին գեպը: Արովյանը ուստահայ առաջին գրողն է, վոր գրել է ժողովրդին հասկանալի լեզվով: Բացի «Վերք Հայաստանի» վեպից՝ Արովյանն ունի նաև մի շարք գրվածքներ. «Ինչպես»՝ Պարոպ վախտի խաղալիք, «Ֆեոդորա», «Ուսանանա», «Չանդի» և այլն: Պարոպ վախտի խաղալիքը՝ բովանդակում է առակներ, վոտանավորներ, հեքիաթներ՝ գրված ժողովրդական բարբառով:

2. Աղայանի գրական գործունեություն մեջ խոշոր տեղ են բռնում հեքիաթները: Նա գրել է մշակել և մի շարք հեքիաթներ՝ գրական բարձր արվեստով: Հայտնի լին նրա հեքիաթներից՝ «Անահիտ», «Արեգնազան», «Ոձամանուկ և Արեվհատ», «Լուս և մութ աշխարհները», «Ինչ ել, քիչ ել» և այլն:

3. 1887 թ. Պոտշյանը հաստատվում է Թբիլիսիում վորպես Ներսիսյան դպրոցի հայոց լեզվի ուսուցիչ: Այստեղ նա գրում է իր վեպերը՝ «Հացի խնդիր», «Կովածաղիկ», «Բիզի», «Հունոն», «Յեցեր» և այլ մի շարք մանր գրվածքներ: Պոտշյանն ունի նաև հաջող թարգմանություններ ուսերենից: Պոտշյանը մեռավ Բագվում 1907 թ. 70 տարեկան հասակում:

4. Պոտշյանը գտնվում եր նյութապես անապահով դրության մեջ: Այդ պատճառով նա ստիպված եր ուսուցչություն անել և թափառել զանազան քաղաքներ՝ Շուշի, Յերեվան, Աբուլիս, Աստրախան և այլն: Այդ ժամանակ նա աշխատակցում եր Թբիլիսիի «Կոունկ» ամսաթերթին: Ամսաթերթի խմբագրությունը հանձնարարում է Պոտշյանին շրջել հայաբնակ վայրերը և թղթակցություններ գրել: Այս նպատակով նա սովորում է լուսանկարչություն, վորպեսզի անձամբ կարողանա նկարել բնության տեսարանները և հնությունները:

## Բ. ԱՌՈՎԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

### 1. ՇԵՇՏ

Շեշտը դրվում է կոչակաթի, հրամայակաթի, ինչպես նաև նախադատության այլ անդամների վրա, յերբ նրանք տրամաբանական շեշտ են կրում:



Որինակ՝

1.—Վնխ, վնխ, իմ անմեղ վոչխարը,—մղկտաց Հասոն: Նայեց Չալխեյին, մոռացավ վոչխարին, ուժ տվավ նվազին:

Փորձեց յերկրորդ վոչխարը. մինչև իսկ թռավ, բայց կպավ ատիճանին, մի պտույտ գործեց, խզճուկ կերպով մայեց և դնաց դեպի խոր անդունդը:

—Թուեք, անցեք, իմ սիրուն վոչխարներ,—յերգում եր Հասոն. թուեք, իմ թավամազ գառնուկներ, յեկեք ձեր տիրոջ մոտ:

2.—Լն, լն լն, Սև-ջրի չնրան, սար ու ձոր մղկտացնող ջրվան, գազան սեղմացնող, քար ու ծառ հուզող չորան: Ինչո՞ւ հիմարի պես հավատացիր աղային, ինչո՞ւ բարձրացար ծայրն աշտարակի: Ձուք դառնայիր մորդ փորում, Հասո: Յերանի չմանեյիր այտաշխարհը, վոր լի յե աղաներով: Յերանի չտեսնեյիր արևի փայլը, վոր քեզ այրեց-խորովեց, Սև-ջրի ալիքները՝ վոր քեզ տրորեց, շամբի որորվելը, վոր քեզ կախարդեց:

(Վ. Փափազյան—Վուր-դա-յուր)

3. Նամակը կարգաց ու տեղը կանգնած միտք եր անում Գիքորը, դարդ եր անում իրենց տան համար: Սիրտը երում եյին նամակի տողերը:

—Նանն ու Չանին տկլոր են... Տեղներս նեղ ա...  
—Կանչի յե, տո, ինչ ես վերացել, ուշքդ հետները դնաց...—ձեն տվին ներսից:

—Ե՛ստի համեցեք, հստի համեցեք,—կանչում եր Գիքորը խանութի դռանը կանգնած:

(Հ. Թումանյան—Գիքորը)

4. Գիքորը տաքության մեջ չիմացավ հոր դավը:

—Գիքոր ջան, բա յեկել եմ ե, Գիքոր ջան... յե քու ապին եմ ե...

Հիվանդը վոչինչ չհասկացավ: Նա դառանցում եր ու դառանցանքների մեջ կանչում եր—«Միկիչ, Չանի, Ապի, Նանի...»

(Հ. Թումանյան—Գիքորը)

2. ՀԱՐՑԱԿԱՆ

Հարցախան նշանը դրվում է այն բառերի վրա, վորոնք նարգում են արտահայտում:

Որինակ՝

1. Ո՞ւմ մեղքն ե... ո՞վ ե պատճառն այդ գոհի... մոմից կարող եմ առնել այդ վրեժը... մի՞թե կրակից...—Ս.յա ասելով նա յերկու ձեռքերով սկսեց ուժգին հարվածներ տալ իր բացալիխառն մազերով ծածկված գլխին:

Վայ... յեա ի՞նչ պատասխան տամ քո զավակին... յեա ի՞նչ պիտի ասեմ քո պառավ կնոջը, նրա աչքը ճանապարհին ե մնացել... նա ու պատում է իր ծերունի մարդուն, վորը քաղաք է դնացել փող վաստակելու: Լավ վառտակեցիր...

(Շիրվանզադե—Վրդեհը նավթագործարանում)

Ի՞նչ են հառաչում... են ո՞վ եր, մի տես, վոր դուրսը հանկարծ աղմկեց ետպես... Ո՞վ ե սպանել... Մա՞րն... ո՞ւմ... ո՞ւր...  
—Անուշ, ե՛յ, Ա՛նուշ... չնւր հասցրեք, ջնւր...

(Հ. Թումանյան—Անուշ)

3. Լսում եք. սպառեք մի փոքր, յեա ձեզ կպատմեմ բոլորն սկզբից:

—Գնձում եք, լավ, յեա կպատմեմ ծաղիկներին ու խոտերին:  
—Սիրուն կակաչներ, դե, լավ լսեցեք արևի պատմությունը:  
(Սրադի—Արեվը)

4. Սիրուն կակաչներ, արևի կարմիր զավակներ, ավելի լավ չե՞ք ձեզ մոտ բերեյի իմ վոսկեճամբիկ աղջկան:

(Սրադի—Արևը)

5. Դուք գրող եք,—հարցրեց տանտերը, դարմացած նայելով նրա շփոթված աչքերին:

—Այո:  
—Ի՞նչ եք գրում:  
Պատրիկյանը գլուխը բարձրացրեց և նայեց նրան ամոթխածության ժպիտով:  
—Ո՞վ գիտե... գրում եմ ելի...

(Նար-Դոս—Շեղ օրերից մեկը)

3. ԲԱՅԱԳԱՆՉԱԿԱՆ ԿՇԱՆ

Բացազանչական նշանը դրվում է այն բառերի վրա, վորոնք պես է յերկարացվեա և զգացմունով արտահայտվեն:

Որինակ՝

1. Մութ անձամբներից, հազար ձեկերով, Բաջըներն անհանգիստ հուպիտ ձայներով, Դևի հառաչքին արձագանք տալի, Ծաղրում են նրա գոռոցն անուկի,



Ու կրկնում գիժ-գիժ,  
—Վաճ-վիճ, վաճ-վիճ...»

(Հ. Թումանյան—Վրացի Սաքոն)

2. Յեկեք քույրեր, սեզ սարերի  
Ջընաղագեղ վոզիներ,  
յեկեք, ջահել սիրահարի  
Սերը վողրանք վաղամեռ:

3. Ափսոս, Անուշ, սարի ծաղիկ,  
Ափսոս իգիթ քու յարին,  
Ափսոս բոյիգ թելիկ-մեկիկ,  
Ափսոս եզ ծով աչերին...»

4. Վաճ-վաճ, Անուշ, վաճ-վաճ, քուրիկ  
Վաճ քո սերին, քո յարին...  
Վաճ-վաճ, Սարո, վաճ-վաճ իգիթ,  
Վաճ քու սիրած սարերին...»

(Հ. Թումանյան—«Անուշ»)

#### Գ. ԲԱՅԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

##### 1. ԶԱԿԵՐՏՆԵՐ

ա) Չափերսները գործածվում են ուրիշի ուղղակի խոսքի համար,  
վարդ յերկու կողմից առնվում է նրանց մեջ:

Ուրիշակ՝

1. Գորկին շատ է գրել: Շատ բանի մասին է պատմել: Վաղի-  
միջի Իլլիչը շատ էր գնահատում մեծ գրողին: Հաճախ նամակներ էր  
գրում նրան: Նա գրում էր Գորկուն. «Ձեր գեղարվեստագետի տաղան-  
գույնը գուք Ռուսաստանի բանվորական շարժմանը—ու վոչ միայն  
Ռուսաստանի—հակալական ոգուտ բերեցիք...»:

(Մ. Գորկու կենսագրությունից)

2. Գուտենբերգի ժամանակ փայտի վրա բառեր էլին փորագրում և այդ  
կերպ գրքեր տպում: Գուտենբերգը մտածում է, «Փոխանակ տախտակի  
վրա բառերի առանձին տառերը փորփորելու, ավելի լավ կլինի, յեթե փայ-  
տից կամ մետաղից շարժական բազմաթիվ տառեր պատրաստվեն. այդ  
տառերը կարելի չե իրար մոտ դնել և կազմել բառեր, սողեր և ամբողջ յե-  
րեսներ: Այնուհետև կարելի չե մուր քսել այդ տառերի վրա և այդ

շարվածքը սեղմել թղթի վրա. այս կերպ շարվածքի բառերը կտպվե-  
թղթի վրա»:

3. Սողոմոնի լեզուն սաս կապվել էր: Անձայն հանում է յերե-  
սուն մանեթը, դնում աղայի առաջ և աղաչում թե՛ «ես է յեղածը,  
աղա, վոր քամես մեզ, ավելին չունենք: Մուրհակը նորոգիր, գուցե  
գարնան...»

(Վ. Փափազյան—«Ձրո—չրո քարը»)

4. Սա անտանելի յեր Սաթոյի համար: Նա, վոր քովոր էր գյու-  
ղում հավերի հետ քնել, աքլորի հետ դարթնել՝ նստում էր խոհանո-  
ցում և գլխով «տանձ կշռում»: Քնում էր և իսկույն յերազ տեսնում  
—իրենց գյուղն է, գետափը, ուռիները սովորում հավաքված են իր  
ընկերուհիները: Ինքը նստած է գետափի քարին, ջուրը վշշում է,  
թշթում: Ընկերուհիներն իրեն շրջապատել ծիծաղում են. «Աղջի,  
Սաթո, ջուրը թափվեց, իջեցրու, իջեցրու»: Սաթոն ժպտում է միայն.  
«գետի ջուրը վաճեց կիջեցնեն»:

(Դեմիրճյան—«Սաթոն»)

5. Մի անգամ գյուղում Տորքին զայրացրին,  
«Անգեղ, գեշ, անգեղ», նրան գոչեցին...»

Արքան հրավիրեց կուսակալներին,  
Վոր այդ ժամանակ պալատումն էլին,  
—«Կուզեմ իմանալ—ասաց—մեր յերկրում  
Ինչպե՞ս ցեղեր կան, ինչպե՞ս են ապրում»:  
«Ուղիղ է ասածն Առան իշխանի,—  
Ասաց բղիշխը Գուգարաց յերկրի,—  
Մեր հակներն էլ ձորերը մտան,  
Վոր գզիրներին վոչինչ հարկ չտան»:

(Դ. Աղայան)

բ) Չափերսների մեջ են դնում նայել հիմնարկությունների, ընկերու-  
թյունների և այլ պայմանական տնօրեններ, ինչպես և գրական յեկերի  
առնուններ, յերբ մեջ են բերվում գրավոր խոսքի մեջ:

Ուրիշակ՝

1. Հայ գրողներից վոչ մեկը մանկական աշխարհին չի տվել  
այնքան արժեքավոր և անմոռանալի յերկեր, վորքան Թումանյանը.  
Յվ չի կարդացել նրա «Մի կաթիլ մեղրը», «Բաջ Նազարը», «Տերն  
ու ծառան», «Գառնիկ ախպերը», «Չարի վերջը», «Անբախտ վաճառա-  
կանները», բազմաթիվ հեքիաթները, պատմվածքները կենդանիների  
կյանքից և այլն, և այլն:



2. Տասնվեց տարեկան Թումանյանը գրել է իր հայտնի «Շունն ու կատուն», մի տարի հետո՝ «Հին որհնություն», «Գութանի յերգը» և ուրիշ բանաստեղծություններ:

3. Թումանյանը մեր գրականությունը տվել է այնպիսի գանձեր, ինչպես «Անուշը», «Սասունցի Դավիթը», «Թմկարերդի առումը» և բազմաթիվ ուրիշ պոեմներ, տվել է նաև բալլադներ, առակներ ու հեքիաթներ, մանկական բանաստեղծություններ:

4. Պուշկինը հետաքրքրվում էր հեքիաթներով, լսում էր իր գայակից և գեղարվեստորեն մշակում էր այդ հեքիաթները: Նա այդպիսի մի շարք հեքիաթներ ունի, որինսկի՝ «Վոսկե ձկնիկը», «Տերտերն ու իր Բալդի ծառան», «Քնած դշուռհին» և այլն:

5. Նինոշվիլու գրվածքներից հայերենի թարգմանված են, բացի «Գոգիա Ուրշվիլի»-ից, «Հրամանը», «Պալիաստոմի լիճը», «Սիմոնան» և այլն:

գ) Չախերսևերը գործածվում են նաև հեղինական կամ ժխտական իմաստ սալու նպատակով:

Որինակ՝

1. Բայց վերջիվերջո հաշտվեցին «աղիտի» հետ: Նոր հարմար աղջիկ չկար, յեղածներն էլ կամ «գող» էյին, կամ «ծուլ»:

Սաթոն որինակելի յեր, ժիր, բարի: Յեվ, վերջապես, լիկվիրացիոնի հարց կար...

Նրան թողին իրենց մոտ և սկսեցին զգուշ լինել: Ծանր էր այդ «զգուշը»-ը, բայց ելի լավագույնն այդ էր:

Շուտով դուռնությունը լրջից փոխվեց նաև կոմիկականի. Սաթոն սկսեց տերմինները անխնա կտրատել:

«Քաղաքի մասշտաբով հաց ա յեկել»:

«Կանանց որն այս տարի նոր տեմպով պտի անեն»: «Հարյուր տոկոսով ասում եմ, վոր ճիշտ ա»:

(Գ. Դեմիրճյան — Սաթոն)

2. Սաթոն լվացք էր անում: Բարկացած էր, բայց զուտա՛Միայն ջլապինգ մատները խլելով սպիտակեղենը, ուժով խեղդում էյին տաշտի մեջ:

Քաղքենի «տիկինը» կանգնեց, մտիկ տվեց «յերեկվա» գյուղացու աղջկան, վոր գյուղից յեկավ, աճեց, բարձրացավ և այսոր սկսել է հուսա տալ իրեն:

(Գ. Դեմիրճյան — Սաթոն)

2. ՓՍԿԱԳՊԵՐ

Փակագծերի մեջ առնվում են սովորաբար անպիսի միջոցառումներ, վառնի ռաս ագոս կերպով կարող են հանվել, գեղջվել:

Որինակ՝

1. Կաթասան ամենի կարմրել էր, փափկել էր, ուղում էր պայթել...

Յեվ ահա մեկը անվհեքներից սուր ձողը ձեռքում

Կաթասայի կուրծքն է զայրույթով մխում, յիրկաթը խայթում:

(Կարիքն է կռել զայրույթ ու վրեժ նրա մեծ սրտում):

Կարմիր հալոցը արյունի նման վիժում է ուժգին,

Կարծես հոխորտում՝ կլանել նրան,

Ով վոր խիզախեց վերք տալ իր կրծքին:

Բայց բանվորը քաջ սովոր է նրան,

Ծաղրում է, հեգնում ջնոռն հեղուկին—

Հալոցքի մեջ է սնվել, մեծացել

Նրա հաղթ հողին:

(Ն. Հակոբյան — Շոր առվոտ)

2. Իհարկե նրա վիշտը Գրիգորի համար չի կարող լինել, վորովհետև Գրիգորն այնքան էլ հիվանդ չէ, վորի համար կարելի լիներ այդպես մտատանջվել և, բացի դրանից, յեթե նրա վիշտը հենց դրա համար էլ լիներ և մեզ յերկյուղ չպատճառելու համար միայն՝ այդ մեզանից ծածկելիս լիներ— յես այդ իսկույն կարող էյի հասկանալ տեսնել, բայց յես գիտեմ (և սիրտս էլ այդպես նախազուշակում է), վոր նրա վիշտը բոլորովին ուրիշ բանի համար է: Իսկ թե ինչ բանի համար, — այդտեղ յես արդեն վոչինչ չեմ կարողանում հասկանալ և վոչ յենթադրել:

(Նար-Դոս — Աննա Սարոյան)

3. ԿՍԽՄՍՆ ԿԵՏԵՐ

Կախման կեսերը գործադրվում են կիսա արտահայտված նախադասությամբ վերջում, մանավանդ, յերբ հեղինակը ցանկանում է արտահայտել իր ուժեղ հույզը:



Որիմեակ՝

1.—Հարեթ աղան,—սկսեց ընկերս,—բազմահարուստ մի աղա յեր  
լը շրջանում. հարուստ և լիբ... Փողի ուժը փորձել եր և լրբացել...  
Փողը, մանավանդ այնպիսի խուլ տեղերում, տեր և իշխան է ամեն  
բանի... Ունես փող—ունես ամեն ինչ, կարող ես գոռալ, կանչել,  
հայտնել, ձեռնել...—Անհոգ կաց, ամենքը կատու կդառնան առաջի-  
քանի ամուր դարձես, այնքան ավելի կքծնես, քանի պինդ գոռաս,  
այնքան ավելի լեզուները դուրս կհանեն: Փող ունիս, դա հանաք  
բան չի... Յեվ Հարեթ աղան փող ուներ, շատ փող...  
(Փափաղուսն—Չըն—չըն քարը)

2. Նա նստեց աթոռի վրա, գրկից մանդուլինան: Առավոտյան արե-  
զակի կիտրոնագուռն շողերը սփռվել էյին ներս: Լեռնի աչքերն  
անգիտակցաբար դարձան դեպի այդ շողերը, կարծես ինչ-վոր գաղտ-  
նի մագնիսի գորուծյամբ: Ախ, այդ վեր ուղղված աչքերը, այդ  
հեղ գեմքը... Անցել է ընդամենը յերկու տարի, բայց կանցնեն շատ  
տարիներ, զարձյալ այդ որը վառ կմնա հիշողությանս մեջ:

(Շիրվանդագե—Արախտը)

3. Ծաղիկներ—Բարև, բարև, կարմիր արև.  
Ախ, ինչ լավ է դեպի վերև—  
Ազատ, լույս, սառ,  
Կապույտ, հասակ...  
Արևը—Մի՞րձում եք ինձ...  
Ծաղիկներ.—Ախ, ենպես եմ սիրում, ենպես,  
Ել առանց քեզ չեմ ապրիլ յես...  
—Յես քեզ հետ եմ ուր վոր գնաս.  
—Յես կտխրեմ՝ վոր հեռանաս...  
Արևը—Ապա յեթե ձեզ համբուրեմ...  
Ծաղիկներ.—Յես հաճույքից կկարմրեմ...  
—Յես կը-ւրեմ...  
—Յես կմարեմ...  
(Հ. Թումանյան—Ծաղիկների յերգը)

4. —Կասեն՝ Սաքո՛, մեզ մոտ արի՛,  
Արի՛ մեզ մոտ հարսանիք.  
Տես, ինչ ուրախ պար ենք գալի,  
Սիրո՛ւն-ջահել հարսն-աղջիկի:  
  
Ինձ մոտ արի՛ ձվածեղ անեմ...  
Ինձ մոտ արի՛ բլիթ տամ...  
Յես քո հոքիրն... յես քու նանն եմ...  
Յես ել՛ աղիղ բարեկամ...

Սաքո՛, Սաքո՛, մեզ մոտ արի,  
Ես աղջիկը, տես, ինչ լավն ա...  
Տես, ինչ ուրախ պար ենք գալի,  
Տարա-նի-նա... տարա-նի նա...»

(Հ. Թումանյան—Վոսեցի Սաքոն)

4. Բազմակես

Բազմակեսը (չորս կեսից վաչ պոկոս)՝ գրվում է մեզ  
բերվող այն տղերու, վարեղ մեզ բերողը կհասուսներ է  
կոտարել.

1. Կամո՛... Կամո՛... Կամո՛... Կամո՛...  
Ո՞ւր ես, Կամո՛...  
Մեր աննման, մեր անուկի  
Դու դինամո...  
Հրաշքների դարու զավակ,  
Կամո անգին,  
Մեր որերի հերոս ավագ.  
Մեր Բլանկի:  
Կամո՛... Կամո՛... Կամո՛... աղնիվ,  
Քնքույշ հոգի,  
Մեր շարքերում վնաս չարած  
Դու վոչ վոքի,  
Բայց թշնամուն ահի բերած,  
Վախ ու տագնապ,  
Բայց թշնամուն մահատարած  
Դու մի ռատրապ:

(Հ. Հակոբյան—Վամո-յին)

2.—Ուո-ոա՛... ուո-ոա՛...  
Մի թուխքով Գոտտեամանը ցատկում է փոսի վրայով:  
—Հառաջ, տղերք.—ասում է նա, բարձրանալով ճանապարհի  
վրա և բոռնցքով սպառնում չեխերի կողմը:  
Տա-տա-տա-տա-տա:  
—Ընկերներ.  
\* \* \* \* \*  
—Շատ վաղ գոռացինք:  
—Կրակում են, շան վորդիք:  
—Ուո-ոա՛...  
Յես ցատկում եմ փոսի վրայով և բարձրանում խճուղին:



Մոտ տառը հոգի ինձանից առաջ են անցել, իմ հետևից թռչում են մնացածները:

Տա-աա-աա-աա-աա:

Յեռ սայթաքում եմ և ընկնում: Յերբ վեր եմ կենում, վաշտն արդեն առաջ և անցել և բավական հեռու յե: Միքանիսը պառկել են ճանապարհի վրա: Շուտ: Միայն մի քայլ եմ անում և ձախ վտարիս սուր ցավը գետին և գլորում ինձ—յեռ ընկնում եմ ճանապարհի մյուս կողմի փոսը:

(Բեկա Իլիշ—Վերադառնալիս)

5. ԳԻՄ ԿՍՄ ԱՆՁԱՑՄԱՆ ԳԻՄ

Գիծը կամ անջատման գիծը դրվում է խոտակցություն պարունակող մասվածների մեջ, յուրաքանչյուր տողի սկզբում, յերբ նա տողից է սկսվում յուրաքանչյուր խոտողի առածը. գծով կամ գծով և ստորակետով է բաժանվում գլխավոր նախադասությունն իր յերկրորդական նախադասությունից, յերբ վերջինս ուրիշի ուղղակի խոսք է և դրված է գլխավոր նախադասությունից առաջ, կամ յերբ գլխավոր նախադասությունն ընկած է ուրիշի ուղղակի խոսքի մեջ.

Որինակ՝

- 1.— Սև կաքավիկ, ուր պիտի դու նըսանս հիմա:
- Չորուկ բարտի ծառի վրա:
- Սև կաքավիկ, թե վոր նըբա տերը գա՛ ուր:
- Լացող ուռու ճյուղքին տըխուր:
- Սև կաքավիկ, են տեղից ել քշեն վոր քեզ:
- Կըբակ կըլնեմ, կերեմ ինձ յեռ...

(Ն. Թումանյան—Վաքավի յերգը)

2. Սերգեյի աչքերն ուրախութունից փայլեցին:

- Յեռ կարող եմ մի փութ կրել:
- Հարկավոր չե մի փութ: Վոր շատ ունենանք, ձեռքներիցս կխլեն: Հետո, յերբ ճանապարհը սովորենք, ելի կգնանք:
- Յեկ, Միշկա, վոչ վոքի չառենք:
- Յեկ:
- Դու գիտեա, մեկ ել յեռ, ել ուրիշ վոչ վոք: Կոսկան ու վանկան վոր լսեն—կկպչեն, նրանց հետ վոչ մի տեղ չի կարելի գնալ չվաքից վախեցող են:
- Հապա դու չե՞ վախենում:
- Ինչից պիտի վախենամ: Ուր ուզեա, կգնամ...

(Ա. Նեպերով—Տաշքենա հացի բողբոջ)

Տ. Վերջապես Սաթոն յեկավ: Նա լուրջ էր: Կենտրոնացած: Պատըղամբից բարձրացավ թե չե՛ տիկին Աննան հարձակվեց վրան.

- Ինչո՞ւ ուշացար:
- Չսկուցում կար:
- Բա մեր շո՞ւր, հանցը, լվացըը:
- Յեռ ի՞նչ անեմ, սպասիր՝ կլինի: Բա ժողով չգնամ:
- Ի՞նչ անեմ ժողովը՞ յեռ ետեղ սոված, ծարավ:
- Եդ ա. ուզում ես՝ ուզի, ուզում ես՝ չե:
- Չեմ ուզում. եզուց գնա՛ իմ տանից:
- Շատ լավ,—ասաց Սաթոն հանդարտ և սկսեց իր գործը, կարձեռ բանի տեղ չգնելով սպառնալիքը:

(Գ. Դեմիրճյան—Սաթոն)

6. ԳՄԻԿ ԿՍՄ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՄԻԿ

Գծիկը կամ միություն գծիկը (-) դրվում է իբրեվ մի բառ առնված յերկու բառերի միջով.

Որինակ՝

1. Թաղում կային ուրիշ միքանի հայտնի կովարար կանայք ևս, բայց գիժ Հոռոմսիմը վաղուց տվել-անուխ եր ամենքից թե իր ճարտար լիզվով, թե անեծք-հայհոյանքով և թե նույնիսկ ֆիզիկական ուժով, վորին շատ անգամ դիմում եր բերանացի կովից հետո:

(Նար-Գոս—Եթե ի՞նչ պատահեց՞)

2. Գոմը նեղ էր, նստելու տեղ չկար. բոլորը կանգնած էին կողք՝ կողքի Այդ քիչ էր, մի հիմար կով էլ շուտ-շուտ հարու յեր տալիս որան-նրան: Բոլորը, թե կովերը, թե յերինջները տնքտընքում էին: Ամենից վատ, սակայն, ցավում էր իր կողը, Ո՛, ինչպե՞ս էր ցավում, քիչ էր մտնում պոկ գա. ցավում էր ճիշտ այնպես, ինչպե՞ս մի անգամ շունը բռնեց իր վոտը. կարծես շունը կծում էր ելի...

(Չորյան—Մովանը)

ԹԵԼԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1. ՆԵՂ ՈՐԵՐՈՑ ՄԵԿԸ

(Հատված)

Պատրիկյանը մի հայացք ձգեց իր հնացած հագուստին. նայեց կոշիկների ծամոված ծայրերին, դուրս յեկավ սենյակից, դուռը փակեց, բանալին գրպանը դրեց, անցավ բակի յերկայնքով և բարձրացավ տանտիրոջ բնակարանի ընդարձակ պատշգամբը, վորը, մաքուր







- Բա դու ի՞նչ ձկնորս ես, վոր նավակդ եղպես խանդարված ե:
- Ե՛, մեր գետում սկի ձուկ ել չկա:
- Ասա խնդրեմ, վաղճւց ես դու ետեղ ձկնորս:
- Յոթերորդ տարին ե:
- Իսկ առաջ ինչո՞վ եյիր զբաղվում:
- Առաջ կառապան եյի:
- Իսկ ո՞վ քեզ կառապանից ձկնորս դարձրեց:
- Նոր տիրուհին:
- Վճր տիրուհին:
- Նա, վորը մեզ գնել ե: Դուք չեք ճանաչում նրան. Ալյոնա

Տիմոֆեևնան, լիքը կին ե... տարիքն առած:

- Իսկ ինչո՞ւ յե նա քեզ ձկնորս դարձրել:
- Առաված գիտի: Իր կալվածից յեկավ մեզ մոտ, հրամայեց հավաքել տան բոլոր սպասավորներին ու դուրս յեկավ մեր առաջ: Մենք համբուրեցինք նրա ձեռքը, և նա վոչինչ, չեր բարկանում... Հետո սկսեց ամենքիս հարցուփորձ անել, թե ինչով ես զբաղվել, ինչ պաշտոն ես ունեցել: Յերբ հերթը հասավ ինձ, նա հարցրեց՝ դու թ՞վ ես: Պատասխանեցի՝ կառապան:— Կառապան. Ե՛, ի՞նչ կառապան ես դու, սկի ել կառապանի նման չես: Այլևս դու կառապան չպիտի լինես, այլ ձկնորս: Միրուքդ ել ամելիւր: Յերբ պատահի, յեռ գամ ետեղ, սեղանիս վրա ձուկ անպատճառ լինի, հասկացար: Այդ որվանից յեռ ձկնորս դառա:

#### 4. ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՃԱՄԲԱՐՈՒՄ

Յերեկոն իջնում ե անտառածածկ ու թավշապատ լեռների ու բլուրների վրա:

Արջառարից փչում ե մի գոլ ու դուրեկան քամի: Աշխույժ ու կայտառ, ժպտը դեմքերին նրանք հավաքվում են հրապարակը, վորտեղ պատրաստվում ե մեծ խարույկը:

Յերբ վառվում ե խարույկը և կրակե լեզուներն անամպ յերկինքն են բարձրանում, բոլորի մեջ հրաշալի վոզեորություն ե տիրում: Նրանք վոզեորված ու մեծ խանդավառությամբ սկսում են յերգել մեծ առաջնորդին՝ նրանց համար յերջանիկ կյանք ստեղծողին նվիրված յերգը:

Յերպին փոխարինում ե ուրախ ու աշխույժ լարային նվագը իսկ նրա հետ միասին փոքրիկների հրաշալի կարարգինկա պարը:

Սակայն քիչ հետո դադարում ե յերգն ու պարը և խարույկի շուրջը շատ խորին լուռություն ե տիրում: Սկսվում ե զբույցը:

Յերբ զբույցը վերջանում ե, նրանք վորոշում են նամակ գրել Արտեկում գանվող իռպանացի պիոներներին, Խապանիայի հերոսուհի Դոլորես Իբարուրու աղջկան—տասներկուամյա Ամայա Ռուբիոն:

Ապա պիոներները խոստանում են լինել պատանի մուլրականներ, հավաքել ինտերնացիոնալ կուպեկները:

Նորից հնչում ե նվագը, նորից թնդում ե մանկական ուրախ պարն ու յերգը:



ՆՅՈՒԹԵՐ  
ԱՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԹԵԼԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. ՄՐՐԿԱԶԱՎԻ ՅԵՐԳԸ

Ծովի սպիտակավուն հարթության վրա մրրիկն ահա ամպեր է զիգում: Յեզ մրրկահավը՝ նման ռե շանթի՝ հպարտ ճախրում է ծով աւ ամպի մեջ:

Մերթ ալիքներին թեւը բախելով, մերթ վորպեա սլաք դեպի ամպերը թռիչք գործելով՝ ճշում է հավը,—և ամպերը վերեց հրճվանք են լսում թռչունի հանդուգն, խիզախ կանչի մեջ:

Այդ կանչի մեջ է մրրկի տենչանքը: Թափը ցատում է, հուրն ըղձանքի ու յերաշխիքը դաւոց հաղթության այդ կանչի մեջ են լսում ամպերը:

Ճայերը հեծում են մրրկից առաջ, հեծում, սլանում են ծովի վրայով և նրա խորքում պատրաստ են թաղել իրենց սարսափը մրրկի առաջ:

Հեծում են նույնպես և ջրաղակները, վորոնց խորթ է ուսնհասանելի կովով վաստակած կյանքի հաճույքը: շանթ ու վորոտից սարսում են նրանք...

Տխմար թևատը յերկյուղով խոնաված՝ խուլերի մեջ է իր գեր ու ճարպոտ մարմինը թաքցնում...

Միայն վես, հպարտ մրրկահավն է ճախրում համարձակ ու խիզախորեն՝ փրփրադեզ, ճերմակ ջրերի վրա:

Ամպերն ափելի մոայլ քան առաջ ու միշտ դեպի ցած՝ ծովի վրա յեն կախ ընկնում, դիզվում և ալիքները յերգով, շուրջպարով դեպի վեր ձգտում՝ շանթ ու վորոտին ընդառաջելու:

Ճայթում է ամպրոպը: Յառման փրփուրի մեջ հեծում են ալիք, մրցում հողի հետ: Մրրիկն ուժգին գրկախառնումով՝ ահա վորոտում է յերամն ալիքի ու մուկենորեն ահարկու թափով շարտում նրանց ժայռերի վրա:

Մրրկահավը՝ նման ռե շանթի՝ ճախրում է կունչով և վորպեա սլաք, ճեղքում է ամպին ու իր թևերով փրփուր է կորզում: Յեզ նա խելահեղ ահա տարվում է վորպեա չար վոգի, հպարտ,

սևաթույր, մրրիկի վոգի, քրքշում է և հեծեծում ե... Ամպերի վրանա հրհռում է, անհուն բերկրանքից նա հեծեծում է:

Շանթ ու վորոտի ցատումի միջից՝ զգաստ վոգու պես՝ նա կանչ է լսում. նա համոզված է, վոր չեն քողարկի ամպերն արևին. վոչ, չեն քողարկի:

Հողմը վորոտում է, ամպրոպը ճայթում... Կապույտ բոցերով հարհրատում են ամպի յերամները ծովի անհատակ անդունդի վրա: Ծովը վորոտում է շանթի սլաքներն ու իր հորձանքում հանգցնում նրանց: Այդ վորոտների արտացոլումներն՝ իբրևզ հուր ոճեր՝ շողում են ծովում, անհետ կորչելով:

— Մրրիկ, շուտով մրրիկ կպայթի սաստիկ:

Դա խիզախ ու վես Մրրկահավն է հպարտ ճախր առնում ցատկոտ վորոտցով ծովի յերեսին ցիր ու ցան յեղած շանթերի միջև և հաղթանակի մարգարեն ահա կանչում է, գոչում:

— Փոթորիկն ահեղ թող ուժգին պայթի:

2. ԲԱԶԵՅԻ ՅԵՐԳԸ

I

Բարձրարերձ սարերն ի վեր սողաց իժն ու փուլեց այնտեղ խոնավ կիրճի մեջ և կծիկ դարձած՝ դիտում եր ծովը:

Բարձր յերկնակամարի վրա փայլում եր արևը, ու լեռները տոթադին շնչում եյին յերկինքն ի վեր, և ցածրում ալիքները դարնում եյին ամրակուռ քարին...

Յեզ ձորակով, խավարի ու ցնցուղի մեջ, հեղեղատն ընդառաջում եր, նետվում դեպի ծով՝ քարերի բաշից թռիչք գործելով:

Գլխովին ճերմակ փրփուրի փոխված, ալեղարդ-հուժկու, ճեղքում եր սարը և ծովը թափվում՝ ցատկոտ կականով:

Հանկարծ այդ նույն կիրճը, ուր իժը կուտապվեց, յերկնքից գահավեժ վայր ընկավ Բազեն՝ փշրված կրճքով, արյունաշագախ թևերի վրա...

Կարճատև կանչով նա ընկավ գետին, անդոր ցառման մեջ՝ կրճքով դարնվեց ապառաժ քարին...

Իժը դարձուրեց. հետ սողաց շտապ, բայց շուտ ըմբռնեց, վոր թռչնի կյանքը կտևի միայն մեկ յերկու վայրկյան...

Նա սողաց մոտիկ վիրավոր թռչնին և շաչեց ուղիղ նրա աչքի մեջ.

— Մեռնում ես, ինչ է:

— Այո, մեռնում եմ,— շնչաց բազեն խոր հառաչանքով:— Յեա սպրեցի փառավոր կյանքով... Յեա ըմբռնում եմ յերջանկությունը...



Յեռ մաքրուեցի խիզախ-անվհատ... Տեսա յերկիրնքը... Իսկ դու չես տեսնի նրան մոտիկից... Այ՛ թշվառական:

— Բայց ի՞նչ ե յերկիրնքը... Դատարկություն... Յեռ ի՞նչպես սողամ դատարկության մեջ: Այստեղ ինձ համար հրաշալի յե... տաք և խոնավ:

Այդպես առարկեց Իժն ազատ թռչնին և խնդաց իր մեջ Բազեյի վրա՝ նրա խենթ-խելառ մտքերի համար:

Յեզ մտածում էր. «Թռչեա թե սողա, վերջն ակնհայտ ե. ա-մենքն ել պետք ե գետին անցնեն, ամեն ինչ նորեն փոշի պիտ գառնա»...

Բայց արի Բազեն հանկարծ ցնցվեց. բարձրացավ փոքր ինչ և աչքը կիրճի շորս գին շուռ ածեց:

Մոխրավուն ժայռից շուրն եր սողոսկում, և հեղձուցիչ եր մթին ձորի մեջ, ուր տարածված եր գարշահոտություն:

Յեզ ճչաց Բազեն անձկակարոտ ու կակճազին, ճիգ գործ դնելով:

— Ո՛ր, թե վոր գեթ մեկ ել յեա կարենայի յերկիրնք բարձրանալ... կրծքիս վերքերին՝ կսեղմեյի յեա իմ ախոյանին... և նա կխեղդվեր արյունովս անշուշտ:

— Ո՛ր, յերջանկություն կովի-պայքարի՝ Իսկ Իժը խորհում էր. «Յերկնքում, անշուշտ, պետք ե վոր ապ-րելը հաճելի լինի, քանի վոր այդպես հառաչում ե նա»...

Յեզ հորդորեց նա ազատ թռչունին. «Մոտեցիր ուրեմն՝ ձորա-բերանին ու ցած նետիր քեզ:

Գուցե թե թևերդ քեզ բարձրացնեն և տարերային ուժիդ մեջ դեռես մի փոքր ել ապրես»:

Յեզ ցնցվեց Բազեն՝ նվաղկոտ ճիչով շարժվեց դեպ անդունդը և մազիլներով ուրլաց ու սահեց քարի լպրծուն մակերևույթին:

Յեզ մոտեցավ նա, ուղղեց թևերը, խորը հառաչեց, փայլ ավին աչքերը ու... գահավեժ անդունդ գլորվեց:

Յեզ ինքը, ինչպես քար, սահեց ժայռերից, վայր ընկավ արագ, փշրելով թևերը, փետուրները ցերցան...

Հեղեղատի ալիքը նրան ընդգրկեց և լվանալով արյունը բոսոր, փրփուր հագցրեց, խաղաց դեպի ծով:

Ծովի ալիքները թախճոտ վռնոցով՝ դալիս քարերին եյին զար-նըվում: Յեզ թռչնի դին ել չեք նշմարվում ծովային անձիք տարա-ծության մեջ:

II

Կիրճի մեջ փոված Իժը խորհում էր յերկար ու բարակ թռչնի մահվան և դեպ յերկիրնքը նրա ունեցած կրքոտ ու անզուսպ տենչան-քի մասին:

Յեզ անա նա աչքի անցրեց այն տարածությունը, վոր շոյում ե աչքը հավիտենապես՝ բախտավորության քաղցր իղձերով:

— Իսկ ի՞նչ եր տեսնում նա՝ մեռնող Բազեն՝ անտակ անդունդի ամայության մեջ: Ինչո՞ւ յեն ինքն ու իր նմանները մեռնելու պա-հին հուզվում հողեպես՝ առ յերկիրնքն ունեցած թռիչքի սիրով: Ի՞նչն ե արդյոք, վոր նրանց այնտեղ հայտնի յե դառնում: Իսկ չե՞ վոր ինքս ել՝ թեկուզ կարճատև յերկիրնք թռչելով՝ կկարենայի գիտնալ ամեն ինչ:

Ասաց ու արավ: Ողակ դառնալով նետվեց ողի մեջ և հար ու նման նեղ ժապավենի՝ փայլեց, պսպղաց վառ-արևի տակ:

Սողալու ծնվածը թռչել չի կարող... այդ մոռանալով, ընկավ քարերին, բայց չստակեց, այլ խնդաց քահ, քահ... — Ահա թե ինչն ե առ յերկիրնքը տածած հրապույրը թռիչքի:

Այդ հրապույրն անկումի մեջ ե... Ծիծաղելիներ: Յերկրին անգիտակ, ձանձրացած այստեղ, նրանք ձգտում են վեր՝ դեպի յերկիրնք և կյանք վորոնում խանձող-տոչոտող անապատի մեջ: Այնտեղ իշխում ե լուկ գատարկություն: Լույսը շատ ե այնտեղ, բայց սնունդ չկա, և վնչ իսկ նեցուկ՝ կենդանի մարմին: Ինչո՞ւ համար են սին՝ գոռոզու-թյուն ու նախատինքներ: Նրա՛ համար, վոր անմտությունն իրենց ցանկությանց ծածկել կարենան և նրանց հետև քողարկեն իրենց ապիկարությունը՝ կյանքի գործերում: Ծիծաղելիներ... Բայց նրանց ձառերն այժմ այլևս բնավ յերբեք չեն կարող մոլորեցնել ինձ: Յեա ինքս արդեն գիտեմ ամեն ինչ... Տեսա յերկիրնքը... և թոա այնտեղ, չափեցի յես, իմացա՛ անկումը, բայց չջարդվեցի. և այժմ միայն ա-վելի՛ ևս հատաատ-աներեր հավատում եմ ինձ: Թող այն ամենքը, վոր անկարող են յերկիրը սիրել, ապրեն պատրանքով: Յեա ըմբռնեցի ճշմարտությունը: Յեզ նրանց կոչին չեմ հավատա յեա: Յերկրի ստեղծած՝ յերկրով ել կապրեմ:

Յեզ նա կուտապվեց ժեռ քարի վրա՝ հպարտ ինքն իրմով:

Փայլվում եր ծովը համակ-անպարփակ պայծառ լույսի մեջ և սպառնացայտ ալիքը հուժկու՝ ափերին եր գալիս զարնվում:

Առյուծամոռուն նրանց ձայնի մեջ թնդում եր յերգը վես թռչնի մասին, դողում եր ժայռը նրանց պարկերից, դողում եր յերկիրնքը գոռ-խորտա յերգից.

Քաջերի խենթությանը՝ մենք փառք ենք յերգում: Բաջերի խենթությունը՝ իմաստն ե կյանքի:

«Ո՛ր, խիզախ Բազե: Վոսոխների հետ մղած կովի մեջ արնաքում յեղար... Բայց կզա որը, և կաթիլները քո բոսոր արյան՝ կայծերի նման պիտի բորբոքվեն կյանքի խավարում ու շատ համարձակ սրտեր պիտ վառեն՝ ազատության, լույսի խելառ ծարավով:



«Թող մեռած լինիս... Բայց հոգով արի՛ քաջերի յերգում գու  
միշտ կմնաս կենդանի տիպար և հպարտ մի կոչ—գեպ ազատությո՛ւն  
ու գեպի լո՛ւյսը»

«Քաջերի խենթությանը՝ մենք գովք ենք յերգում...»

### 3. ԸՄԲՈՍԻ ՄԱՀԸ

Անտառը հուզված էր, հուզված մեծապես:

Մուլ, զայրագին մի շուկ գրավել էր նրան:

Հսկա կաղնիները բուռն շարժումով կոսնում էին գեպի հա-  
ցիները, թեղին ու լորին վրդովված՝ շնջում էին: Թփերն անգամ,  
անձոռնի բաղեղներով գալարված, վոտները ճահճի մեջ, գաղջ հողի  
վրա պռակած՝ անհանգիստ էին... Անտառն ամբողջ հուզված էր:  
Անսովոր մի դեպք էր տեղի ունենում այդ բազմադարյան ճահճային  
աշխարհում, ուր ծառերը մինչև այդ աճում էին, մեռնում, գիջու-  
թյան մեջ բորբոսնում, պարսպիտներով լցվում, բաղեղներով կաշկանդ-  
վում, և ուր բոլորը գոհ էին, վոչնչի չեյին ձգտում:

Բայց ահա մի որ ծառերից մի քանիսը պատռել էին ամեն  
պատուտակ, անցել ամեն ճահճ, և արմատները, փոխանակ, ըստ  
վաղեմի ավանդության, ձորն ի վար իջեցնելու, սկսել էին լեռն ի  
վեր պարզել: Այդ անսովոր էր, խիստ անբնական, և ամբողջ ան-  
տառն իզուր չէր հուզվել:

Ի՞նչ... արհամարհել պապենական սովորությունը. թողնել ճա-  
հճն ու ձորը, ձգնել ազատվելու պատուտակներից և, վոր գլխավորն  
է, գեպի լե՛ռը մագլցել: Ի՞նչի՞ նման էր այդ:

Նոր ծառերը, սակայն, անվրդով, անզգա կարծես այդ բոլոր  
հուզման առաջ, անցել էին գծված սահմանը, գնում էին գեպի վեր՝  
վոստնելով ժայռերի վրայից, արհամարհելով արգելքները, պատռելով  
հողի կուրծքը:

Այդ ամբողջ նոր ճյուղավորության ծայրին սկսել էր ծնել մի  
առողջ, առույգ և հպարտ վոստերով ծառ, վոր վեհությամբ նայում էր  
արևին, իր վոտների տակ փռված հին անտառին և իր հպարտ  
շարժումով կարծես ծաղրում էր ճահճի մեջ ապրող հին ընկերներին:

— Դարձե՛ք, խելագարներ, — գոչում էին հները:

— Խենթացել են, — գոռում էին կաղնիները:

— Կվոչնչանան, — շնջում էին թփերը:

Իսկ նոր ծառը բարձրանում էր, անդադար բարձրանում և բոլոր  
այդ ազմուկի վրա ժպտում ու զվարճանում:

— Բայց այդ ո՞ւր ես գնում մոլորված, — կանչեց վերջապես մի  
հսկա կաղնի, — Ի՞նչ գործ ունես այդ բարձրությունների վրա, ուր

իշխում է օսունամանիքը, ուր քամին սոսկալի յե, ուր ջուր չկա, և  
ուր ժայռերը կոշտ են, ճանապարհը դժվար...  
— Բարձրանում եմ, — ժպտաց նոր ծառը:

— Բարձրանո՞ւմ ես, — ապչեց մեծ կաղնին. — խենթ, ի՞նչ կա  
բարձրանալու մեջ, յեթե վոչ՝ միմիայն կորուստ: Ավելի լավ չե՞, վոր  
իջնես գեպի ձորը, գետակի ափը, ուր ստվեր կա, տառա ջուր,  
օննդարար հող, և ուր քամին անդր է, կայծակն՝ անհասանելի...  
— Բարձրանում եմ, — համառեց ծառը և մի ըտպե իսկ կանգ

չառավ:

— Դու կվոչնչանաս, — կանչեցին ծառերը:

— Բարձրության վրա...  
— Կայծակին զոհ կլինես:

— Լեռների ծայրին...  
— Ի՞նչ անթի կմնաս, ծարնվ, պապակվա՛ծ:

— Բայց բարձր կլինեմ...  
Ու բարձրանում էր, անհագ բարձրանում:

Ամբողջ անտառն այժմ լուռ, դողդոջուն, դարձած գեպի բարձ-

րացող ծառը, սրտատրոփ դիտում էր նրա քայլերը, ուրախանում  
նրա հաճախ ապարդյուն ճիգերի վրա, չարամտորեն ժպտում, յերբ  
նա մի խոշոր ժայռի դեմ էր առնում, և նենդամիտ, կծու խոսքեր  
նետում, յերբ ծառը պապակված ու հոգնած կանգնում էր շուռն առ-  
նելու, և կամ յերբ քամին գորեկ տարուբերում էր նրան այս-այն  
կողմ, ծոռում, գեպին էր քսում, կամ տերևներն ու ճյուղերը մի-  
մյանց խառնելով՝ գլխին դիզացնում...  
Փչում էր քամին, այրում էր արևը, անձրևն ու հեղեղները թրբ-  
ջում էին նրան, ամպերը գլխին վորոտում, փոթորիկը նրան ժայռե-  
ժայռ խփում, կայծակը նրա շուրջը շանթող գծեր պարզում... և սա-  
կայն ծառը համառ, անդրգվելի յեւնում էր, յեւնում և մշուշոտ, բարձր  
կատարների ձգտում...  
Յեվ յերկար տանջվելուց հետո, կեռ ճղակտոր, տերևները կորց-  
րած, հոգնած, ուժասպառ, խաղալիք քամիների, վորոտումների տակ,  
կայծակի շանթերի մեջ, անձրևներով թրջված՝ հասավ բարձր կա-  
տարին: Այժմ նա մշուշը ցած էր թողել ճահճների մեջ մնացած իր  
ընկերներին ծածկելու, այժմ նա գեպի արևն էր տարածում իր թեերը,  
բայց այժմ քան յերբեք՝ նա մենակ էր, անընկեր, հեռու գետակից,  
հեռու ձորակից:

Յեվ չէր ավստում: Այդտեղ, բարձրության վրա հանգստացած,  
զմայլվում էր նա հեռավոր հորիզոնով, փայլուն արևի տակ վողովված  
լեռների կատարներով: Անձրևը նրան ջուր էր տալիս, լեռան հողը՝  
օնուկը: Այդտեղ նա յերազում էր մի նոր, բարձր կանգնած սերունդ



ստեղծել, բռնել կատարը, արևի լուսին մոտ լինել, ամպերի խոնա-  
վուծյունից հեռու կենալ, ճահճային աշխարհից միշտ ազատ մնալ:

Իսկ ցածի անտառը նայում եր գեռ նրան ծիծաղելով, նայում եր  
մենավորին, խենթուկին ու սուռմ:

— Կվոչնչանա. կայծակը կփշրի նրան. քամիները կկործանեն:

Փչում էյին քամիները, կոտրատում ճյուղերը, ցրիվ տալիս տե-  
րևները. գալիս եր անձրևը, մերկացնում նրա ձկուն արմատները,  
հեղեղների տակ վողոզում. գալիս եր և՛ կայծակը, աղմկում, վժժում,  
շրջակա ժայռերը ցնցում, այս ու այն թփիկն այրում, սևացնում և  
հոխորտում ծառի վրա:

— Հանդուգն, հեր ես յեկել ինձ մոտ, կայրեմ քեզ:

— Այրիբ, — ասում եր ծառը, — կայրվեմ այստեղ, բայց կայրվեմ  
բարձրության վրա...

Այդպես ել յեղավ:

Մի չարագուշակ, փոթորկալից գիշեր քամիները ճղակոտոր արին  
ծառը, հեղեղը մերկացրեց արմատները և այրող, նախանձոտ կայծակը  
յեկավ վժժալով ու նրա կրծքին խփեց...

Ծառը բռնկեց, սկսեց այրվել:

— Այրվում ե... — քրքշայց ներքևից ճահճային անտառը:

— Նրա վերջն այդ եր, — ասում էյին թփիկները:

— Տեսա՞ր, հանդուգն արարած, — կանչեց մեծ կաղնին, — մեռնում  
ես այժմ ահա...

— Բարձրության վրա... — մրմնջաց ծառը...

Յեկ խոր ու խավար գիշերվա մեջ նրա բոցը փայլում եր հեռվից  
մի կրակոտ աստղի նման: Ծարձատում եր նա, ծուխ-մուխ արձակում,  
և հողը նրա շուրջը կարծես տեղ եր բաց անում՝ ընդունելու իր ծոցի  
մեջ նրան, վոր բարձր ձգտեց և բարձրության վրա ել մեռավ...

#### 4. ՎՈՍԿԵ—ԱՂԲՅՈՒԻ

Վոսկե-աղբյուրը բղխում է Ալավերդու շրջանի Սանահին գյու-  
ղից վոչ հեռու, անտառապատ մի ժայռի տակից: Արևի շողերն ընկ-  
նելով խիտ սաղարթներին՝ չեն կարողանում թափանցել ներքև և  
կարծես հալվելով՝ վոսկեջրում են ծառերի տերևները: Դրանից ե,  
վոր այնտեղ ժայռերը ծածկվել են կանաչ մամուռով և խոնավություն  
աարածել մթին ծմակում: Չուրը կարկաչում է վողորկ խիճերի վրա,  
մի փոքր ներքև կրկին սուզվում է գետնի ճեղքերում ու կորչում  
այնտեղ: Ջինջ է այդ ջուրն՝ ինչպես կռուների աչք, ու սառնորակ:  
Դարեր շարունակ այդ ջուրը հոսել է անտեղի, իսկ սանահինցիները  
յերազել են, վոր մի որ հոսի իրենց գյուղը, հագեցնի մարդկանց, կեն-  
դանիների և պարտեզների դարավոր ծարավը: Նենգ իշխաններ են

յեղել այնտեղ, վորոնք արգելել են գյուղացիներին խմել Վոսկե-աղ-  
բյուրի ջուրը, վորը բղխել է «Թագավորական» հողի միջից:

Վոսկե-աղբյուրի ջրի պես հոսել են անուրախ կյանքի տարի-  
ները, մինչև վոր յերկրի վրա նոր արշալույս է ճառագել— սոցիալիս-  
տական հեղափոխության կենսաբեր արշալույսը:

\* \*

Մի քանի ամիս առաջ ժողով եր անտառի փեշիմաս ընկած այս  
գյուղում: Հավաքվել էյին տղամարդիկ ու կանայք, ծերեր ու մա-  
նուկներ: Դյուղխորհրդի նախագահը հայտարարեց.

— Վոսկե-աղբյուրի ջուրը գյուղ բերելու համար մեր հարազատ  
խորհրդային կառավարությունը մեզ հարյուր քսան հազար ուռբլի  
յե բաց թողել:

Ցնծու թյունը, ինչպես բացվող առավոտ, ծավալվեց գյուղի վրա:  
Ձեռնափայտին հենված մի ծերունի կոլտնտեսական յերախտագիտու-  
թյան, սիրո զգացմունքներով լցված՝ հանեց գդակը և քաղցր փայտաց:

Հետևյալ որը յեկան ճարտարագետները: Նրանք գործիքներով  
չափեցին կանաչ լեռնալանջը, փոսեր փորեցին և ցցեր տնկեցին  
գյուղից մինչև թավ ծմակը, ուր Վոսկե-աղբյուրի ջուրն է բղխում հորդ  
և անսպառ: Հետո սկսվեց աշխատանքը: Կոլտնտեսականները՝ գին-  
ված բահերով, քրունգներով՝ գրոհի դուրս յեկան: Գլուխդի հարված-  
ները թափով քանդում էյին լեռնալանջը, ժայռերի մեջ դինամիտն  
եր պայթում և ծուխն սպիտակ ամպի նման ծավալվում եր կանաչ  
անտառի վրա:

Մարդիկ աշխատում էյին խանդավառ, յեռանդով: Դինամիտի  
վորոտը թնդում եր լեռնաշխարհի վրա, արձագանքում ժայռանիստ  
ձորերի մեջ և կամաց-կամաց մեռնում եր անտառի մթին ծմակում:

Մի այլ բրեզադ՝ գյուղում պատրաստում եր ծորակների տեղը:  
Յերը ամեն ինչ պատրաստ եր, կոլտնտեսության նախագահն իջավ  
ձորը՝ Մանես, և Հայաստի խանութից յոթ պղնձե ծորակ գնեց: Յերը  
ծորակները հագցրին խողովակների վրա, մի քանիսը տարակուսան-  
քով կրկնում էյին:

— Տեսնե՞ս ջուրը պիտի գա... —

Յեկ ջուրը յեկավ: Պղնձե ծորակների շուրջն էյին խմբվել բոլոր  
կոլտնտեսականները, շրջանի կենտրոնից, հարևան գյուղերի կոլտնտե-  
սություններից յեկած հյուրերը: Ժողովրդական մեծ տոն եր: Թնդում  
եր կայառու մանուկների կենսուրախ յերգը, ութմիկ ու թեթև դառ-  
նում եր աղջիկների ուրախ շուրջպարը:

Չորսրբ դային բաց արեց ծորակը: Վոսկե-աղբյուրի ջուրը  
խոշորով թափվեց ծորակի միջից՝ սկզբում գորշ գույնով, իսկ հետո



սկսեց պարզվել, ցայտելով իր աղամանդանման բյուրեղները: Ծե-  
րունի Հակոբը, վոր քսան տարի շարունակ ամեն որ կուժն ուսին բարձ-  
րացել եր մինչև Վոսիկե-աղբյուր՝ ջուր բերելու, այժմ նայում եր  
ծորակից հորդոդ նույն ջրին և գոհունակության բառեր եր մրմնջում  
իր սպիտակաթել բեղերի տակ: Նա առաջինը բաժակը լցրեց ջրով ու  
ախորժակով խմելով՝ բացակասչեց:

— Ծնորհակալություն մեր կառավարութեանը:

Հետո մյուսներն ել խմեցին և ասացին գոհունակության իրենց  
պարզ խոսքերը: Սիրո, յերախտագիտութեան այդ խոսքերն ամենից  
առաջ ուղղված եյին մարդկութեան մեծ բարեկամին, ուսուցչին ու  
առաջնորդին, վորի անունն ինչպես դրոշ ծածանվում ե սոցիալիզմի  
անառիկ բերդի վրա և նոր հերոսութեանների, սխրագործութեանների  
յե մղում խորհրդային հայրենիքի զավակներին:

\* \*

Առններից իրիկուն իջավ և իրիկնային մի քամի: Քամին լեռ-  
ների ու ձորերի մեջ տարածում եր կոլտնտեսային յերջանիկ գյուղի  
զվարթ աղմուկը, և անտառը խշշալով արձագանք եր տալիս: Ծերունի  
Հակոբը սուռն գնաց, վերցրեց թուղթ ու թանաք և գրեց իր հուշատե-  
րում. «Վոսիկե-աղբյուրի ջուրը գյուղ հասավ: Ամեն մարդ, վոր խմի  
այդ ջրից, պետք ե անի-բերան շնորհակալություն ասի մեր կառա-  
վարութեանը: Յեվ իմ խելքով՝ եդ աղբյուրի անունը պետք ե դնել  
«Ծնորհակալութեան աղբյուր»...»

### 5. ՄԵԿԸ—ՅԵՐԵՍՈՒՆ ԴԻՎԵՐՍՍՆՏՆԵՐԻ ԴԵՄ

Ոգոտառի 7-ին ԽՍՀ Միութեան Կենտրոնական Նախագահու-  
թյան նիստում Կենտրոնական Նախագահ Մ. Ի. Կալինինը կարմիր  
Դրոշի շքանշան հանձնեց կոմյերիտական-սահմանապահ Իվան Տիտո-  
նովիչ Տրուենովին: Կոմյերիտական Տրուենովն այդ բարձր պարգևն  
ստացավ իր բացառիկ արիութեան և սահմանադրութեան և իր պարտքի  
բարձր գիտակցութեան համար, վոր հանդես եր բերել սույն թվի փե-  
տրովարի 7-ին մեր հայրենիքի պետական սահմանները պաշտպանե-  
լիս:

Իվան Տրուենովը Ղազախական ԽՍՀ Հանրապետութեան Բել-Աղա-  
ջի շրջանի Դիմիտրովկա ավանի բնակիչ ե: 8 տարեկան հասակում  
նա մտել ե գյուղական դպրոցը, բայց ստիպված ե յեղել ուսումը  
թողնել, վորովհետև մեծ բնտանիքով ծանրաբեռնված նրահայրն ապ-  
րուստի անհրաժեշտ միջոցներ չեր կարող հայթայթել: Սևագործ բան-  
վոր՝ Բել-Աղաջի յերկաթուղային կայարանում, քար ջարդող, հաշ-

վառու, գործավար, բեկական քարահանքերում կրպակի վարիչ, Նովո-  
Պոկրովկա ավանի մեծ մանկատան պահեստի վարիչ—անա Իվան Տրու-  
ենովի ուղին՝ մինչև կարմիր Բանակ մտնելը:

Արդեն յերկու տարի յե, ինչ Տրուենովը պահպանում եր խորհրդ-  
դային սահմանները: Իր անբասիր ծառայութեան համար, Խորհրդա-  
յին Միութեան սահմանները խախտողներին—մոլի լրտեսներին և  
մաքսանենգներին շարունակ բռնելու համար, զորամասի հրամանա-  
տարությունը վեց անգամ հրամանով շնորհակալություն և հայտնել  
ընկ: Տրուենովին: Իվան Տրուենովը, վորպես պատասխան Տուխաչևի-  
կու, Յակիրի և մյուս Փաշիստական լրտեսների ստոր զավաճանու-  
թյան, ոսպորտ ներկայացրեց, վոր ինքը ցանկանում ե մինչև կյան-  
քի վերջը մնալ սահմանազլխի վրա:

\* \*

Տրուենովը «ՏՄՍՍ»-ի աշխատակցի հետ ունեցած իր զրույցի ժա-  
մանակ պատմեց իր այն հերոսական գործը, վորը նշվեց կառավա-  
րութեան բարձր պարգևով:

— Փետրվարի մի մուլթ գիշեր եր,—ասում ե Տրուենովը,—յերբ  
սահմանապահ մարտիկներ Ստեղենկոյից, Ջուկանովից և ինձնից  
բաղկացած մեր վերակարգը դուրս յեկավ ուղեկալից: «Դետքի կար-  
գով անցնել սահմանագծի յերկարութեամբ, իսկ հետո դիտումներ  
կատարել բարձրութեանից»—աչսպիսի հրաման եյինք ստացել մենք  
ուղեկալի պետ լեյտենանտ Ալեքսինից:

Հեղեղից վրդողված լեռնային նեղ կամաններով շրջում եյինք մեր  
սահմանամասում: Շուրջը լուրթյուն եր տիրում: Տեղավորվելով, մենք  
սկսեցինք դիտել: Յեա պառկել եյի սահմանանիշի մոտ, իմ կողքին՝  
ընկեր Ստեղենկոն, նրանից վոչ հեռու Ջուկանովը: Ավզանստանի  
սահմանն այնպես եր յերևում, վոր կարծես մեր բոսմ լիներ: Արդեն  
6-րդ ժամն եր, վոր մենք վերակարգումն եյինք, յերբ սահմանի  
մյուս կողմի հարևան բլրից յերևաց ձիավորների զինված խումբ:  
Դա թշնամին եր, վորը թվով տասն անգամ մեզնից ավելի յեր: Մեզ  
նկատելով, սահմանազանցների ջոկատը բաժանվեց յերեք խմբի և  
շուրջանց կատարեց: Մեր գլխավերևը սուլեցին գնդակները, բայց  
մենք դեռ լուրթյուն եյինք պահպանում:

Յեա, վորպես վերակարգի ավագ, արագորեն կողմնորոշվում եմ  
ստեղծված իրադրութեան մեջ և հրաման եմ տալիս: Ստեղենկոն ինձ  
հետ միասին հեռուում ե թշնամուն, իսկ Ջուկանովը տանում, թաքց-  
նում ե ձիերին, վորից հետո նույնպես հեռավում ե հակառակորդին:  
Այդ ժամանակ աջ կողմի բլրից յերևացին վեց բանդիտներանց նպա-



տակը պարզ եր՝ անցնել մեր թիկունքը և բռնել մեզ: Մյուս յերկու-  
կողմից, սահմանադաշնակները, առանց կանգ առնելու, կրակում ելին  
մեր վերակարգի վրա:

«Բուրքին կենդանի չես բռնի»,— մտածեցի յես: Մնում եր մի  
բան՝ վոչնչացնել: Բանդիտներին յերեք խումբն ել արդեն վտաք ելին  
դրել խորհրդային հողի վրա: Յես, Ստեղենկոյի հետ միասին, գնդակ-  
գնդակի հետևից արձակելով, Ջուկանովին հրամայեցի նունակ նետել  
խմբի վրա՝ աջ թևից:

Վիրավորներին աղաղակները խելովեցին նունակի խլացուցիչ  
պայթյունի մեջ: Կենդանի մնացածներին կարծես քամին տարավ  
ժայռի վրայից: Բայց ձախից և առաջից կանգնած եր թշնամին, վորն  
ուժեղ կերպով կրակում եր մեզ վրա: Ջուկանովը մեզ ոգնության  
շտապեց և այդ վայրկյանին վիրավորվեց աջ վոտքից:

Հրաձգությունն ուժեղացավ, թշնամին առաջ եր շարժվում, սեղ-  
մելով ողակը: Ստեղենկոն, ավելի հարմար դիրք բռնելու մտադրու-  
թյամբ, մի քիչ բարձրացավ, բայց հենց տեղն ու տեղն ընկավ հա-  
ռաչանքով: Նա սպանվեց:

— Վազիր ոգնություն բերելու, յես նրանց այտեղ կպահեմ—  
բղավեցի յես վիրավոր Ջուկանովին: «Միայն թե նրան չսպանեն...»,—  
անցավ մտքովս, յերբ ձիապանը թլացավ դեպի ուղեկար:

Մենակ իմ դեմ կանգնած եր 30 բասմաչներին բողբոջած ամ-  
բողջ բանդան: Նրանցից քսանչորսը հրացան ունեյին: Մի միտք եր  
կրծում ուղեղս՝ «Ինչպես ել լինի դիմանալ, մինչև ոգնություն հասնելը»:  
Յես գիտեյի, վոր ոգնություն կգա յերկու ժամից վոչ շուտ: Պետք եր  
խնայել փամփուռները և նունակները: Բարերից թագստոց շինելով  
յես բանդիտներին հարյուր մետր և ավելի մոտ եյի թողնում: Յեմ  
միայն այն ժամանակ, լավ նշան բռնելուց հետո, իջեցնում եյի  
շնիկը:

Բասմաչներն ինձ շրջապատեցին արդեն յերեք կողմից: Նրանցից  
հինգը սողացին ուղղակի դեպի ինձ, բայց յես չեյի կրակում, և բա-  
մաչները կարծեցին, թե մեռած եմ: Բայց յերբ բանդիտներին մի-  
այն տառը քայլ մնաց անցնելու, յես նրանց համար անակնկալ կեր-  
պով կանգնեցի և նունակ նետեցի: Նունակի պայթյունը լսեց լիտե-  
նանա Ալեքսինը, վորը շրջում եր հարևան սահմանամասող:

Յերկու ժամ շարունակ յես կովում եյի ամբողջ բանդայի դեմ:  
Յերբ ոգնություն հասավ, յես կրակում եյի արդեն վերջին փամփուռա-  
ները: Բասմաչներին թանգ նստեց մեր ջոկատի վրա հարձակվելը:  
Յես սպանել եյի 8 և վիրավորել եյի 5 հոգու: Վիրավորները հետ սո-  
ղացին կամ նրանց տարան սահմանագծից հեռու: Բանդիտները վոր-  
ձեցին շարունակել իրենց հարձակումը, բայց այժմ արդեն մենք

չորս ջախջախիչ կրակով դիմավորեցինք նրանց և շուտով ամբողջ  
բանդան վոչնչացվեց: Ինձ հետ միասին կռիվն ավարտեցին լիտե-  
նանա Ալեքսինը, մարտիկներ Գորոգինեցը և Ջուկանովը:

Մենք ազնվորեն կատարեցինք մեր պարտքը յերկրի հանդեպ,  
կուսակցության և կառավարության հանդեպ, մեծ, հարազատ Ստա-  
լինի հանդեպ, վորի հոգատարությունը և ուշադրությունն ամեն ժամ  
ու ամեն բոլոր զգում ենք մենք հեռավոր սահմանի ուղեկալում: Կա-  
ռավարությունը բարձր պարզեցով՝ Կարմիր Իրոշի շքանշանով նշեց  
իմ գործը: Ջուկանովը պարզևատրվեց վոսկյա ժամացույցով:

Դժվար և արտահայտել այն հուզմունքն ու բերկրանքը, վորով  
լի յեմ այժմ յես: Փետրվարի 7-ին յես այնքան չեյի հուզվել, ինչպես  
եՄՍ Միության Կենտգործկոմի Նախագահության ոգոստոսի 7-ի  
նիստին, ստանալով Միխայիլ Իվանովիչ Կալինինից Կարմիր Իրոշի  
շքանշանը:

Այդ բարձր պարգևի համար յես պարտական եմ միայն կու-  
սակցությանը, կառավարությանը և կոմյերիտմիությանը, վորոնք  
դատարարակել են ինձ, պարտական եմ և ժողովուրդների առաջնորդ  
ընկեր Ստալինին, վորի անունը կրում ե իր քրտում յուրաքանչյուր  
խորհրդային սահմանապահ, մեր հայրենիքի յուրաքանչյուր խորհրդային  
քաղաքացի: Թշնամին անպատիժ չի անցնի մեր սահմաններից: Մենք  
արթուն կերպով պահպանում ենք մեր քիրելի հայրենիքի քրազան  
սահմանները: Այդ սահմաններն ստալինյան ամուր կողպեքի տակ են:

## 6. ԱՏԱԼԻՆՑԱՆ ՅԵՐՁԱՆԻԿ ՍԵՐՈՒՆԴԸ

Ազատ ու հրճվալից ե ապրում խորհրդային յերիտասարդությունը՝  
աշխարհիս ամենայն շնորհի յերիտասարդ սերունդը: Նա չգիտե, թե  
ինչ բան ե գործադրության, աղքատության, սովի, իրավազրկու-  
թյան ու Ֆաշիստական տեռորի սարսափը:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Հեղափոխության նվաճում-  
ները, վորոնք զրված են Ստալինյան Սահմանադրության մեջ, խոր-  
հրդային յերիտասարդությանը, ինչպես և ամբողջ խորհրդային ժողո-  
վրդին տվին այնպիսի իրավունքներ, վորոնց մասին միայն յերա-  
զում, վորոնց համար արտասահմանյան յերկրների աշխատավոր յե-  
րիտասարդությունն արյունալի մարտի յե գնում կապիտալիզմի դեմ:

Մեր յերիտասարդությունը չգիտե ստրկական աշխատանք, չգիտե,  
թե ինչ բան ե կապիտալիստի ու կալվածատիրոջ համար կատարվող  
աշխատանքը: Նա ունի աշխատանքի յերաժխտված իրավունք: Շրջա-  
պատված ստալինյան մեծ հոգատարությամբ ու սիրով՝ մեր յերկրի  
յուրաքանչյուր ուսանի, յուրաքանչյուր ազնիվ իր ամբողջ յերիտա-



աարդ խանդավառությունը, իր ամբողջ յետուն նախաձեռնությունը նվիրում է սոցիալիստական հայրենիքի ու խորհրդային ժողովրդի բարորությանը:

Խորհրդային յերիտասարգությունը համարձակորեն ու համառորեն տիրապետում է տեխնիկային և ընթանում է այն պանծալի շարժման առաջին շարքերում, վորին նախաձեռնությունը պատկանում է յերիտասարգ հանքափոր Ալեքսեյ Ստախանովին: Պյոտր Կրիվոնոսը, Դուսյա Վլյնոզերադովան, Մարիա Դեմչենկոն,<sup>3</sup> Պաշա Անգելինան և շատ ուրիշ ստախանովականներ, սոցիալիստական աշխատանքի այդ հիանալի վարպետները, դաստիարակված են լենինյան կոմյերիտմիության կողմից:

ԽՍՀՄ-ն միակ յերկիրն է աշխարհում, վորտեղ յերիտասարգությունը նյութապես ապահովված է: Խորհրդային յերիտասարգությունը չգիտե գործազրկությունը: Տիրապետելով տեխնիկային, բարձրացնելով իր վորակավորումն ու աշխատանքի արտադրողականությունը՝ խորհրդային յերիտասարգությունն անընդհատ բարձրացնում է իր աշխատավարձը: Չորս տարվա ընթացքում, 1931 թվականի հունվարից մինչև 1935 թվականի դեկտեմբեր ամիսը, յերիտասարգության աշխատավարձն աճել է 340 տոկոսով: Ստախանովյան շարժման զարգացման յերկու տարիներն իրենց հետ բերին յերիտասարգության աշխատավարձի հետագա աճը, նրա կուլտուրական-կենցաղային մակարդակի վիթխարի բարձրացումը:

Խորհրդային յերիտասարգությունն ակտիվորեն մասնակցում է յերկրի ամբողջ քաղաքական կյանքին: Խորհրդային Միությունը միակ յերկիրն է աշխարհում, վորտեղ յերիտասարգությունը ներգրավվում է պետության կառավարման մեջ և ներգրավվում է լայնորեն: Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Հեղափոխությունը յերիտասարգությանն արդեն 18 տարեկան հասակից տվեց պետության կառավարման բոլոր որգաններում քննելու և քննվելու իրավունք:

Խորհրդային Միության յերիտասարգ սերունդն ունի իր քաղաքական կազմակերպությունը՝ բազմամիլիոն լենինյան կոմյերիտմիությունը: Նա ունի հարյուրավոր կուլտուրական ու սպորտային կազմակերպություններ, ունի իր մամուլը հակայական տիրաժող, իր հրատարակչությունները և այլն:

Լենինյան կոմյերիտմիության ուժն ու հզորությունը կայանում է բոլշևիկյան կուսակցության հետ նրա ունեցած որգանական կապի մեջ, այն բանի մեջ, վոր նրա ամբողջ գործունեյությունն ընթանում է կուսակցության ղեկավարությամբ:

Սուրամի թունելից հետո մեր վագոնը ներս մտավ մի կույր աշուղ, թափառալիկ մի գուռան, յիրկար սազը ուսից կախ, ինչպես կապարձը Ռուսթավելու ասպետների ուսից:

Աշուղին առաջնորդում եր մի պատանի: Իսկույն տեղ տվին աշուղին, նստեց, սազը հանեց պատյանից, լարեց և սկսեց նվագել Յերգից ու նվագեց սիրո յերգեր, վշտի ու կարոտի յերգեր:

Ապա նվագեց մի յերգ Վրաստանին ձոնված, վոր ինքն եր հեղինակել: Յերգեց խանդով, ավյունով, կրակով:

Իմ խնդիրքի վրա ուղեկիցներեցս մեկը թարգմանեց գուռանի յերգը:

— «Յեռ շատ դժբախտ եմ, վոր չեմ կարող տեսնել քո չքնաղ դեմքը, իմ մայր Սաքարթվելո:

Ասում են՝ քո յերկինքն այնքան կապույտ է, ինչքան կապույտ են փիրուզե լճակները մեր բարձր սարերի:

Աշուն է հիմա. քո անտառները վոսկի յեն հագել և վոսկե փուլերով ծածկել են բոլոր կածաններդ:

Յեկ քո յեղնիկները վագում են վոսկեփուլ կածանների վրայով, իմ գեղեցիկ Սաքարթվելո:

Իմ քաղցր Սաքարթվելո, յեռ լոում եմ քո արտի հրճվանքի ձայները:

Յեռ լոում եմ քո յերջանկության ծիծաղը, քո վորդիների ուրախ յերգերը:

Ազատարար Լինինը խորտակել է ցարի շղթաները, վոր կապել է յին քո վոտներն ու ձեռքերը:

Լենինը քանդել է ցարի մութ բանտերը, ազատվել են քո ըստրուկ վորդիները, իմ տանջված Սաքարթվելո:

Կանաչել ես ու ծաղկել ես հիմա, իմ ազատ Սաքարթվելո, այլևս չեմ լոում իմ մանկության որերում լսած վշտի ու գերության տխուր հեձեձանքները:

Քո այգիները ցնծում են ուրախությամբ հիմա, քո կարասները ցված են գինով հիմա, քո փեթակներն անուշ մեղրով, իմ բախտավոր Սաքարթվելո:

Յերիտասարգ կտրիճ ղինվոր ես դարձել հիմա, իմ հին Սաքարթվելո, հրեղեն ձի յեռ նստել, հրեղեն թուր ես կապել մեջքիդ և կարմիր դրոշակ ես բարձրացրել հիմա:

Այլևս ո՞վ կարող է քո հացն ու ազատությունը խլել, իմ քաջ Սաքարթվելո...»:



Հրաշալի յե Դնեպրը հանդարտ յեղանակին, յերբ ազատ ու սա-  
 հուն սլացնում ե անտառների ու լեռների արանքով իր լիառատ ջրերը:  
 Վնչ կըշնջա, վնչ ել կվորոտա. նայում ես՝ չեո իմանում գնում  
 ե, թե՛ կանգնած ե նրա վեհ լայնությունը. թվում ե, թե նա ամ-  
 բողջովին ձուլված ե ապակուց, և կապույտ հայելյա ճամփայի նման՝  
 իր անսահման լայնությամբ ու անծայր յերկարությամբ հոսում ե ու  
 գալարվում կանաչ ավերին: Ախորժելի յե այն ժամանակ ջերմ արե-  
 քակին՝ բարձրից նայել ու խորատուզել իր ճառագայթներն ապակե  
 ջրերի սառնության մեջ, և առափնյա անտառներին՝ անդրադառնալ  
 ջրերում: Դալարագանգուր անտառներ, դաշտային ծաղիկներ ի հեռ  
 միասին՝ նրանք խմբվում են ջրերի մոտ ու խոնարհված նայում  
 նրանց մեջ, բայց չեն կշտանում իրենց պայծառ տեսքից, վորին  
 բարե են տալիս, ժպտում՝ շարժելով իրենց ճյուղերը:

Իսկ Դնեպրի մեջտեղին նրանք չեն համարձակվի նայել վոր  
 վոր, բացի արեգակից ու կապույտ յերկնքից, չի նայում նրա մեջ-  
 հագարից մեկ թռչուն ե հասնում Դնեպրի մեջտեղը:

Փառահեղ գետ. նրա հավասարը չկա աշխարհում:  
 Հրաշալի յե Դնեպրը և տաք ամառային գիշերը, յերբ ամեն  
 ինչ նիրհում ե՝ և՛ մարդ, և՛ գազան, և՛ թռչուն:

Աստղերը վառվում են ու փայլում աշխարհի վրա և բոլորն ել  
 միանգամից անդրադառնում Դնեպրի մեջ: Նրանց բոլորին Դնեպրը  
 պահում ե իր մթին գոգում, վոր մեկն ել չի փախչիլ նրանից, թե  
 վոր չհանգչի յերկնքում. սե անտառը՝ ծածկված քնած ագռավներով,  
 և հնադարյան քայքայված լեռները խոնարհվելով՝ ճգնում են ծած-  
 կել նրան իրենց յերկայն աստղերով:

Չուր. աշխարհումս չկա մի բան, վոր կարողանա ծածկել Դը-  
 նեպրը:

Կապույտ-կապույտ ընթանում ե նա սահուն հոսանքով և գիշերը՝  
 ինչպես և ցերեկը յերևում ե հեռվից, ինչքան կարող ե կտրել մարդ-  
 կային աչքը: Գնքշանալով ու լեղմվելով ավերին գիշերային ցըր-  
 տից, արձակում ե իր վրա արծաթե շիթ, և այն հանկարծ շողում ե,  
 ինչպես Դամասկոսի թուր, իսկ ինքը՝ կապույտ՝ քնում ե նորից: Այն  
 ժամանակ ել հրաշալի յե Դնեպրը, և չկա աշխարհում նրա նմանը:

Իսկ յերբ գեպի յերկինք են բարձրանում լեռների նման կա-  
 պույտ ամպերը, սե անտառը տատանվում ե հիմնովին, կաղնիները  
 ճայթում են, և կայծակը կտրտվելով ամպերի միջին, միանգամից  
 փայլատակում ե արար աշխարհը, — սարսափելի յե այն ժամանակ  
 Դնեպրը: Ջրի բուրները վորոտում են զարնվելով լեռներին, և ծափ  
 ու հառաչով հեռ են վազում, լալիս ու խեղդվում հեռվում:

Այդպես ել կոծում ե, վորում կազակի պոսով մայրն իր վոր-  
 գուն զորքանակ ճանապարհելիս. վորդին ուրախ ու գվարթ գնում  
 ե սե նժույզը հեծած, ձեռքը դրած կունատակին ու գլխարկը շախով  
 կտրած, իսկ մայրը հառաչելով վազում ե նրա հետևից, բռնում ձիու  
 առաջնդակը, ձգձգում սանձը, կտորատում ձեռքերն ու խեղդվում  
 ջերմ արցունքներից:

9. ՃՆՃՂՈՒԿ

Վորսից տուն վերադառնալիս՝ յես անցնում եյի այդու ծառու-  
 զիններից մեկով: Իմ առաջից վազում եր շունը:

Հանկարծ նա վորը կախ գցեց և սկսեց գաղտագողի քայլերով  
 առաջ գնալ, ասես, աչքին վորս եր ընկել:

Յես նայեցի մինչև ծառուղու ծայրը և քիչ հեռու, ճանապարհի  
 վրա տեսա մի ճնճղուկի ձագ, վորի կտցի չորս կողմը դեռ դեղնա-  
 վուն եր և գլուխը ծածկված եր աղվամագով:

Նա վայր եր ընկել բնից (քամին սաստիկ որորում եր ծառու-  
 րու յերկու կողմերում շարված թխտենիները) և իր նորաբույս թե-  
 վիկներն անգոր փռած՝ անշարժ նստած եր գետնին:

Շունս կամաց-կամաց մոտենում եր նրան, յերբ հանկարծ մո-  
 տիկ ծառից կուրծքը սե մի պոսով ճնճղուկ վայր նետվելով՝ քարի  
 պես ընկավ ղան հենց գնչի առաջ:

Փետուրները քրքրած, այլանդակ ու կրակ կտրած — նա հուսահատ  
 և աղիողորմ ճիչ արձակելով՝ մի քանի անգամ թռչչք գործեց դեպի  
 շան բաց ու որատամ բերանը:

Ապա նետվեց դեպի իր ձագուկը, վոր փրկե նրան. նա թեվերով  
 պատասպարեց նրան... իսկ այդ բույեյին նրա ամբողջ փոքրիկ մար-  
 մինն ար ու սարսափից դողում եր. նրա ձայնը բրտացել, խրժվել եր.  
 Նա ուժից ընկնում, նրա շունչը կտրվում եր. նա իրեն զոհում եր:

Ի՞նչ անագին հրեշ պետք ե յերևար նրա աչքին իմ շունը, ու-  
 կայն նա չգիմտացավ, չկարողացավ նստած մնալ բարձր, անվտանգ  
 ճյուղի վրա... Ուժը, նրա կամքից ավելի զորավոր ուժը, վայր նե-  
 տեց նրան այնտեղից:

Տրեզորս կանգ առավ ու սկսեց հեռ-հեռ քաշվել... յերեխ, նա  
 ել խոտովանեց այդ ուժը:

Յես շտապեցի հեռ կանչել շիթոված շանս և խորին ակնածու-  
 թյամբ հեռացա:

Այո՛, մի՛ ծիծաղեք: Յես այդ բույեյին խորին ակնածություն  
 եյի զգում գեպի այդ փոքրիկ հերոս թռչունը, գեպի նրա սիրառատ  
 անձնագործությունը:



XX. ԴԺՎԱՐ ԳՐՎՈՂ ԲԱՌԵՐԻ ՀԱՏԸՆՏԻՐ

Ա  
 Աբրահամ  
 ագի (պոչ)  
 Աշամ  
 ալյուր  
 ախորժակ  
 ախտ (հիվանդու-  
 թյուն)  
 ակնթարթ  
 ակնարույժ  
 աճուկի  
 աղբ  
 աղյուս  
 աղյուսակ  
 աղտ (կեղտ)  
 աճյուն  
 աճուն (աճող)  
 ամբաստանել  
 ամբարիշտ  
 ամպ  
 ամպակույտ  
 ամփոփել  
 ամբար  
 ամբիոն  
 ամբարտավան  
 ամբասիր (անբասիր)  
 ամբողջ  
 ամպրոպ  
 ամպամած  
 ամբարտակ  
 ամբոխ  
 Ամբակում  
 ամբաստանել  
 այգ  
 այգեկութ  
 այգտեղ  
 այտ  
 ալյուր (ալյ տեղ)  
 ալծեղջյուր  
 անագ  
 անբան  
 անբավ  
 անգամ  
 անդորր

անդորրագիր  
 Ադրիաս  
 անընդհատ  
 անընկճելի  
 անհաջող  
 անհողողող  
 աննկուն  
 անըբի  
 անասմբլ  
 աշխարհաբար  
 աշխորհուրդ  
 աշկոռպ  
 ապտամբ  
 ապաթարց  
 առնչություն  
 առաձգական  
 առնական  
 առաջնորդ  
 առընթեր  
 առյուծ  
 առնետ  
 առնել  
 Ասիա (աշխարհամաս)  
 Ասյա (անուն)  
 Ավագ  
 ավանդ  
 ավանտյուրիստ (ար-  
 կածախնդիր)  
 ատաղձ  
 արբանյակ  
 արդուկ  
 արծաթ  
 արծիվ  
 արյունարբու  
 արյունուղտ (արյու-  
 նարբու)  
 Արուսյակ  
 արամբի  
 արջ  
 արջառ  
 արջառպ  
 արյունք  
 արթուն  
 արփի

արքա  
 արյուն  
 Բ  
 Բարդին  
 բաշխել  
 բախտ  
 բողբոջ  
 բանտ  
 բարբառ  
 բարբարոս  
 բարդ  
 բարտի  
 բացթյա  
 բաղարջ  
 բամբասել  
 բամբ  
 բամբիռ  
 բամբուռ  
 բամբակ  
 բարձրաբերձ  
 բերդ  
 բերրի  
 բեղուն  
 բյուջե  
 բյուր  
 բյուրեղ  
 բողկ  
 բուրբ  
 բորբոս  
 բորբոսնել  
 բորբոքել  
 բուրաստան  
 բուրդ  
 բուրժու  
 բրդիլ  
 բրոշյուր  
 բրուս  
 Գ  
 Գարբին  
 գահ  
 գահընկեց  
 գզալ  
 գզակ  
 գեղձ  
 Գեղորդ (Գեորդ)  
 գյուտ  
 գյուտարար  
 գողնոց  
 գործուղել  
 գործուղում  
 գոչյուն  
 գործունեյություն  
 գույժ  
 Գույնզգույն  
 գունդ  
 գունագեղ  
 գրաբար  
 գրաքննիչ  
 Գրիգոր  
 գրգիռ  
 Դ  
 Դադար  
 Դագանակ  
 Դանիել  
 Դավիթ  
 Դարբին  
 Դարձ  
 Դամբարան  
 Դամբ  
 Դադձ  
 Դամբուլ  
 Դղում  
 Դղրդյուն  
 Դյութել  
 Դյուրաբորբոք  
 Դյուրագրգիռ  
 Դյուրբունելի  
 Դյուրին  
 Դոփյուն  
 Դողող  
 Դրդել

Դրվագ  
 Ե  
 Եվոյլյուցիա  
 Եքսկուրսիա  
 Եքսպեդիտոր  
 Եքսպեկիցիա  
 Եքսպերտ  
 Եքստերն  
 Զ  
 Զայրույթ  
 Զարգ  
 Զարթնել  
 Զարկ  
 Զամբյուղ  
 Զարկերակ  
 Զգույժ  
 Զգուշոյ  
 Զգուշություն  
 Զեղչ  
 Զերձ  
 Զեփյուռ  
 Զիջել  
 Զղջալ  
 Զմբուխտ  
 Զույգ  
 Զրկել  
 Զրկանք  
 Ը  
 Ըղձալ  
 Ըմբիշ  
 Ըմբամարտ  
 Ըմբունել  
 Ըմպել  
 Ըմբոստ  
 Ընթացք  
 Ընթեանել  
 Ընթեցանություն  
 Ընթերցարան  
 Ընթացիկ

Ընթացավարտ  
 Ընդունել  
 Ընդգծել  
 Ընդունակ  
 Ընդմիշտ  
 Ընդունարան  
 Ընդարձակ  
 Ընդամենը  
 Ընդհանուր  
 Ընդառաջ  
 Ընդամանալ  
 Ընդդիմ  
 Ընդդիմադիր  
 Ընձառյուծ  
 Ընձեռել  
 Ընձյուղ  
 Ընկույզ  
 Ընկուղենի  
 Ընտրություն  
 Ըտամենայնի  
 Ըտայնմ  
 Թ  
 Թամբ  
 Թամբել  
 Թագեւոս (Թատեոս)  
 Թաթոս  
 Թանկագին (Թանգա-  
 գին)  
 Թանկ (Թանգ)  
 Թաք կենալ  
 Թաքուն  
 Թաքուտ  
 Թարթել  
 Թանձր  
 Թանձրամած  
 Թաթառ (պտուտակա-  
 հողմ)  
 Թարշամել (Թառամել)  
 Թատրոն  
 Թեորիմ  
 Թերթ  
 Թիավարել







մամուռ  
մանկաբարձ (ուհի)  
մանյակ  
մալարիա  
մակաբույժ  
մակընթացություն  
մահակ  
մահիձ  
մաղձ  
մայուն  
մառախլապատ  
մանկավարժ  
մառախուղ  
մառտաբ  
մատերիալ  
մարագ  
մարդ  
մարջան  
մարտկոց  
մաքս  
մաքսանենդ  
մատամբ  
մասսա  
Մաթեմատիկա (Մատթեոս)  
Մարգարիտ  
Մարիամ  
մարմար  
մարտ  
մարտունակ  
մզլիկ  
մեկ  
մեղ  
մեկմեկու  
մեկամաղձոտ  
մեղակից  
մենաշնորհ  
մեջընդմեջ  
մերթ  
մերթընդմերթ  
մերձ  
մերձավոր  
մեծարգո  
մեղկ (թուլամորթ  
զգայասեր)  
մեղք  
մեն-մենակ  
Մեսրոբ

մթազնեկ  
մխրդ  
միջորեյակեն  
մխիա  
մխակերպ  
միանեծան  
միամիտ  
միայնակյաց (մենակյաց)  
միատարր  
միկնույն  
միմիայն  
միություն  
միակ  
միանամուռ  
միլիցիա  
միաձույլ  
միայն  
միանդամայն  
միապաղաղ  
միգապատ  
միլիարդ  
միլիոն  
միմյանց  
միանվագ  
միավոր  
մյուս  
մորթել  
մորթազերծ  
մուգ  
մուկ  
մուրհակ  
մրրիկ  
մրափել  
մրցանակ  
մրջյուն  
մրցել  
Յ  
յեզերք  
յել և մուս  
յեղեղ (յեղեղն)  
յեղինջ  
յեղյամ  
յեղջերու

յենթադրել  
յեռակի  
յեռանդ  
յեռյակ  
յետ  
յերախտիք  
յերզակից  
յերդում  
յերեսորբիչ  
յերթևեկ  
յերիվար  
յելեկջ  
յեղբայր  
յեղեռն  
յեղունգ  
յեղյոլոր  
յեղչերու  
յենթամնա  
յեռամյակ  
յեռանկյունի  
յետին  
յետալարձ  
յերդիկ  
յերզմնաղանց  
յերեսուն  
յերթ  
յերինջ  
յերիտասարդ  
յերկբարբառ  
յերկընտրանք  
յերկյուղ  
յերջանիկ  
յերփներանդ  
Յերվանդ  
յերկդիմի  
յերկմիտ  
յերկփեղկ  
յերանգ  
յերրորդ  
Յենոք  
յոթ (յոթը)  
յոթանասուն

ն  
նաև  
նախահարձակ  
նախերզանք  
նախընթաց  
նախընտրել  
նախկին  
նամանավանդ  
նախշուն  
նավաբեկություն  
նավորդ  
նարինջ  
ներքին  
նետաձիգ  
նենդ  
ներբան  
ներգոյական  
ներհակ  
ներքև  
ներքուստ  
նեզր  
ներբող  
ներկա  
նժույգ  
նիրհ  
նինջ  
նյութ  
նյարդ  
ննջել  
նորոգել  
նորոգ  
նուրբ  
նվագ  
նրբին  
Ն  
շարաթ  
շաղախ  
շահագորգուել  
շահախնդիր  
շաղակրատ  
շտնթարգել

շառավիղ  
շաղգամ  
շաղանակ  
շահանակագույն  
շահույթ  
շամփուր  
շառագունել  
շարաղբություն  
շեկ  
շեղջ  
շեղբ  
շղարշ  
շնորհալի  
շնչափող  
շնչահեղձ  
շնչարգելություն  
շշնջալ  
շշնջյուն  
շշունջ  
շշուկ  
շոգ  
շոգի  
շորթել  
շուք  
շչակ  
շպար  
շոխդ  
շրջել  
շրջան  
շրջգործկում  
շրջաբերական  
շրթունք  
շրջահայաց  
շրջմոլիկ  
շրջագայել  
շփել  
շքեղ  
Ո  
ոաղիս  
որյեկտիվ  
որլիգացիա  
ոգնել

ոգուա  
ոգտավետ  
ոգտակար  
ոգտագործել  
ոդ  
ոդանցք  
ոդաչու  
ոթևան  
ոթյակ  
ոթոց  
ոձ  
ոձիք  
ոձառ  
ոպորտունիստ  
որավարձ  
որակարգ  
որըստորե  
Չ  
չափածո  
չառարկել  
չարձձի  
չափահաս  
չընկձվել  
չղջիկ  
չմուշկ  
չոքել  
չորքոտանի  
չորրորդ  
չքնաղ  
չքնաղագեղ  
չքմեղ  
Պ  
պագշոտ  
պայուսակ  
պաշտոնյություն  
պառկել  
պասսիվ  
պատգամ  
պատգարակ  
պանդուխտ  
պատշաճ



պարթև  
պատշգամբ  
պատռել  
պատրույգ  
պարզե  
պարերգ  
պարլամենա  
պարկ  
պախուրց  
պղտոր  
պորտաբույժ  
պոռթկալ  
պոետ  
պրոպագանդ

Ջ

ջարդել  
ջողատ  
ջոջ  
ջուխտ  
ջրվեժ  
ջրաբաշխ  
ջրահեղձ  
ջրաբբի  
ջրընկեց  
ջրմուղ

Ռ

ռայոն (շրջան)  
ռացիոնալ  
ռեալ  
ռեակցիա  
ռեժիմ  
ռեժիսյոր  
ռեկտոր  
ռեկորդ  
ռենեզատ  
ռետին  
ռեֆերատ  
ռեֆերենդում  
ռեֆորմ  
ռիթմ

ռիթմիկ  
ռնգեղջյուր  
ռումբ

Ս

սակաղին  
սաղարթ  
սայթաքել  
սանդուխք (սանդուղք)  
սանձարձակ  
սարք  
սարդ  
սարսուռ  
Սարգիս  
սառնորակ  
սևորակ  
սեգ  
սեռ  
սեր  
սեթևեթել  
սխտոր  
սխրագործություն  
Սմբատ  
սոսափյուն  
սուգ  
սպառնալ  
սպրդել  
սոնի  
ստահող

ստացական  
ստերջ  
ստորերկրյա  
Ստեփանավան  
Ստեփան  
սրբագրել  
սրբել  
սրբիչ  
սրբնթաց  
սրտաբուխ

Վ

վաթռուն

Վահագն (Վահագ)  
վաղորդյան  
վայրահաջ  
վայրեջք  
վայրիվերո  
վայրկյան  
վախճան  
Վահագան  
վատթար  
վարդ  
Վարդուշ  
Վարդուհի  
Վարդան  
վարձ  
վերաքննել  
վերընտրել  
վերջ  
վերջիվերջո  
վերջակետ  
վողկույզ  
վոստայն  
վորդ  
վորթ (խաղողի)  
վորդ (ձիձու)  
վորջ  
վորոտընդոստ  
վորոտաձայն  
վողբ  
վողջախոհ  
վոստյուն  
վողջույն  
վրնջյուն (խրխիսջ)

Տ

տաղտուկ  
տարեդարձ  
տարր  
տարրական  
տարրալուծել  
տախտակ  
տաղտկալի

տարաբախտ  
տարփանք  
տարերք  
տգետ  
տեղկոմ  
տիեզերք  
Տիգրան  
տուրիտ  
տուփանք  
տվայտանք  
Տրդատ

Բ

Բաֆֆիկ (Ռաֆֆիկ)  
բուպե  
բուպեյական

Ց

ցաքատ (ետոց)  
ցեղակից  
ցնցուղ  
ցնծալ  
ցուցափեղկ  
ցտեռություն

ՈՒ

ուխտ  
ուխտադրուժ  
ուղտ  
ուղտապան  
ուղղագիծ  
ուղղադրություն  
ուղղակի

ուղղանկյուն  
ուղղահայաց  
ուղղաձիգ  
ուղղել  
ուղղախոս  
ուղղամիտ  
ուռկան  
ուսուպիտ  
ուրբաթ  
ուրագ

Փ

փայծաղ  
Փառանձեմ  
փափաղ  
փառք  
փաթեթ  
փարթամ  
փեղկ  
փթթել  
փղձկալ  
փողփողել  
փողկապ  
փորձ  
փութ  
փուտ  
փտախտ  
փրփուր  
փրփրաղեղ

Ք

քառյակ  
քառասուն  
քառորդ

քաղցկեղ  
քաղցած  
քանիերորդ  
քոս  
քերթել  
քերթվածք  
քիմիա  
քինախնդիր (վրեժ-խնդիր)

քուրք  
քուրդ  
քաներորդ  
քվարկել  
քրտինք  
քրքրել  
քրեյական  
քրքիջ  
քրթմնջյուն  
քրթմնջալ

Ֆ

ֆասագ (շենքի ճակատ)  
ֆեոդալ  
ֆելդշեր (բուժակ)  
ֆեդերացիա  
ֆերմա  
ֆելյետոն  
ֆիրմա  
ֆիդիկա  
ֆիդիկական  
ֆոնդ  
ֆրակցիա  
ֆրֆոալ



ՅԵՐԿՈՒ ԽՈՍԲ

I. Ուղղագրութիւնը տղայաճի ժամանակ	4
II. «Ը» ձայնավորի ուղղագրութիւնը	5
«Ը» ձայնավորը բառակերպում	5
«Ը» » բառակերպում	6
«Ը» » բառամիջում	7

ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1. Թե ինչ յեղով—Նար-Դոս	10
2. Չ ա պ ա և—Ֆուրմանով	10
III. Յերկինչուցների ուղղագրութիւնը	11
1) «Յե» յերկինչուցների ուղղագրութիւնը	11
2) յԻա» » »	13
3) «Յա» » »	15
4) «Ույ» » »	16
IV «Յ» ձայնակապի ուղղագրութիւնը	16

ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

(III յեկ IV բաժինների համար)

1. Յեղինկներն անտառում—«Լուսաբեր»-ից	19
2. Մումու—Տուրգենևի	20
3. Պոլիկուշիա—Լ. Տոլստոյ	21
4. Հրդեհ նավթահանքում—Շիրվանզադե	21
V. Բաղաձայնների ուղղագրութիւնը	21
1) «Հ» բաղաձայնի ուղղագրութիւնը	21

ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1. Ըմբոսի մահը—Վ. Փփաղյան	22
2. Սպիտակ քաղաքը—Ս. Չոբյան	23
3. Նախկին բաղրակը—Մինաս Պապյանի գրածից	23
4. Բարեկ Մոսկովա—Իսպանական պիոներներ	24
2) «Ձ» յեկ «Ձ» բաղաձայնների ուղղագրութիւնը	25

ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1. Ա. Ս. Պուշկին—Լուսնաչարսի	26
2. Դուբրովսկի—Ա. Ս. Պուշկին	27
3. Առյուծը, աղվեսը և արջը—ըստ Այդեկցու	28
4. Յեղջերուն—«Լուսաբեր»-ից	29
3) «Ձ» և «Յ» բաղաձայնների ուղղագրութիւնը	29

ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1. Հանցագործի հետապնդումն ինքնաթիռով	31
2. Առյուծի, գայլի և աղվեսի ընկերութիւնը—ըստ Այդեկցու	32
4) «Դ» և «Փ» բաղաձ. ուղղագրութիւնը	33

ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1. Աղգայիններին—Հ. Հակոբյան	38
2. Իմ յերազանքը—Մ. Դեմչենկո	38
3. Բանաստեղծի վարդերը—Ա. Մակոյան	39
4. Թշնամիները—Գարշին	39
5. Մանվան ողակը	40
5) «Դ» և «Փ» բաղաձայն. ուղղագր.	42

ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1. Արտիստը—Շիրվանզադե	44
2. Ճամբարահանները գրողը—Գեվորգյան	45
3. Առյուծն ու մարդը—ըստ Այդեկցու	46
6) «Դ» յեկ «Փ» բաղաձայն. ուղղագր.	47

ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1. Գարունը լեռներում—Վ. Միրաքյան	48
2. Յեկս մի նոր հաղթանակ—Շամես	49
3. Լրտեսը խելագարի դիմակով—«Լեռ». Պրավդա-ից	50
7) «Դ» և «Յ» բաղաձայնների ուղղագր.	51

ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1. Մումու—Տուրգենևի	53
2. Չապակ—Դ. Ֆուրմանով	53
8) «Դ» յեկ «Բ» բաղաձայն. ուղղագր.	54

ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1. Վոյսարի կիթը—Վ. Միրաքյան	60
2. Չապակ—Դ. Ֆուրմանով	61
3. Մայիսը գյուղում—Գ. Պոռյան	61
4. Աքվա (փոխադրութիւն)	62
5. Ծ զ ր ի ք Ը—Հ. Թումանյան	63
9) «Մ» յեկ «Ը» բաղաձ. ուղղագրութիւնը.	63

ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1. Բարբիկազները վրա—Վ. Հյուգո	65
2. Աքվա (փոխադրութիւն)	65
VI. Աձանցների ուղղագրութիւնը	66

ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1. Յերվանը	68
2. Հրդեհ նավթահանքում—Շիրվանզադե	69
VII. Բարդ բառերի ուղղագրութիւնը.	69
VIII. Հարադիր բառերի »	71
IX. Նորագույն հաղապումների »	72



ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

(VII, VIII յեվ IX բաժինների համար)

1. Ունեվոր և յերջանիկ կյանքի ուղին— «Խ. Հ»-ից	74
X. Գոյականների ուղղագրությունը	75

ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1. Ռիոն-գես	79
2. Առատության յեղջյուրից—«Խ. Հ»-ից	79
XI. Ածականների ուղղագրությունը	80

ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1. Լյուդիբրոզսկու հերոսական մահը—«Կ. Չրոնտ»-ից	81
XII. Թվականների ուղղագրությունը	82

ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1. Այսպես էլին մեռնում հերոսները—ել Ռեզիստան և Գ. Չրիդ.	83
2. Իմ աշխատանքը—Ստախանովի ճառից	84
XIII. Դերանունների ուղղագրությունը	86

ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1. Գարուն և—«Խ. Հ»-ից	87
XIV. Հոդերի ուղղագրությունը	88

ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1. Մայիսը գյուղում—Գ. Գոռյան	89
2. Առողջապահական—սանիտարական պատվերներ	90
XV. Բայերի ուղղագրությունը	96

ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1. Դայակ վարյան—Ա. Չեխով	95
2. Անուշ (հատված)—Հ. Թումանյան	96
3. Լինեյի շորան—Վ. Տերյան	96
XVI. Մակրայների ուղղագրությունը	96

ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1. Աքվա (փոխադրություն)	97
2. Արար—Վ. Փափաղյան	98
XVII. Շաղկապների ուղղագրությունը	99

ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1. Չուհակուհիների լճակը—«Խ. Հ»-ից	100
2. Հայրենիքի համար—Յե. Վինոգրադովա	101
XVIII. Ա հ ս ա դ Ր Ո Ւ Ր Յ Ո Ւ Ն	102
Ա) Տրոհության նշաններ	102

Բ) Առողջանության նշաններ	113
Գ) Բացահայտության նշաններ	116

ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1. Նեղ որերից մեկը—Նար-Դոս	123
2. Մումու—Տուրգենևի	124
3. Մուշոկ	125
4. Պիոններական ճամբարում—«Խ. Դ»-ից	128
XIX. Նյութեր սուզողական քիչադրությունների համար.	128
1. Մըրկահավի յերգը—Մ. Գորկի	128
2. Բաղեյի յերգը	129
3. Ըմբոսի մահը—Վ. Փափաղյան	132
4. Վոսկե աղբյուր—«Խ. Հ»-ից	134
5. Մեկը յերեսուն գիվերսանտների դեմ—«Խ. Հ»-ից	136
6. Ստալինյան յերջանիկ սերունդը—«Խ. Հ»-ից	139
7. Վըացի Գուսանի յերգը—Ավ. Իսահակյան	141
8. Դնեպը—Ն. Վ. Գոգոլ	142
9. Ճնճղուկ—Տուրգենևի	143
XX. Դժվար գրվող բառերի հասցևիք	144





Գառ մբազիրներ՝ Ս. Ղաբիրյան, Վ. Որդոյան  
Տեխ. խմբագիր՝ Ի. Վարդանյան  
Մբազրիչներ՝ Վ. Ավագյան, Ն. Մանուկյան  
Կոնսրո սրբագրիչ՝ Յե. Տեղ-Մինասյան



Գլավիխի լիազոր՝ Վ.—1217. Հրատ. № 4942.  
Գառվեր 595. Տիրած 6000.  
Բուղթ 64x92. Տպագր. 10 մամ.  
Մեկ մամ, 43,000 նիշ.  
Հանձնված է արտագրության 22 հունիսի 1939 թ.  
Մտորագրված է տպագրության համար 7 դեկտեմբերի 1939 թ.



« Ազգային գրադարան



NL0240634



4400 2 II. 5. 4.

44. 035

2671

2014

Пособие диктантов  
для неполной средней  
и полной средней школы  
Составил—Ав. Чугурян.  
Гян Арм. ССР, Ереван, 1939 г.